

Լուսաւոր

1982

Գ



ԼԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Մ...ԲԳ

1982

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՊՐՈՖ. ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՓՐՈՖԵՍՈՐ ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պէյրութ

Յարգարժան Փրոֆեսոր,

Ուրախութեամբ տեղեակ դարձանք որ Պէյրութի մէջ յատուկ Յանձնաժողով մը կազմուած է տօնախմբելու համար Ձեր ազգային-մշակութային գործունէութեան յիսնամեակը:

Այս երջանիկ առիթով սրտանց կ'ողջունենք Ձեր ոսկեայ յոբելեանը, ջերմօրէն գնահատելով բազում տարիներու Ձեր վաստակը իբրեւ մշակութային եւ ազգային—հասարակական գործիչ Լիբանանի եւ համայն հայ սփիւռքի տարածքի վրայ:

Սրտանց կ'ողջունենք մանաւանդ Ձեր հայրենանուէր մշտարթուն ոգին որ կը բնորոշէ Ձեր անձնաւորութիւնը, հանդիսանալով գաղափարական մղիչ ուժը տարիներու Ձեր տքնութեան ու անսահանջ աշխատանքին:

Հայրենիք-սփիւռք ոգեղէն կամուրջի աներեր պահպանումը եւ անոր աւելի ու աւելի ամրապնդումը՝ ահա մեր ժամանակներու պատմական հրամայականը, որուն կենսագործման նուիրաբերած էք Դուք Ձեր ամբողջ գիտակցական կեանքը, Ձեր տաղանդը, Ձեր սիրոյ ուժերը:

Ազգային գաղափարական Ձեր պայքարի ճամբուն, Ձեզի ներշնչանքի աղբիւր կը հանդիսանայ նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, գլուխը Հայ Առաքելական Եկեղեցւոյ: Եկեղեցի, ազգ եւ հայրենիք գաղափարները դաւանելով ի-

БИБЛИОТЕКА
Ан... Каук
...Р

բարմէ անբաժան եւ անբաժանելի, մէկը միւսով պատմականօրէն միաձուլուած, մէկը միւսով իմաստաւորուած, մէկը միւսով յաւերժացած:

Արդ, յարգարժան Փրոֆեսոր, Ձեր բեղուն գործունէութեան երկրորդ յիսնամեակի սեմին, Սուրբ Էջմիածնէն եւ Մեր սրտէն Ձեզի կ'առաքենք Մեր օրհնութիւնը, Մեր գնահատանքը, Մեր սէրը եւ Մեր աղօթքը որ Տէրը Ձեզի եւ Ձեր կեանքի բարի հրեշտակ Տիկին Անժելին պարգեւէ կենաց եւս երկար տարիներ, ու մշտանորոգ ուժեր շարունակելու Ձեր ազգային-հայրենասիրական առաքելութիւնը՝ նոյն հաւատքով, նոյն արիութեամբ, նոյն լաւատեսութեամբ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14): Ամէն:

Հայրապետական օրհնութեամբ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15 մարտի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1119



ԵՂԻՎԱՐԴ (ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ)

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԸ

«Այս է մարմին իմ» (Ղուկ. ԻԲ 14—20)

Պասեքի օրուան առաւստը կը բացուէր բացառիկ գեղեցկութեամբ: «Այս տարի», ըսաւ Յիսուս իր աշակերտներուն, «տօնական ընթրիքը տեղի պիտի ունենայ քաղաքին մէջ, ծանօթ բարեկամի մը տունը»: Երբ մութը ինկաւ եւ արծաթեայ փողերը հնչեցին Տաճարին բարձունքէն, յայտնելու սկզբնաւորութիւնը տօնին, աշակերտները, առաջնորդուած իրենց Վարդապետէն, Զիթենեայց լեռնէն Երուսաղէմ իջան: Օրուան սեղանին Յիսուսէն եւ աշակերտներէն վատ ոչ ոք կը մասնակցէր:

Վերնատունը ուր պատրաստուած էր ընթրիքը, զարդարուած էր մետաքսեայ վարագոյրներով, իսկ սեղանը ծանրաբեռնուած՝ սպասներով եւ ուտելիքներով: Անխմոր կլորակ բաղարջներ, դառն խոտեր, համեմներ, եփուած գառը, գոհութեան գինին, որմէ պիտի խմէին բոլորը, շարուած էին սեղանին վրայ: Սենեակին մէկ անկիւնը դարձուած էին լուացումի կոնքն ու շոնիթը: Առաստաղէն կախուած վոյգ մը կանթեղներ, խորհրդաւոր լոյս մը կը սփռէին սեղանին շուրջը:

«Ուզեցի որ առանձին ըլլանք այս իրիկուն: Վերջին Պասեքն է զոր պիտի ընեմ ձեզի հետ: Այս պահուս մենք մինակ չենք սակայն, մեզի հետ են բոլոր արքաները Իսրայէլին: Մեզի հետ՝ մեր նախահայրերն ու մարգարէները, որոնք երկնքի փառքը ընդ հայելեաւ տեսան միայն: Ներկայ են բոլորը այս իրիկուն, ձեզի հետ միասին յուղարկելու Մարդու Որդին, որ տարիներէ ի վեր ձեր մէջ եւ ձեզի հետ ապրեցաւ, ըլլալու նիւթացած խոստումը բոլոր անոնց՝ որոնք դարերով այս օրուան սպասեցին, վառ յոյսերով ու հաւատքով»:

Աշակերտները խոր անձկութեան մէջ էին: Յիսուսի դէմքը վեհափառ տրտմութեամբ լուսաւորուած, գեղեցիկ էր եւ յանկուցիչ: Յետոյ հանդիսաւոր կերպով բարձրացաւ իր տեղէն, առաւ անկիւնը դրուած շոնիթն ու կոնքը եւ կարգով լուաց աշակերտներուն ոտքերը: Բոլորը անխօս կը հնազանդէին իրեն: «Զեզի հետ ունեցէք միշտ սիրոյ եւ խոնարհութեան այս օրինակը, որովհետեւ իմ թագաւորութեանս մէջ, տէրը աւելի մեծ չէ ծառայէն: Քալեցէք այս մաքուր ոտքերով աշխարհի բոլոր ճամբաներէն եւ տարէք իմ սէրն ու աւետիսը բոլոր մարդոց, որոնք ինծի պիտի գան ձեզմով»: Ապա բաղմեցաւ աշակերտներուն մէջտեղը, վերցուց հացի նկանակը եւ բաժնեց բոլորին, ըսելով. «Ասիկա իմ մարմինս է, որ ձեզի եւ բոլոր մարդոց համար կը բաժանուի իբրեւ ոգեյիշատակ եւ գրաւական անքակտելի սիրոյս: Ամէն անգամ որ բեկանէք հացը ներկայ պիտի ըլլամ ձեր մէջ եւ այս հացին ոգեղէն խորհուրդով պիտի միանամ ինծի: Յիշեցէք աղօթքը զոր սորուեցուցի ձեզի. մեր ամենօրեայ հացը տուր այսօր մեզի: Այդ յաւիտենական հացը իմ մարմինս է զոր կը բաժնեմ ձեզի եւ ձեզմով՝ աշխարհին»: Յետոյ լեցուց գինիին բաժակը, նախ ինքը խմեց, ապա բաժնեց բոլորին. «Այս իմ արիւնս է Նոր Ուխտին, որ կը թափի շատերու համար. խմեցէք եւ միշտ ծարաւ մնացէք ինծի եւ իրարու

այն սիրով՝ որով սիրեցի ձեզի»: Յետոյ բաժնեց ձուկը, գառը եւ միւս ուտելիքները, նման թռչունին որ կը կերակրէ իր ձագերը:

Երբ աշակերտները ծանրացած սրտով կը ճաշէին, Յիսուս ըսաւ. «Այժմ ատենն է որ յայտնեմ սրտիս միակ վիշտը, գալիք բոլոր վիշտերէն աւելի: Մի կարմանաք եթէ ըսեմ թէ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս այս գիշեր, սակայն իցիւ թէ ան ծնած չըլլար երբեք»: Աշակերտները սարսափած իրարու կը նայէին: Յետոյ Յիսուս դարձաւ Յուդային եւ ըսաւ. «Գնա այժմ եւ ըրէ ինչ որ պիտի ընես»: Յուդան ա՛լ չկրցաւ կենալ եւ վիրաւոր գազանի մը պէս դուրս փախաւ սենեակէն:

Յուդային մեկնելէն վերջ յաջորդեց երկար լռութիւն մը. ոչ ոք սիրտ ունէր խօսելու: Ապա Յիսուս դարձաւ իր աշակերտներուն եւ ըսաւ. «Կարճ եղան իմ օրերս ձեզի հետ, բայց կը վստահեցնեմ ձեզի թէ տակաւին չնուաղած խօսքերուս արձագանգը ձեր հոգիներուն մէջ, ձեզի պիտի գամ վերստին, նոր իրականութեամբ եւ կերպարանքով, ամոքելու ձեր չարչարուած սիրտերը եւ գայթակղած միտքերը: Իմ ձեզի հաղորդած ճշմարտութիւնները աշխարհ դիւրին պիտի չկրնայ մարսել, սակայն անոնք պիտի չմաշին ժամանակին կնճիռներէն: Իմ սէրս պիտի զօրացնէ ձեզ եւ դուք պիտի յաղթէք աշխարհին»:

«Որսորդի նման եկայ աշխարհ, որսալու ձեզի եւ ձեզմով մարդերը երկնքի արքայութեան համար: Մահը պիտի որսայ զիս, յետոյ սակայն նետահար պիտի իյնայ, անմահութիւնը յաւերժող երկնքի նետէն: Իմ վէրքերուս մէջ պիտի մխուին ձեր մատները եւ այդ վէրքերով պիտի ճանչնաք ձեր ալ վէրքը եւ վէրքերը աշխարհին: Մայր մահը զիս իր արգանդը առած՝ վերստին պիտի ծնի, իբրեւ սիրելի զաւակը երկրին եւ երկնքին»:

Պետրոս որ երկար ատենէ ի վեր լուռ էր ու ճնշուած, ըսաւ Յիսուսին. «Ուր որ ալ երթաս, քեզի հետ պիտի ըլլամ, մահն իսկ պիտի չկրնայ բաժնել մեզ իրարմէ»:

Յիսուս դրաւ իր դողդղացող ձեռքը Պետրոսի ուսին. յետոյ անոր աչքերուն նայելով դառնօրէն ժպտեցաւ: «Ո՞վ գիտէ, գուցէ բոլորդ ալ ուրանաք եւ լքէք զիս, տակաւին գիշերը չվերջացած: Իսկ դուն, Պետրոս, որդի Յովհաննու, հաւախօսէն առաջ երեք անգամ պիտի ուրանաս զիս»:

Յովհաննէսի աչքերուն մէջ արցունքներ կային; «Տէր», ըսաւ, «ինչպէ՞ս կրնաս թողուլ մեզ առանձինն այս աշխարհի մէջ»:

— Հոս պիտի մնաք բոլորդ, պիտի տքնիք ու պայքարիք, պիտի չարչարուիք սիրով, տանելու բարի լուրը մարդոց եւ իրագործելու երկնքի արքայութիւնը այս երկրի վրայ: Պիտի բաժնուինք իրարմէ, սակայն ամէն անգամ որ պէտք ունենաք ինծի, ես ձեզի հետ պիտի ըլլամ, իբրեւ անտեսանելի բայց իրաւ ներկայութիւն մը ձեր մէջ: Սիրոյ լոյս ճառբայէն մենք իրարու պիտի գանք Աստուծոյ երթալու համար: Իմ սէրս պիտի զօրացնէ ձեզ եւ դուք պիտի յաղթէք աշխարհին:

«Իմ մահովս միայն դուք պիտի ունենաք կեանք եւ ապատութիւն: Երբ արեւը ծագի իմ մահուանս վրայ, երկինքը պիտի թագաւորդէ զիս վերստին: Այդ օրը երկար պիտի ըլլայ եւ աշխարհ պիտի չտեսնէ անոր վերջալոյսը»:

«Ես իմ արիւնովս պիտի յագեցնեմ երկրի ծարաւը, սակայն անոր իրաքանչիւր կաթիլէն նոր կաղնիներ պիտի ծլին, աւելի մեծ եւ գեղեցիկ: Իմ մահս մօտ է, ան՝որ չէ որ կը մտածեմ, այլ մրցանակին, զոր ոչ ոք պիտի կրնայ խլել ինձմէ: Ով որ կը փրկէ, պէտք է վճարէ փրկագինը իր անձով: Մարդոց յիշողութեան մէջ արիւնով գրուած ճշմարտութիւններ միայն կը մնան»:

(«Լուսամատեան», էջ 171—173)





ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ՎՐԱՅ

Աւագ շաբաթը Յիսուսի կեանքին կարեւորագոյն շրջանն է: Մինչ Աւետարանիչները մեր Փրկչին երեք տարիներու գործունէութեան եւ քարոզութեան կը յատկացնեն իրենց գրքերուն գրեթէ երկու-երրորդը, անդին Յիսուսի կեանքի վերջին եօթնեակին կը վերապահեն իրենց գրքերուն գրեթէ մէկ-երրորդը: Որովհետեւ Աւագ Շաբաթը իր մէջ կը համադրէ Յիսուսի կեանքի վերջին ութ օրերու կարեւորագոյն խօսքերը, գործքերը եւ տնօրինութիւնները:

Սրտայոյզ այս դրուագներու ընդմէջէն կը յայտնուի Աստուած իր անհուն սէրովը, իսկ մարդը՝ իր անսահման չարութեամբը: Ոչ մէկ ատեն Աստուած ու մարդը այնքան սերտօրէն ու այնքան դրական ու ժխտական դիրքաւորումներով իրարու դէմ յանդիման եկած են, որքան Յիսուսի կեանքին այս վերջին օրերուն, երբ Աստուած կը յայտնուի մարդկային սովորական չափանիշներէ վեր ու տարբեր գործելու Իր տնօրինութիւններովը. իսկ մարդը՝ ամէն հովին—լաւ կամ վատ—իր առագաստը բանալու յեղեղուկ տրամադրութեամբը: Վերջապէս այս օրերուն Աստուած կը յայտնուի մարդերու փրկութեան համար չարչարուելու իր անընդունելի խորհուրդովը. իսկ մարդը՝ աստուածաչարչար դառնալու իր անսրբագրելի յիմարութեամբը: Ուրեմն՝ Աստուծոյ անհուն սիրոյն եւ խորագոյն խորհուրդներու յայտնութեան Շաբաթն է Յիսուսի կեանքին վերջին եօթնեակը:

Չարչարանքի եւ Չարութեան Շաբաթը:
Յաղթանակի եւ Յարութեան Շաբաթը:

*
* *

Եկեղեցական ու տօնացուցական 1 տեսակէտէ դիտուած՝ համեմատաբար կարճ շրջան մըն է Աւագ Շաբաթը տարուան 365 կամ 366 օրերու մէջ. սակայն իր կրօնական տարողութեամբ տարուան կարեւորագոյն եօթնեակն է համայն Քրիստոնէութեան համար:

Արեւմտեան Քրիստոնեաները կայն կը կոչեն **«Սուրբ Շաբաթ»**. իսկ Արեւելեաններ՝ **«Աւագ Շաբաթ»**: Իրականութեան մէջ ան երկուքն ալ է: ՍՈՒՐԲ է, որովհետեւ տարբեր է տարուան միւս շաբաթներէն, եւ սուրբ տնօրինութիւններ կը կատարուին անոր մէջ: ԱՒԱԳ է, որովհետեւ մեծ տարողութեամբ խօսքեր, դէպքեր եւ խորհուրդներ տեղի կ'ունենան իր մէջ: Ինչպէս շատ մը ուրիշ պարագաներուն՝ այնպէս ալ այստեղ, Արեւելք եւ Արեւմուտք վիրար կը լրացնեն եւ ոչ թէ իրարու կը հակասեն:

Աւագ Եօթնեակի տօնակատարութենց օրերուն՝ եկեղեցին ոչ միայն կը յիշատակէ Յիսուսի վերջին տնօրինութիւնները Աստուածաշնչական ընդարձակ ընթերցուածներով եւ շարականներու սրտաշարժ մեղեդիներով, այլ նաեւ երբեմն կը վերարտադրէ վանոնք սրբբական ՏՐԱՄԱՅԻ մը սրտառուչ ձեւին տակ: Ամբողջ շաբաթ մը, յաճախ հեւ ի հեւ ընթացող շարժանկարի մը վերիվայրումներով, կը տրուի պատեհութիւնը հաւատացեալին սերտօրէն հետեւելու իր Փրկչի կեանքի վերջին խորհուրդներուն, ապրելու համար անոր հետ յուլումի, վիշտի եւ ուրախութեան պահեր:

Աւագ Շաբթուան տօնակատարութեան հասարակաց երեւոյթը Աստուածաշնչական ընթերցուածներուն ճոխութիւնն է: Յատուկ միտում կայ, կարծես, տօնացոյցը կազմողներուն կողմէ, որչափ կարելի է երկար պահել հաւատացեալը եկեղեցիին մէջ, լեցնելու համար անոր միտքը Ս. Գրական գրեթէ անհատնում ընթերցուածներով, որոնք կա՛մ այն օր պատահած դէպքերու մասին են, կա՛մ

նոյն օրը Յիսուսի կողմէ խօսուած քարոզներ, առակներ ու հրաժեշտի մտերիմ զրոյցներ են, եւ կա՛մ օրուան խորհուրդին հետ հեռուէն ու մօտէն առնչութիւն ունեցող Հին Կտակարանէն վերցուած կտորներ են:

Եօթնեակը կը սկսի յաղթանակով եւ կ'աւարտի յաղթանակով: Միջանկեալ մասը կեանքն իսկ է, իր ելեւէջներով, եւ վերիվայրումներով, իր գուպարներով եւ գայթումներով, ուրախութեան պոռթկումներով լուսաւոր եւ տառապանքի հառաչներով վիրաւոր: Քիչ անգամ մարդկութեան հոգիի հակադիր հակումները այնքան շեշտօրէն իրարու կը յաջորդեն ու իրարու կը բախին, որքան՝ այս օրերուն:

Համամարդկային տարողութեամբ ծանրաբեռն շաբաթ մըն է Աւագ Եօթնեակը:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Աւագ Շաբաթի վարագոյրը կը բացուի ժողովրդային ակնիւ տրամադրութիւններու սխրալի պոռթկումով մը: Ընկերային կեանքի գրեթէ բոլոր երեւոյթները ներկայ են այստեղ. ուրախութիւն, երգ, հանդէս մէկ կողմէն, ու լաց, նախանձ եւ ընկերային տարբեր ըմբռնումներու բախումներ միւս կողմէն:

Օրուան շքեղ այս անունը յատուկ է մեկի միայն: Հայ ժողովուրդի այն դիպուկ յօրինումներէն՝ ուր իրը եւ անունը կիրար կը գրկեն երջանիկ հարազատութեամբ: Միւս Քրիստոնեաներ զայն կը կոչեն «Արմատնեաց Կիրակի»: Իսկ անոր տօնացուցական պաշտօնական յորջորջումն է մեր մէջ՝ **«Գալուստ Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանական Յերուսաղէմ»:** «ԾԱՂԿԱԶԱՐԴ» տիտղոսը մեր ժողովուրդին գիտուն է, հոգ չէ թէ հին բնապաշտական տօնի մը անունը եղած ըլլայ այդ, եւ կամ յատկապէս յօրինուած՝ այս տօնին համար: Կարեւորը այն երջանիկ մէկտեղումն է որ պատահած է անունին եւ Աւետարանական ծանօթ դրուագին միջեւ: Եկեղեցին ալ տեսնելով այս իմաստալից զուգադիպութիւնը պաշտօնապէս որդեգրած է զայն, ինչպէս ըրած է **Տեառնընդառաջի, Զատիկի** եւ **Վարդավառի** պարագաներուն, որոնք եւս ժողովրդային անուանադրութիւններ են իրենց ներկայացուցած տօներուն համար:

Մեր ժողովուրդը սերտ նմանութիւն մը նշմարած է Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքին եւ գարնան բնութեանէն ներս յաղթական ծաւալումին միջեւ: Արդարեւ այս տօնախմբութեան օրերուն բնութեան գրեթէ յանկարծական պոռթկալը ծաղիկներու երգող երանգներով, ու ծառերուն փառաւորիչը ծաղկեայ պայծառ հպատմուճաններով, տուած է պատկերը հայ ժողովուրդին կոչելու համար Յիսուսի փառաւորութեան տօնը ԾԱՂԿԱԶԱՐԴ:

Իրաւամբ Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքը Անոր մեծութեան ծաղկումն է: Անոր աստուածային հեղինակութեան պարուրուած կոկոնին բացումն է: Անոր ցարդ անտեսանելի մնացած փառքին ճառագայթումն է:

Յիսուս միշտ խուսափած է սովորական փառքի ցոյցերէն, պարզ այն պատճառով որ ինք «Փառաց Տէրն» էր արդէն կամ՝ «Փառաց Թագաւորը», Սաղմոսի ծանօթ սրբասացութեամբ, զոր կը լսենք ամէն Ս. պատարագի Վերաբերումին: Իսկական փառքը Յիսուսի մէջն էր, եւ Ինք Աստուծոյ փառքին արտացոլացումն էր: Մէկը որ հարազատ ադամանդներ ունի իր գանձատուփին մէջ, կեղծ ադամանդներով չի հետաքրքրուիր: Բաց աստի Յիսուս այնքան լարուած ու տարուած էր կեանքի հիմնական եւ յաւիտենական հարցերով, որ ժամանակ ու ախորժակ չունէր կեանքի հասարակ պսպղուն երեւոյթներու առջեւ կանգ առնելու:

Սովորական փառասիրութեան մասին կը մտածեն միայն անոնք, որ զուրկ են իրական փառքը արտադրող ազդակներէ: Մարդիկ, որոնք դատարկ մնացած են խոր իրագործումներէ եւ ոգեղէն ներքին ապրումներէ, պէտք կը զգան այդ դատարկութիւնը լեցնել արտաքին փայլով եւ ցուցանքով: Արտաքին փառքով տարուող մարդը ապացոյցը տուած կ'ըլլայ իր ներքին բոպիկութեան եւ պարապութեան:

Յիսուս հետեւողական դատապարտող մըն էր ցուցանքի: Մարդկութեան պարգեւած իր Նոր Սահմանադրութեան—Լերան Քարոզին—հիմնական յատկանիշներէն մէկը կը կազմէ այս: Կը պատգամէ Յիսուս այնտեղ. «Ըգոյշ եղէք բարիք ընելու ատեն. չըլլայ որ ցոյցի համար ընէք: Ողորմութիւն տալու ատեն փող մի հնչեցներ քու առջեւդ, ինչպէս կեղծաւորները կ'ընեն, հաւաքավայրերու եւ հրապարակներու վրայ, որպէսզի մարդոցմէ փառաւորուին...»:

Եթէ մարդ իրական ու հարազատ փառք ունի, հոգ չէ թէ այդ ըլլայ պզտիկ աստղի մը համեստ պլպլացումը, կամ մեծ աստղի մը պայծառ պսպղումը, կը նշմարուի արդէն աչք ունեցողներու կողմէ: Իսկ սեւ ակնոց գործածողներ չեն կրնար հանդուրժել լոյսի պայծառութեան. կոյրերն ալ արդէն չեն տեսներ. հետեւաբար այլեւս անիմաստ կը դառնայ այս կարգի մարդոց երեւնալու մարմաջներ սնուցանելը: Փառք ըսուածը իրական մեծութեան մը շուքն է. բարութեան՝ փայլը. առաքինութեան ճառագայթը: Չեն կրնար չնշմարել պատարագի սեղանին վրայ այրող մոմը: Յի-

սուս հարապատ փառքի սահմանուածներուն ուղղելով խօսքը կ'ըսէ. «Դուք աշխարհի լոյսն էք... թող ձեր լոյսը այնպէս ճառագայթէ մարդոց առջեւ, որ անոնք տեսնելով ձեր բարի գործերը փառաւորեն ձեր երկնաւոր Հայրը» եւ ոչ թէ ձեզ: (Մատթ. Է 14—16):

Իսկ իրեն համար ըսած էր Յիսուս առիթով մը. «Ես մարդոցմէ փառք չեմ փնտռեր»: (Յովհ. Ե. 41):

Հակառակ այս բոլորին, սակայն, Յիսուս իր կեանքին մէջ առնուազն երկիցս ոչ միայն թոյլ տուաւ, այլ, այսպէս ասած, մինչեւ իսկ ինք տնօրինեց որ փառաւորուի նաեւ արտաքնապէս եւ տեսանելի կերպով: Ինչո՞ւ երեւութական այս հակասութիւնը:

Կանխենք ըսել, որ այս երկու պարագաներն ալ ուրիշներու օգտին համար արտօնուեցան. աւելի շիտակ՝ իր որոշ եւ կարեւոր մէկ ուսուցումը գործնականօրէն եւս հաստատելու համար եղան: Փառաւորման այս երկու երեւոյթները կրնանք կոչել «ապրուած կամ գործադրուած առակներ». որովհետեւ իրենց նպատակով նոյն են առակներու հետապնդած նպատակին հետ. այսինքն ծածկեալ կամ վերացական ճշմարտութիւն մը արտայայտել յօրինուած պատմութեամբ մը կամ կեանքէ առնուած իրական դրուագով մը:

Յիսուսի կեանքին հետ առնչութիւն ունեցող այս առակաւոր դրուագներէն կարելի է նկատել, օրինակ, իր մկրտութիւնը: Յիսուս պէտք չունէր մկրտուելու, քանի որ մեղաւոր մը չէր. սակայն մկրտուեցաւ պարզապէս օրինակ հանդիսանալու համար իր հետեւորդներուն, եւ շեշտելու համար անհրաժեշտութիւնը մկրտութեան: Առաջքը առած եղաւ ապագային ոմանց այն հաւանական առարկութեան, թէ քանի որ Յիսուս չմկրտուեցաւ, մենք ալ անհրաժեշտ չենք տեսներ մկրտութիւնը: Յիսուս աշակերտներուն ոտքերը լուաց, ոչ թէ որովհետեւ անոնք պէտք ունէին լուացումի, այլ անոնց սորվեցնելու համար ծանօթ դասը: Յիսուս թրենի մը չորցուց, գործնականապէս նախ հաստատելու համար հաւատքի կօրութիւնը, եւ ապա՝ սորվեցնելու համար այն ճշմարտութիւնը, թէ բարի պտուղ տալու սահմանուած մարդը, եթէ տերեւներով միայն զարդարուած մնայ, դատապարտուած է չորնալու: Նման է նաեւ նպատակը վերեւ ակնարկուած երկու փառաւորումներուն, որոնցմէ մէկը տեղի ունեցաւ լերան մը մենութեան մէջ, ի ներկայութեան՝ իր աշակերտներէն միայն երեքին. իսկ երկրորդը բեմադրուեցաւ Երուսաղէմի շրջանակին մէջ, ամենքի աչքին առջեւ: Ի՞նչ էր նպատակը այս վերջին բեմադրութեան:

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երբ ամէն ոք տեսաւ Յիսուսը բազմած գրաստի վրայ, բռնկեցաւ խանդավառութեան հրդեհը. աշխուժացան մինչեւ իսկ վարանոտները, արձակուեցան լեզուի կապանքները, կազմուեցաւ ինքնաբեր թափորը դէպի Երուսաղէմ:

Յիսուս ճամբայ կ'ելլէր Բեթանիա գիւղէն, որ կը թարգմանուի «տուն արմաւենեաց», եւ որ Երուսաղէմէ շուրջ երեք քիլոմեթր հեռու կը գտնուէր, Ձիթենեաց լերան արեւելեան կողին վրայ:

Ամէն անգամ որ Յիսուս Երուսաղէմ գար, չէր մնար աղտոտ եւ աղմկոտ՝ այսպէս կոչուած՝ «սուրբ» քաղաքին մէջ, այլ՝ կ'օթեւանէր խաղաղ ու արեւոտ Բեթանիոյ մէջ: Այստեղ ունէր իր սրտակից բարեկամները, որոնց համար ուրախութեան մեծագոյնն էր հիւրընկալել Յիսուսը իրենց խոնարհ բայց իրենց սրտին պէս մաքուր եւ բաց յարկին ներքեւ: Իր իջեւանած տունին տէրն էր իր բարեկամ Ղազարոսը, որուն քանի մը օրեր առաջ յարութիւն տուած էր, ինչ որ պատճառ դարձած էր իր հռչակին առաւել ճարակումին: Իր կեանքի վերջին այս քանի մը օրերուն այստեղ պիտի ըլլար Յիսուսի բնակարանը, ուր քանի մը խաղաղ գիշերներ պիտի անցնէր, անդոհներով, քարոզներով եւ փարիսեցիներու եւ անոնց խմբակին հետ բախումներով լեցուն յոգնաբեկ ցերեկներէ յետոյ:

Թափորը եւ յաղթական բացագանչութիւնները իրենց ընթացքը առած էին: Արթնամիտներ բարձրացան Բեթանիոյ արմաւենիներու կատարը եւ վար թափեցին անոնց ճիւղերը. անցնողը վերցուց հատ մը: Անոնք որ չկրցան արմաւենիի ճիւղ ճարել յարձակեցան ձիթենեաց լեռը ծածկող ցածլիկ ձիթենիներու վրայ եւ պոկեցին՝ անոնց ճիւղերը: Փոքրիկ ծառերէ կազմուած քալող անտառ մըն էր կարծես հիմա այս թափորը: Բազմութիւնը քանի կ'ընթանար այնքան կը ստուարանար, նման գետի մը որ իր հոսանքի ճամբուն վրայ նոր առուակներ կ'ընդունի իր մէջ: Գարնանային ու տաքուկ էին օրերը, երբ մարդ աւելի տրամադիր կ'ըլլայ դուրս թափուելու: Տօնական էին օրերը, քանի որ 4—5 օրէն պիտի կատարուէր հրեայ մեծագոյն տօնը, «Պասեքը», այս ժողովուրդի փրկութեան յիշատակը եգիպտական գերութենէն: Այս տօնին կապակցութեամբ եւս հսկայ բազմութիւն էր հաւաքուած Երուսաղէմ եւ շրջակայ գիւղերը: Անոնք եկած էին ոչ միայն Հրէաստանի գաւառներէն, այլ նաեւ հեռաւոր հրեական Սիրիոքէն, Սուրիայէն,

Կիլիկիայէն, Հայաստանէն, Պարսկաստանէն, Պարթեւաստանէն եւ մինչեւ իսկ հեռաւոր Հնդկաստանէն: Եկած էին նաեւ արեւմտեան աշխարհէն, Կիպրոսէն, Կրետէէ՛, Փոքր Ասիոյ բոլոր նահանգներէն, Յունաստանէն, ինչպէս նաեւ Երուսաղէմն ալ իր ճանկերուն մէջ առած կայսրութեան կեդրոնէն, Հռովմէն: Ափրիկէն ալ ներկայ էր Եգիպտոսէն ու Լիպիայէն եկած ուխտաւորներով:

Տիրող խանդավառութիւնը եւ թափօրին դանդաղ ընթացքը կգացնել չէին տուած յոգնութիւնը լեյան կողէն դէպի կատար բարձրացումին: Երբ թափօրը հասաւ Ձիթենեաց սարի գագաթը, պարզուեցաւ Երուսաղէմ քաղաքը ամե՛ն աչքին իր ամբողջ շքեղութեամբ: Պայծառ արեւը աւելի կը շեշտէր դիմացի տեսարանին գեղեցկութիւնը, յատկապէս գաւառացի ուխտաւորներու աչքին, երբ կայն բաղդատէին հողաշէն իրենց փոքրիկ գիւղակներուն հետ: Հոյակապ էին յատկապէս Երուսաղէմի արեւելեան պարիսպները, եւ աստուածակերտ Տաճարը, որ բաղմած էր թագուհիի մը պերճութեամբ այդ շքեղ շրջանակի մէջ: Աստուածարեալ քաղաքի այս հրաշալի տեսարան՛ը աւելի խթանեց հայրենասէր գաւառացիներու խանդը եւ եռանդը: Ու պայթեցաւ հարիւրաւոր բերաններէ գրեթէ ամենքին ծանօթ ուխտաւորական Սաղմոսը...

Երբ ժողովուրդը կ՚եղերերգէր այս Սաղմոսի վերջին տողերը ամենքի աչքին մէջ արցունք կար արդէն: «Զորդիսե՛ Եդովմայ» սաղմոսին խօսքերը այս Գալիլիացիներուն կը յիշեցնէր օրուան «Եդովմի որդիները», Հէրովդէսները, այսպէս կոչուած իրենց «թագաւորները», որոնք արդարեւ Եդովմայեցիներ էին, որոնք ձեռք անցուցած էին Հրէաստանի թագը: Ու Սաղմոսին վերջաւորութեան յիշուած անէծքի եւ վրէժխնդրութեան սա խօսքը. «Դուստր բաբելացւոց, թշուառական, երանի որ հատոյց վհատուցումն քո, զոր դու մեզ հատուցեր», կը յիշեցնէր իրենց նոր Բաբելոնը, Հռովմը, որուն լուծին տակ ինկած էր նաեւ Երուսաղէմը: Ամբոխը ողողուած էր յուզումի եւ ապատատենչութեան սիաւոր ալիքով մը: Յուզուած էր խորապէս նաեւ Յիսուս: Սակայն իր յուզումին կսպանակները բոլորովին տարբեր էին՝ ամբոխի ունեցածէն: Յատկապէս վինքը ցնցած էր վերեւի Սաղմոսի վերջին տողը. «Քակեցէք, քակեցէք մինչեւ ի հիմն հասուցէք...»: Ու տեսիլք մը պարզուեցաւ իր հեռահայեաց աչքին դիմաց. իր խոհուն դէմքին վրայ մռայլ ամպեր դիպուեցան: Պրկուեցաւ ամբողջ իր կերպարանքը. կարծես մոռացութեան տուած էր Յիսուս իր շրջապատը:

Կը տեսնէր Երուսաղէմի թշնամի զօրքերով շրջապատուած, պարիսպները մէկը միւսին ետեւէ կը կործանուէին, հպարտաւոր զոհերու արիւնը կը հոսէր Երուսաղէմի փողոցներուն մէջ. կիներ եւ մանուկներ բռնուած սովի ճանկերէն իրար կը լափեն կարծես. հրդեհ առած էր տաճարը, կ՚այրի ամբողջ Երուսաղէմը. բոլոր տուները վերածուած են աւերակոյտի. ողջ մնացող ժողովուրդը մտրակուող արջառներու պէս գերի կը տարուէին...:

Ձիթենեաց սարի կողերէն իջնող այս աղաղակները կ՚արձագանգեն հանդիպակաց Երուսաղէմի բլուրներուն վրայ, ուր տանիքները թափուած Երուսաղէմացիներ կը հարցնեն իրարու. «Ո՞վ է եկողը». «Յիսուս Նազովրեցին» կ՚ըլլայ պատասխանը: Ոտքի վրայ ոյժ զգացողներ կը վազեն քաղաքէ դուրս դիմաւորելու համար հրաշագործ վարդապետը:

Դալարավուարհ ամբոխը իջած է արդէն կեդրոնի Ձորը, որ բարձրադիր Երուսաղէմը կը բաժնէ դիմացի Ձիթենեաց լեռնէն: Այստեղ երգեր ու պարեր կը հասնին իրենց գագաթնակէտին. շատեր իրենց ուսերուն վրայ նետուած «ապա»ները, այծի մազէ շինուած գեղջկական այդ պատմուճանները, կը փռեն ճամբաներուն վրայ: Գիտակները կ՚երգեն մեսիական ընդունելութեան սահմանուած սաղմոսները, կարծես միտքերու մէջէն իսպառ փարատելու համար ամէն կասկած, թէ խոնարհ ու հեզ գրաստի մը վրայ հեծած եկողը նոյնինքն իրենց հայրերուն դարերով ակնկալած Մեսիան էր: Ամբոխը գիտակցաբար կամ անգիտակցաբար այն օրը կը գործադրէր տառապէն, Զաքարիա Մարգարէին կանխասացութիւնը (Թ. 9):

«Ուրախ եղիր, դուստր Սիոնի, կուարճացիր Երուսաղէմ,
«Ահա թագաւորդ կուգայ քեզի,
«Արդար եւ փրկիչ, հեզ ու խոնարհ,
«Հեծած էշի վրայ, նստած նոր
աւանակի վրայ»:

Երուսաղէմ իր բազմադարեան ու արկածալից պատմութեան ամբողջ ընթացքին, թերեւս այսքան շէն, այսքան ուրախ օր չէր տեսեր: Այսքա՛ն հսկայ բազմութիւն, այսքան հանդիսական խաղաղութեամբ՝ մուտք չէր գործած իր ամրակուռ դռներէն ներս: Աւետարանի պատկերալից բացատրութեամբ՝ արդարեւ «դղրդեցաւ ամբողջ քաղաքը»:

(«Աւագ Շաբաթ», Պէյրութ, 1974 թ., էջ 3—7, 11—15)



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ԳԻՐԸ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ

ՍԳԱԿԻՐ ՏԻԿԻՆ ԱՐՄԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Վաստակաշատ պրոֆեսոր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի վաղաժամ մահվան գուժը խոցեց նաև Մեր սիրտը:

Դժվար է շատ, Մեսրոպ Մաշտոցյան Մատենադարանը պատկերացնել առանց Լևոն Խաչիկյանի, դժվար է շատ, հաշտվել այն մտքի հետ, որ այլևս չենք վայելելու նրա բարի ժպիտը, նրա ազնիվ ձեռքի սեղմումը:

Իբրև հմուտ հայագետ, իբրև հայաշունչ գիտնական, իբրև առաքինի մարդ, անկրկնելի էր հանգուցյալը:

Երկա՜ր, շատ երկա՜ր ժամանակ բոլորս պիտի հիշենք նրան գնահատանքով, հարգանքով և սիրով:

Այս սուրբ պահին, երբ նրա հոգին երկրային կյանքի ափից անցնում է դեպի ափերը անանց խաղաղության, Մենք աղոթում ենք, որ նրա հիշատակը մնա անթառամ ու պայծառ՝ այնտեղ հավերժության աշխարհում և այստեղ՝ բոլորիս սրտերում:

Հոգվո մխիթարություն Ձեզ, վշտալի տիկին Խաչիկյան, և Ձեր հարազատներին:

Սուրբ Էջմիածնից, Մեր սրտից լո՛յս ու օրհնությո՛ւն Լևոն Խաչիկյանի գիտական վաստակին, լո՛յս ու օրհնությո՛ւն նրա արդար հոգուն: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
15 մարտ 1982 թ.



ՄԱՀ
ԵՐԵՎԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԽԱՉԻԿՅԱՆԻ
(1918—1982)

1982 թվականի մարտի 12-ին, 64 տարեկան հասակում, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց նշանավոր գիտնական, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի դիրեկտոր, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, դոկտոր, պրոֆեսոր Լևոն Ստեփանի Խաչիկյանը:

Հայրենական գիտությունը մեծ կորուստ կրեց, իսկ Հայոց Հայրապետը՝ մեծ վիշտ, որի հետ հանգուցյալը կապվել էր մեծ բարեկամությամբ:

Նորին Սուրբ Օծությունը այս տխուր առիթով մարտի 15-ին ցավակցական սրտառուչ մի գիր էր ուղարկել սգակիր տիկին Արմինե Խաչիկյանին և ընտանիքին: Սույն ցավակցական գիրը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի այս համարում (էջ 11):

Պրոֆ. Լևոն Ս. Խաչիկյանը ծնվել է 1918 թվականի մայիսի 1-ին Երևան քաղաքում: Սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանը և ապա 1940—1954 թվականներին աշխատել է Մատենադարանում և Հայկական ակադեմիայի պատմության ինստիտուտում: Նա 1954 թվականից մինչև իր կյանքի վերջը եղել է Մատենադարանի դիրեկտորն ու ղեկավարը:

Վաստակաշատ ու անվանի գիտնականը իր ողջ կյանքը նվիրել է միջնադարյան Հայաստանի մշակույթին ու պատմությանը, տընտեսական կյանքի ուսումնասիրությանը:

Պրոֆ. Լ. Խաչիկյանի անվան հետ է կապված աղբյուրագիտական ծավալուն ու արժեքավոր մի գործ, որը 14—15-րդ դարերի հին հայկական ձեռագրերի հիշատակարանների քառահատոր ուսումնասիրությունն էր: Նրա գրչին են պատկանում նաև ավելի քան 150 մենագրություններ, հոդվածներ, միջնադարյան բնագրերի հրապարակումներ, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Գրիգոր Տաթևացու, հայ մշակույթի այլ մեծ երախտավորների մատենագրական վաստակին, գիտական գործունեությանը նվիրված աշխատություններ:

Հանգուցյալը եղել է «Բանբեր Մատենադարանի» խմբագիրը. «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի և «Հայկական հանրագիտարանի» խմբագրական կոլեգիայի անդամ:

Մարտի 21-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, ս. պատարագից հետո, Ավագ Բեմի ատյանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ Լևոն Ս. Խաչիկյանի հիշատակին:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ Խորանի բեմ և խոսում հետևյալ հուզիչ մահախոսականը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(21 մարտի 1982 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Ուղիղ եղիցին աղօթք մեր, որպէս խունկ առաջի քո, Տէր»:

Թող մեր աղոթքները խունկի նման ուղիղ բարձրանան դեպի քեզ, Տեր Աստված:

Այսօր, սիրելի ժողովուրդ, հավաքվել ենք բոլորս այստեղ աղոթելու, Մենք սրտանց փափագում ենք, աղերսում ենք, որ իրոք մեր աղոթքները ուղիղ բարձրանան դեպի երկինք: Որովհետև այսօր մեր աղոթքը մի արդար հոգու համար է, մի արդար հոգու տեր մարդու համար, որի գործն էլ, որի առաքելությունն էլ մեր ժողովուրդի կյանքում, արդար և սուրբ են եղած:

Պիտի աղոթենք՝ նորոգ հանգուցյալ ակադեմիկոս, պրոֆեսոր Լևոն Խաչիկյանի հոգվույն խաղաղության և լուսավորության համար: Մի մարդ, որ իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել էր մեր ժողովուրդին, մեր վերածնված հայրենիքին: Եվ այդ գիտակցությամբ աշխատել էր նա բազում տարիներ, իբրև ղեկավար, առաջնորդող ոգին՝ մեր մայրաքաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի:

Ինչքան ես կարողացա ճանաչել նրան, մանավանդ վերջին տարիներին, զգացի և միշտ հաստատեցի նրա հոգու խորքում, մեր ժողովուրդի վերածննդի զգացմունքը, որ մղիչ ուժ էր հանդիսանում, ինչպես ուրիշներին, նաև նրա համար: Նա մեր անցյալի ողբերգություններին քաջ ծանոթ անձնավորություն, հոգեպես մխիթարված էր այսօրվա մեր իրականությամբ, հայոց պատմության սովետական այս դարաշրջանի ազգային վերածնունդով, որ իրողություն է և մխիթարություն բոլոր ճշմարիտ հայ մարդկանց համար՝ լինեն նրանք Հայաստանում կամ արտասահմանում ապրողներ: Պրոֆ. Լևոն Խաչիկյան ոգեշնչված էր արդի վերածնունդով և այդ գիտակցությամբ նվիրված էր մեր առաքելության իբրև ղեկավարը, տնօրենը Մաշտոցյան Մատենադարանի: Եվ իրոք, Մատենադարանը այս վերջին տասնամյակների մեր ազգային-մշակութային վերածնունդի ճանապարհին՝ կենտրոնական տեղ է գրավում, գերազանցապես հայկական և ազգային, անշուշտ՝ մեր երկրի ուրիշ հիմնարկների և հաստատությունների կողքին, ինչպիսիք են գիտությունների ակադեմիան, համալսարանը, արդի գրականությունը, ծաղկող արվեստները և այլն: Այդ բոլորը մեկ ամբողջական ներդաշնակություն են կազմում մեր կարծիքով և այս բոլորի կենտրոնում ահա իր ինքնուրույն, բախտորոշ առաքելությունը շարունակում է կատարել Մատենադարանը:

Մենք, մանավանդ հայերս, փոքր ժողովուրդ, կամ ավելի ճիշտ փոքրացված ժողովուրդ՝ չար ճակատագրի բերումով, չենք կարող պարծենալ ո՛չ մեր համրանքով, ո՛չ մեր երկրի սահմանների ընդարձակությամբ, ո՛չ մեր այլ և այլ նյութական կարելիություններով, բայց արդարորեն կարող ենք պարծենալ և հպարտ լինել աշխարհի առաջ մեր մշակույթով, մեր հին և արդի մշակույթի արժեքներով:

Ազգություն, ազգային, նշանակում է մի մշակութային առաքելության իրականացում այս աշխարհի վրա: Եվ ազգությունները արժեն այնքան, ինչքան արժեքներ ստեղծել են իրենց մշակույթով:

Այսպես է, որ մեր ժողովուրդն էլ իր ուրույն տեղն է գրավում այս աշխարհի վրա, մանավանդ այս վերջին 60 և ավելի տարիների շրջանում, երբ կազմակերպվեց վերջապես մեր պետական կյանքը և հայ մշակույթն էլ սկսեց իր նոր վերածնունդը ապրել, նոր արժեքներ ստեղծելով հների կողքին: Որովհետև մի ազգ չի կարող գոյատևել միայն իր անցյալի արժեքներով, պետք է նրա ստեղծագործական պրոցեսը շարունակվի նաև մեր օրերին, որպեսզի կարողանանք բանալ նաև ապագայի դռները մեզ համար:

Ահա այս լուսավոր ճանապարհի վրա ըսքանչելի է առաքելությունը Մատենադարանին, որ ոչ միայն սովորական իմաստով գրադարան է, կամ մի տեսակ թանգարան, ոչ էլ անշուշտ մի տեսակ պատճենահան մեքենա, այլ անցյալի լույսերը ուղիղ և խելացի կերպով ընտրելով, կանոնք մեր օրերին բերող, վերարժեվորող հաստատություն, այդ լույսերով արգասավորելու համար մեր նոր մշակույթի զարգացման ընթացքը:

Ես մի քանի խոսքերով գովքը հյուսեցի մեր Մատենադարանի: Եվ դրանով իսկ, կընդունիմ, գովքը հյուսած եղա հանգուցյալ պրոֆեսոր Լևոն Խաչիկյանի, որովհետև առավելապես ինքն է, որ իր մտքի պայծառ լույսով, իր հոգու ջերմությամբ, իր հայաբույր հոգու ջերմությամբ այս մակարդակին, այս առաքելության բարձունքին հասցրեց Մատենադարանը մեր օրերին: Նա հանդիսացավ, տարիներ շարունակ, ոչ միայն սովորական իմաստով տնօրենը և ղեկավարը այդ հիմնարկության, այլ նաև ոգեշնչող ուժը, առաջնորդող հմուտ մշակը և դաստիարակը, ուղիղ ճանապարհը գտնողը, որպեսզի Մատենադարանը ծառայի, իրապես, իր արդի ազգային մշակութային առաքելության այնպես,

ինչպես մի քանի խոսքով փորձեցի Ես բնորոշել վայն:

Պրոֆ. Լևոն Խաչիկյան, բացի իր գիտնականի արժանիքներից, նաև ազնիվ մարդ էր և հարազատորեն հայ մարդ: Իր համեստությամբ, իր հոգու քաղցրությամբ, իր ընկերասիրությամբ և մարդասիրությամբ, նա նույնպես փայլում էր մեր կյանքում: Եվ նրա համբավը տարածված էր աշխարհով մեկ: Բազում անգամներ, Իմ արտասահմանյան ուղևորությունների ընթացքում, հաստատել եմ այս իրողությունը: Վերջին անգամ, անցյալ տարի, Վիեննայում, երբ ուրախությունը ունեցա հանդիպում ունենալու Ավստրիո ակադեմիայի նախագահի հետ, Ինձ համար հաճելի անակնկալ եղավ, որ նա Հայաստանը հիշելով, առաջին հերթին հիշեց անունը պրոֆ. Լևոն Խաչիկյանի, մեծ գնահատանքով և հիացումով դեպի նրա գործը, դեպի մեր Մատենադարանը:

Ահա թե ինչու մենք բոլորս, մեր ժողովուրդը, մեր հայրենիքը կորցրեցին իրենց ամենաարժանավոր զավակներից մեկին: Ճիշտ է, մահը բնական երևույթ է և պետք է խոնարհվենք այդ իրողության առաջ, բայց երբ այդ մահը վաղաժամ է լինում, անշուշտ որ մեծ է դառնում մեր կսկիծը, մեր վիշտը, մանավանդ, երբ անհետացողը տակավին երկար տարիներու աշխատանքի հնարավորություն ուներ, միշտ Մատենադարանի բարձունքի վրա կանգնած:

Ավա՜ղ, նրա կյանքի ոսկի թելը շուտ կըտրվեց, և նա բաժանվեց մեզանից, իր հետև թողնելով մեծ վաստակ և բարի հիշատակ:

Ես վստահ եմ, որ նրա ո՛չ վաստակը, ո՛չ էլ պայծառ հիշատակը չեն կորչելու: Ոչ միայն չեն կորչելու, այլ մնալու են իբրև առաջնորդող ոգի և ուղեցույց, նրա գործը շարունակողների համար, Մատենադարանի ողջ անձնակազմի համար, մի անձնակազմ, որ իսկապես մի տեսակ, պիտի ասեի Ես, գինվորյալ միաբանություն է՝ նվիրված մեր մշակույթի հին գանձերի վերարժեվորման գործին, նոր ճանապարհներ բացելու գործին՝ մեր այսօրվա մշակութային կյանքի հորիզոնի վրա:

Ահա այդ առաքելությունն է, որ Մենք վըստահ ենք, շարունակվելու է Լևոն Խաչիկյանի ոգով և նրա գծած ճանապարհով:

Այս տխուր առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր Գերագույն Հոգևոր Խորհուրդի և մեր ողջ միաբանության անունից ներկայացնում ենք մեր ցավակցությունները վշտակից տիկին Արմինեին, ընտանիքի բոլոր հարազատներին, Մատենադարանի բոլոր աշխատողներին և բոլոր սգակիրներին, որոնք այստեղ հավաքված են, և պատրաստվում ենք աղոթել մեծանուն հանգուցյալի հոգվույն հանգստյան և խաղաղության համար:

Մեր գիտակցության մեջ, և ապագա սերունդների, Մատենադարանի ճակատին միշտ պիտի կարդանք ոգեղինացած անունը Լևոն Խաչիկյանի:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն նրա արդար հոգուն:

Լո՛ւյս և օրհնությո՛ւն նրա մեծ վաստակին:

«Ուրախ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր, ամէն»:

Այնուհետև հանգուցյալի ընտանիքի, Մատենադարանի կոլեկտիվի անդամներին և ընկերներին Վեհարանում ընդունում է Հայոց Հայրապետը, մի անգամ ևս ոգեկոչում հիշատակը մեծավաստակ գիտնականի, հմուտ հայագետի, բյուրեղյա մաքրության տեր հայորդու, ազնիվ քաղաքացու, ընտանիքի նվիրված առաքինի ամուսնու և հոր, և մխիթարության, սփոփանքի Իր սրտի խոսքն է ասում բոլոր ներկաներին:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 7-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով քարոզ է խոսում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ներկա է լինում ս. պատարագի արարողությանը և այս առթիվ «Հայր մեր»-ից առաջ քարոզում ավետարանական սիրո վեհության և անհրաժեշտության մասին մեր օրերում՝ միաժամանակ ընդգծելով Մեծի Պահոց խորհրդի հոգևոր-բարոյական նշանակությունը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին, որպես գավավանակիր, ուղեկցում էր Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

* * *

Մարտի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մարտի 14-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով քարոզ է խոսում Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 21-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

*
* *

Մարտի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում դասախոսությամբ հանդես է գալիս Մատենադարանի գիտաշխատող Հակոբ Քյոսեյանը՝ ներկայացնելով Հովհան Մայրագոմեցու «Վերլուծութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ» աշխատությունը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը ներկայացնում է Մարտին Լութերի կյանքը, գործունեությունը և նրա ապրած ժամանակաշրջանը:

*
* *

Մարտի 27-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, տոնի առիթով ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քին. Սիմոնյանը:

Ս. պատարագից հետո հոգևոր ճեմարանի ուսանողությունը, գլխավորությամբ ուսմասվար Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանի, ուխտի է մեկնում Ս. Խորվիրապի վանք:

*
* *

Նույն օրը, ժամը 13-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում ԱՄՆ-ի արտակարգ և լիակոր դեսպան տիար Արթուր Հարթմանը՝ իր տիկնոջ հետ:

Այս առթիվ Հայոց Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ կրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Մարտի 28-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Գալատեան).

Այսօր Մայր տաճարում, Ավագ Խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովհաննես քին. Շահնազարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զի դուք յապատութիւն կոչեցեալ էք, եղբարք. միայն կի ապատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց» (Գաղ. Ե 13) բնաբանով քարոզ է խոսում Տ. Արտակ քին. Սիմոնյանը:

*
* *

Մարտի 30-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում հյուրաբար Հայաստանում գտնվող՝ լիբանանա-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը:

*
* *

Մարտի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Տ. Հայկակուն աբդ. Նաջարյանը շարունակում և ավարտում է Մարտին Լութերի մասին իր վեկուցումը:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 12-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկույթ՝ նվիրված Հայ Եկեղեցու բազմավաստակ Հայրապետ Մկրտիչ Խրիմյան Հայրիկի կյանքին, գործունեությանը և գրական վաստակին:

Երեկոն կազմակերպել էին հոգևոր ճեմարանի ուսանողները:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ներկա էին նաև Տ. Հուսիկ, Տ. Արսեն, Տ. Նարեկ, Տ. Գևորգ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հյուրեր:

Երեկոյին ներկա էր նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Բեռլինի Հումբոլդի անվան համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսոր, դոկտոր Գերհարդ Բասարակը՝ իր տիկնոջ հետ:

Երեկույթը ներածական խոսքով բաց է անում հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

Ապա բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի Ա լսարանի ուսանող, ուրարակիր Հակոբ Մարտիրոսյանը, որը, հանգամանորեն ներկայացնելով Խրիմյան Հայրիկի կյանքն ու գործունեությունը և նրա գրական ժառանգությունը, վեկուցման ավարտին եզրակացնում է ասելով.

«Խրիմյան Հայրիկը ԺԹ դարի վերջերին մեր եկեղեցական ու ազգային տարեգրության մեծագույն դեմքերից մեկն էր, որն իր գործունեությամբ իր անհատականության դրոշմն է դրել հայ կյանքի վրա, իբրև հայ մարդ, հոգևորական, հասարակական, եկեղեցական-ազգային գործիչ, ուսուցիչ և հրապարակախոս: Նա ոսկեձույլ մի ամբողջություն էր՝ դուրս եկած հայ ժողովրդի ծոցից: Խրիմյանը խորունկ մի խորհուրդ էր, աստվածաշնչական մի անձնավորություն, մի ամբողջ ժամանակաշրջան ու մի ամբողջ մշտայնություն»:

Բանախոսությունից հետո սկսվում է երեկոյի գեղարվեստական մասը: Ա լսարանի ուսանող, ուրարակիր Թորոս Մենենկիչյանը արտասանում է Պետրոս Դուրյանի «Հայրիկին» բանաստեղծությունը: Իսկ նախապատրաստական դասարանի ուսանող Վազգեն Բերբերյանը արտասանում է հատված բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի «Հայրը» պոեմից:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում է «Եկել է գարուն», «Հայրիկ, հայրիկ...» և «Վասպուրական» խմբերգերը:

БИБЛИОТЕКА
Ак... Наук
Р

Երեկոյի գեղարվեստական բաժնի վերջում հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Բաբգեն Ներսիսյանի՝ Խրիմյան Հայրիկի ստեղծագործությունների հիման վրա կազմած գրական ասքի (կոմպոզիցիա) կատարմամբ հանդես են գալիս ճեմարանի մի խումբ ուսանողներ:

Ապա ուսանողներին ողջույնի իր խոսքն է ասում երեկոյի հյուր պրոֆեսոր, դոկտոր Գերհարդ Բասարակը:

Երեկույթը, որն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, մի նոր ու սրտագին տուրք էր Հայ Եկեղեցու մեծավանուտակ կաթողիկոսի և Վասպուրականի մեծ կավակի արժեքավոր վաստակին:

Հավետ փա՛ռք Խրիմյան Հայրիկի անմահ հիշատակին:





Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԻ ԵՐԳԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի մեջ ուխտագնացության ամենաջերմ պաշտպաններն ու խրախուսողները եղել են աշուղները: Նրանց երգերի մեջ Էջմիածինը հիշվում է միշտ մեծ պատկառանքով և ջերմեռանդ երկյուղածությամբ: Այստեղ առաջ կբերենք մի քանի կուտ աշուղական երգեր, գաղափար տալու համար, թե ժողովրդի այդ հարազատ զավակները ի՞նչ են զգացել ու ի՞նչ երգել Ս. Էջմիածնի մասին:

Անցյալ ժամանակներում ճանապարհների դժվար հաղորդակցությունը, ընտանեկան անձուկ հանգամանքները արգելք էին լինում աշուղին Ս. Էջմիածին ուխտ գնալու, և ահա ի՞նչպիսի ջերմ կարոտով է արտահայտում նա յուր այդ փափագը.

Գիշեր ցերեկ քու խասրաթը կու քաշեմ,
Նստիբ ընի տեսնամ Սուրբ Էջմիածին.
Քու խասրաթեն կուլամ, արտսունք կթափեմ,
Նստիբ ընի տեսնամ Սուրբ Էջմիածին:

Միսկին Բուրջին, որ տեսել էր Էջմիածինը՝ ուխտ արել, համբուրել էր նրա սրբությունները, հայտնում է յուր հիացմունքը, յուր ստացած հոգեկան ու բարոյական մեծ մխիթարությունը ամենքին հայտնի երգով.

Էջմիածին խիստ սիրուն պայծառ տեսի,
Երկու հարյուր կանթեղ հիսուն ջառ տեսի,
Դիփ ամենը ջերկա-ջերկա վառ տեսի,
Վաթսուն ավել հենց ոսկի բուրվառ տեսի
Լուսավորչու տաճարը մարմառ տեսի, ալն:

Ըստ երևույթին այստեղ աշուղը ոգևորության մեջ չափազանցնում է, բայց ո՛չ, նա իր իսկ աչքով տեսել է Էջմիածինը այդպես բարգավաճ, լիառատ ու ճոխ դրության մեջ:

Աշուղ Ղազարը Էջմիածնի գովքն է անում հետևյալ կերպ.

Էջմիածին խիստ գովական վանեվան,
Ծառա ընիմ սուրփ Աթոռիդ սուրփազան,
Մե հենց պայծառ կու փայլի, նման է արեգական.
Չորս կողմն լաջիվարդած կու երևա վարմանազան,
Աջիդ ունիս լալ ու յաղութ, ալմաս թրաշ սուրբ գավազան:

Գիշերվանց քաղցր ձայն կուտա, կու բացվի դրախտի դուռն,
Միջին բալմեցրած է Լուսավորչի աջ կուռն,
Օսկի զալամով քաշած է Գյուլստանու վարդն ու սմբուլն,
Վրեն շուռ կուգա ճխճխալով քաղցրաձայնիկ բլբուլն.
Օսկի մարմառ սուրբ սեղանն խիստ գեղեցիկ, սուրփազան:

Կույս մայրն մեր Աստվածածին—չի կա նման իրան հատն,
Բարձր վանգակատանը կախ տված ունի սհաթն,
Աջակողմն Գեղարդանեն ա, ձախակողմն Շողակաթն,
Սուրբ հայրն մեր Լուսավորչուն, վարդարել ա Տրդատն,
Կույս մայր մեր Հռիփսիմեն խիստ գեղեցիկ, վանեվան:

Ջուխտ սարկավագով շուրջ կուգան, սուրբ սեղանին գլուխ տալով,
Միաբանքն վարդարված են խաչ խաչվառով, շուրջառով,
Ես անբաժան Ղազարս մայիլ էլա մտիկ տալով.
Ով ոք որ ինձ կու հիշի, արժանանա դրախտին բարով.
Եփրեմ սուրբ կաթողիկոսն խիստ գեղեցիկ, վանեվան:

... Էջմիածինն ուրեմն այնպիսի լավ տպավորություն էր թողնում աշուղների վերա, որ իրենց բոլոր բանաստեղծական ոյժը գործ էին դնում գովելու նրան ու սեր կարթեցնելու ժողովրդի մեջ, որ ուրիշ-երն էլ գան, ուրիշներն էլ «մայիլ ընին» Սուրբ Հորն մեր Լուսավորչու հիմնած մենաստանի գեղեցիկ տեսքին:

Էջմիածին խիստ լավ տեղի,
Միջումն կա շատ աբեղա,
Ամենքն կասեն մեկ «Հայր մեղա»,
Սալվի չինա՛ր Էջմիածին:

Սիրվուն սիրվուն դռներ ունիս,
Ոսկեջրած կռներ ունիս,
Արքայության հոտեր ունիս,
Սալվի չինա՛ր Էջմիածին:

Երեսդ արել ես Մասիս,
Ամեն նեղությունի հաս իս,
Երկնուց խորան լուսո մաս իս,
Սալվի չինա՛ր Էջմիածին...

Աշուղ Քիչիկ Նովան մի գեղեցիկ մուխամմասի մեջ ներկան նկարագրելով, ահա ինչպիսի խորհրդածություններ է անում Ս. Էջմիածնի անցյալի մասին.

Լուս պայծառ Իշման տիղն՝ դուռն շատ գովելի է,
Ծաղկած բոլորքն դաշտով՝ խուրն շատ գովելի է,
Բարելի պտուղ տվող ջուրն շատ գովելի է,
Մեծամեծ օտարն երդնեն հուրն շատ գովելի է,
Ցույց տվեք այս ասմունքն, վուրն շատ գովելի է:

Տրդատի ժամանակին տե՛ս ինչքան բաշարեցին՝
Սրբանց նահատակելով չելավ, չբեկարեցին.
Սուրբ Գրիգոր Լուսավորչուն սարսափյալ
չարչարեցին,
Գցեցին խուր վիրապն, օձն ու կարիճ շարեցին...

Հոռոմսիմ կույսն փախավ Տրդատի պալատիցն.
Սուրբ Գայանի ձեռնեն բռնեին՝ մատն մատիցն,
Անհամբարք բավմություն հասան շատեն շատիցն,
Նահատակ կոտորվեին՝ չլրկված հավատիցն.
Հավատի համար լավ է, սուրն շատ գովելի է: ...

Իշման տեղի Աթուռն Տրդատի պարդարած է՝
Ուսքովն քարն կրած, շնուրքով պատն շարած է,
Անհամբարք կանթիղներն սուրբ տաճարին վառած է
Սուրփ միռոնի էփ գալով այլ ապգն խավարած է.
Լուսավորչու մասունքն—կուռն շատ գովելի է:

Հայոց այն թվեն դեսն շատ չար ու բարի անցավ,
Հավար ութ հարուր յառասուն ու մե տարի անցավ.
Քանի՞ կաթուղիկոսներ դիի էն ճանապարհին
անցավ...
Նրանց հագի կգեստն—ջուրն շատ գովելի է:

Տե՛ր, խավարած մի՛ թողնի, լուսիդ արժանի՛ արա,
Մի՛ հեռացնի էրեսդ, տեսի՛դ արժանի՛ արա,
Ողորմությունդ շատ է, կիսի՛դ արժանի արա,
Երկնային հարսն շինե, փեսի՛դ արժանի արա.
Քիչիկ Նովի ասմունքն—խուռն շատ գովելի է:

Պատմական-նկարագրական տեղեկություններով ավելի հարուստ է աշուղ Քյանհանի «Գովասանություն առ Սուրբ Էջմիածնի» դաստանը:

Էջմիածին—Սիոն մայր տաճարն մեր,
Միաբանյալ անդ է ուղղափառն մեր,
Արմատ պինդ հայրապետական ծառն մեր,
Հավատ լուսավորչական է վառն մեր:

Վաղարշապատ էր Տրդատի օրոքն,
Միջոն պահպաներ հսկայավոր վորոքն.
Անդ Էջմիածին լուսափայլ շնորհոքն
Տեսլամբ տեսյալ Սուրբ Գրիգոր հայրն մեր:

Պինդ պահեր նա քրիստոնեական դավանը,
Ձեռնադրվեց, ձեռն առավ գավազանը,
Լուսավորյաց աշխարհն մեծ Հայաստանը.
Նա հայնմանե հալածեց խավարն մեր:

Հորժամ հիմն արկին Սուրբ Մայր Աթոռը,
Պատճառ եղավ Սուրբ Գրիգոր լուսավորը,
Անպատմելի է բայց, պատմեմ ձեվ ո՞րը՝
Շնորհոք Սուրբ Հոգվույն գեղեցկաշարն մեր:

Անվանեցին Աթոռ Լուսավորչական,
Անդ ժողովյաց սուրբն բավում միաբան.
Զարդարեցին եկեղեցիս վանական,
Պայծառացավ Հայաստան աշխարհն մեր:

Փութանակի հրաման ել վեհիցը,
Քննեցին այբ առաջ վերջը քեիցը,
Թարգմանեցին գիրք սուրբ մարգարեիցը.
Ոչ ոք կարե լինել հակաճառն մեր:

Անդ է սուրբ կուսանաց վկայարանը՝
Հոռոմսիմեն, Շողակաթ, Գայարանը,
Նոքա ընկալան պսակ անթառամը,
Եղեն լուսավորության պատճառն մեր:

Տասներկու անվանի վիմաքար են,
Հսկա Տրդատ եբեր Մասիս սարեն.
Աղավնակերպ լույս կու փայլի տաճարեն.
Առ Քրիստոս է ուղիղ ճանապարհն մեր:

Երկնից իջյալ սրբավանաց սաղավարտը,
Անոթ ընչից անպատմելի է զարդը,
Պարգևատու արյուն թաթախ Գեղարդը
Միջոն կուսյահե անշարժ հիմնաքարն մեր:

Շինվածք Աթոռույն ամեն ոսկեզօծ են,
Նետիվ թերահավատներուն կու խոցեն.
Յոթն ամաց մեկ անգամ մեռոն կու օծեն,
Նովավ կու մաքրի մեղաց նշխարին մեր:

Սուրբ հավատո սրբությամբ հաստատեցե՛ք,
Հա՛րք իմաստունք, հի՛մարա՛ց խրատեցեք,
Համաձայնյալ առ Քրիստոս պաղատեցեք,
Անխախտ մնա Հայկազյան տոմարն մեր:

Մեք հոտ կոչյալք հովվապետ սրբականը,
Որդիքն Հայկա և ազգն Հաբեթյանը,
Նախնական սահման՝ սեղանատանը
Կընթեռնուն Սարգիս Շնորհալու ճառն մեր:

Խնդրյա՛, Բյա՛նհան, քու խնդիրդ Հզորեն,
Պարգևատու Տեր Հիսուս թագավորեն,
Բարեխո՛ս լերուք, սիրելի՛ք համորեն,
Անցնե հանգիստ հեշտությամբ դժվարն մեր:

Ս. Էջմիածնի վանքի գովասանության հետ հայ աշուղները գովել ու փառավորել են և նրա վեհապետներին, «Հոգևոր Տիրոջը», «սուրբականին»: Ահա ինչ է երգում ութսունամյա աշուղ Քեշիշ-օղլին Եփրեմ կաթուղիկոսի համար.

Սեղանդ մասունք ա, վերարկուդ խաս ա,
Ծառա եմ քու սուրբ Աթոռիդ, սուրբաղա՛ն.
Սկիհդ արյուն մարմին, միջինը մաս ա,
Ծառա եմ քու սուրբ սեղանիդ, սուրբաղա՛ն:

Աստվածախոս Մովսես, սրբոց նահապետ,
Կարգդ հրեշտակաց դու ես Մելքիսեդ,
Եպիսկոպոսապետ ուղիղ հայրապետ,
Ծառա եմ քու յուղափառիդ, սուրբաղա՛ն:

Գավազանդ ոսկի ա, փիլոնդ խարա,
Աղոթքդ յար եղավ, ես շնորհքս առա,
Զարհուր Քեշիշ օղլին լինի քեզ ծառա.
Ծառա եմ քու խալ խալվասիդ, սուրբաղա՛ն:

... Իսկ ի՞նչ են երգում մեր ժամանակի աշուղները. վերցնենք մի քանի նմուշներ նոցա մեջ ամենահայտնի ու տիպիքական աշուղի՝ Ջիվանու երգերից և կտեսնենք, որ այստեղ բոլորովին նոր մտքեր, նոր զգացմունքներ են հեղհեղվում.

Մեր նախնյաց հոտն առնել կուզե՞ս, ի՛մ որդյակ,
Էջմիածին, Սուրբ Կարապետ ո՛ւխտ գնա.
Անին չմոռանաս, թեև ավերակ,
Կհամարվի նահնյաց փառքերուն վկա:

Քու հարազատ մայրն է Սուրբ Էջմիածին,
Սիրե՛ այդ սուրբ վայրը, սիրե՛ կաթոգին.
Պապերուս հիմնարկած տունն է թանգագին,
Հայոց համար դրանից մեծ տուն չկա:

Լա՛վ է, այդ պատճառով Կարին էլ կերթաս,
Հետո Մուշը, սիրուն դաշտը կտեսնաս,
Տարոնի լեռներուն կծանոթանաս՝
Սուրբ Կարապետ ուխտ գնալով, հա՛յ տղա:

Ջի՛վան, մայր չի լինի քեզ օտար կինը,
Սիրե քու ի՛սկ մայրդ, սիրե՛ քու հինը.
Թողած հոգուդ մոտիկ Էջմիածինը,
Ի՞նչ գործ ունիս Հռոմ կամ Ամերիկա:

«Հայերուս սեփականությունը» վերնագրով մի ուրիշ երգի մեջ նա ասում է.

Հայերս մեկ լեզու, մեկ կրոն ունինք,
Ուրիշ ոչինչ մեզի սեփական չկա.
Մենք հայկական հագուստ, հայ տարազ չունինք,
Կորչել է հին ձևը, մեկ նշան չկա:

Պապերս մեկ բանով շատ անգին էին,
Նպատակով տաճարներ կշինեին.
Հին մնացած վանքերը չլինեին,
Օտարք կասեին «Հայաստան չկա»:

Մի հատ եկեղեցի ունինք, մերն է վուտ,
Պարզ է, չունի այնքան բաներ նորամուտ,
Երգեր գրավիչ, մեղմ, հոգիօգուտ,—
Մեր շարանանի պես շարական չկա:

Տեր, պահե՛ Արամյան հոգևոր Գահը,
Մի՛ մարիլ հայերուս մեկ հատիկ ջահը,
Նրա հետ կապված է մեր ազգի շահը.
Բացի Սուրբ Աթոռը մեզ պաշտպան չկա:

Ջի՛վանի, մեկ մեկու կյանք նվիրելով՝
Հայ ապրինք հայության գանձին տիրելով,
Ինչ որ ունինք պահենք իրար սիրելով,—
Դրանից մեզի լավ ուրիշ բան չկա:

Հեռու երկրներից փչած օտար հովերի, վնասակար ազդեցություններից զգուշացնելով աշուղ Ջիվանին՝ այսպես է կազմում «յուր համոզմունքը».

... Թեև շատ բանի մեջ խեղճ եմ, տկար եմ,
Բայց այս համոզմունքիս մեջը հաստատ եմ,—
Էջմիածնում ժամկոչության հոժար եմ,
Ուրիշ ազգի քարոզաբան չեմ լինի:

Ջիվանս կմնամ ժրաջան արի,
Զարկամ եղբորս ցանկալով բարի.
Սևանում կմնամ քառասուն տարի,
Ձիք Խաչատուր Պապախանյան չեմ լինի:

Երբ Կովկասի հայ վինվորներին ճանապարհ էին դնում առաջին տարիներում, Ջիվանին խրատում էր ու երգում.

...Չմոռանանք որ մեզ ունինք Էջմիածին սուրբ հավատ,
Աշխատենք և միշտ ունենանք դեպի նրան վառ փափագ.
Անձով օգնենք մարմնավորին, հոգին չթողունք անհագ
Սուրբ կրոնին, եկեղեցուն կյանքերս տանք պատարագ,
Որ նա լինի մեզի պաշտպան մտքերուս լուս ու ճրագ,
Սրտերուս մեջ ամուր պահենք մեր հավատը տաք ու ջեր:

Հայի՛ Աստված, տո՛ւր հայերուն ջերմ հավատ,
Սիրեն իրենց եկեղեցին հարազատ...

Խիստ մխիթարական է այս երևույթը, որ Ս. Էջմիածինը յուր ամբողջությամբ, յուր բալմակողմանի նշանակությամբ ծանոթ է եղել ինչպես մեր հին աշուղներին, այնպես էլ նորերին. իսկ ինչ բանի արժեքն ու սրբությունը հասկանում է աշուղը, հասկանում է կնշանակե և ժողովուրդը, որովհետև աշուղը նրա մտքի, նրա գաղափարների և զգացումների թարգմանն է: Ո՛րչափ ցանկալի է, որ այդ գաղափարներն ու զգացումները, ամեն տեսակ մոլի ու նենգամիտ ներշնչումների հակառակ՝ շարունակեն կենդանի մնալ մեր ժողովրդի մեջ, և ամեն հայի սրտից բխած լինի աշուղի այս աղոթքը.

Տե՛ր, պահե՛ Արամյան հոգևոր Գահը,
Մի՛ մարիլ մեր ազգի մի հատիկ ջահը,
Նրանից է կախված մեր ազգի շահը,—
Բացի Սուրբ Աթոռը մեկ պաշտպան չկա:

(«Արարատ», Վաղարշապատ, 1903 թ., էջ 511—520)





ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԸ*

Եթե Մատթեոսի առաջ բերած ծննդաբանության ցանկը մի սկիզբ է այդ Ավետարանի համար, ապա Ղուկասի առաջ բերածը մի միջանկյալ տարր է Հիսուսի մկրտության պատմության առնչությամբ:

Ղուկաս ավետարանիչը իր Ավետարանը սկսում է Հովհաննես Մկրտչի և Հիսուսի ծընընդյան ու մանկության պատմություններով (Ա 1—Բ 52), ապա ներկարագրում է Հովհաննես Մկրտչի քարոզչությունը և մկրտչական գործունեությունը:

Հիսուս նույնպես գալիս է մկրտվելու Հովհաննեսից (Գ 21): Մկրտությունից հետո երկինքը բացվում է, և Ս. Հոգին աղավնակերպ իջնում է Հիսուսի վրա, իսկ երկնքից մի ձայն ասում է. «Դու ես իմ սիրելի Որդին...» (Գ 22):

Իսկ ո՞վ էր Հիսուսը ժողովրդի աչքին: Ղուկասը պատասխանում է. «Եվ նա՝ Հիսուսը, երեսուն տարեկան էր, որի մասին կարծում էին, թե Հովսեփի որդին էր, որը և եղել է Հակոբի որդին, որը և՝ Հեղիի որդին...» (Գ 23):

Ուրեմն, ինչպես որ կարծում էր ժողովուրդը, Հիսուս Հովսեփի որդին էր: Մինչ Ղուկասը ցանկացել է ցույց տալ, որ իրականում նա Աստուծո Որդին է: Այդ նպատակով էլ, եթե Մատթեոսը իր առաջ բերած ծննդաբանության ցանկը հասցնում է մինչև Աբրահամ, ապա Ղուկասը այն հասցնում է մինչև Աստված. «... որը Մաթուսաղայի որդին էր, որը և Ենովքի, որը և Յարեդի, որը և Մաղաղիելի, որը և Կայնանի, որը և Ենովսի, որը և Սեթի, որը և Ադամի, որը և Աստուծո» (Գ 37—38):

Ծննդաբանության ցանկից անմիջապես հետո Ղուկասը շարունակում է. «Եվ Հիսուս, լի Սուրբ Հոգով, դարձավ Հորդանանից ....» (Դ 1):

Այս համարն արդեն անառարկելիորեն ցույց է տալիս, որ Ղուկասի հիշած ծննդաբանության ցանկը միջանկյալ մի տարր է Հիսուսի մկրտության պատմության մեջ:

Ինչպես նշել ենք արդեն, Ղուկասը Հիսուսի ծննդաբանությունը տանում է մինչև Ադամ և մինչև Աստված: Այսպիսով նա նպատակ է ունեցել ցույց տալ, որ Հիսուս ոչ միայն Իսրայելի, այլ նաև ողջ մարդկության փրկիչն է[1]: Այս գաղափարը արդեն շատ ներդաշնակ է Ղուկասի Ավետարանի ընդհանուր ոգուն[2]:

Մյուս կողմից, հավանաբար, Ղուկասը Հիսուսի ծննդաբանությունը մինչև Ադամ հասցնելով, ցանկացել է ցույց տալ Հիսուսին իբրև Երկրորդ Ադամ[3]:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1982 թվականի № Բ-ից:

[1] G. B. Caird, Saint Luke, London, 1979, p. 77.

[2] John Martin Creed, The Gospel according to St. Luke, London, 1960, p. 59.

[3] W. K. Lowther Clarke, Concise Bible Commentary, London, 1952, p. 752.

Ադամին կոչելով Աստուծո որդի՝ Ղուկասը մի կապ է հաստատում Հիսուսի մկրտության և աստվածային ստեղծագործության ծրագրի միջև: Մարդը ստեղծվել էր Աստծո հետ որդիական սերտ հարաբերության համար: Եթե առաջին Ադամը չկարողացավ պահպանել այդ հարաբերությունը, ապա երկրորդ Ադամը՝ Հիսուսը, վերահաստատեց այն[4]:

*
* *

Ղուկասի հիշած ծննդաբանության ցանկը պայմանականորեն կարելի է բաժանել չորս ժամանակաշրջանի.

1. Հիսուսից Զորաբաբել.
2. Սաղաթելից Նաթան.
3. Դավթից Աբրահամ.
4. Թառայից Աստված:

Վերջին՝ Աբրահամից մինչև Ադամ և Աստված բաժինը, հավանաբար, հիմնված է Ա Մնացորդաց Ա 1—4, 24—27 համարների վրա, ինչպես ցույց է տալիս հետևյալ համեմատությունը.

Ղուկաս Գ 34—38[5]

... որ Յակովբայն,
որ Իսահակայն,
որ Աբրահամու՛,
որ Թառային,
որ Նաքովրայն,
որ Սերուքայն,
որ Ռագաւայն,
որ Փաղեկայն,
որ Եբերայն,
որ Սաղային,
որ Կայնանայն,
որ Արփաքսադայն,
որ Սեմայն,
որ Նոյին,
որ Ղամէքայն,
որ Մաթուսաղային,
որ Ենովքայն՛,
որ Յարեդին,
որ Մաղաղայելին,
որ Կայնանայն,
որ Ենովսայն,
որ Սեթայն,
որ Ադամայն,
որ Աստուծոյն:

Ա Մնացորդաց Ա 1—4, 24—27[6]

Եվ որդիք Իսահակայ Եսաւ և Յակոբ
Եվ որդիք Աբրաամու՝ Իսահակ ....
Աբրամ,
Թառայ,
Նաքովր,
Սերուք,
Ռագաւ,
Փաղէկ,
Եբեր,
Սաղայ,
Կայինան,
Որդիք Սեմայ՝ Ելամ, Ասսուր և Արփաքսադ....
Որդիք Նոյի՝ Սեմ ....
Նոյ,
Ղամէք,
Մաթուսաղայ,
Ենովք,
Յարեդ,
Մաղաղայել,
Կայնան,
Ենովս,
Սէթ,
Ադամ,

Այստեղ պետք է նշել միայն, որ Ղուկաս Գ 36 համարում հիշված «Կայնան» անունը չկա Եբրայական բնագրի Ծննդոց ԺԱ և Ա Մնացորդաց Ա գլուխներում տեղ գտած ծննդաբանության ցանկերում, կա սակայն Յոթանասնից բնագրում: Հավանաբար նախօրոք եղել է Եբրայական բնագրում, ապա դուրս ընկել, թեև ոմանք կարծում են, թե այդ անունը Յոթանասնից տեքստ է ներմուծվել Ղուկասի համապատասխան համարի ազդեցության տակ[7]:

Դավթից մինչև Աբրահամ հատվածը գրեթե նույնն է Մատթեոսի հիշած ցանկի համապատասխան հատվածի հետ: Հետևաբար Ղուկասի ցանկի այս հատվածի համար ևս իբրև աղբյուր կարող են համարվել Մատթեոսի ցանկի համապատասխան հատվածի

[4] G. B. Caird, անդ, p. 77—78:

[5] Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Վաղարշապատ—1905 թ.:

[6] Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր Կտակարանաց, Վենետիկ—1860 թ.:

[7] Մեկնութիւն չորից Աւետարանաց, Կ. Պոլիս—1888, էջ 457:

աղբյուրները՝ Հռոմ Դ 18—21 և Ա Մնացորդաց Ա 34, Բ 1, 4—5, 9—15:

Այս հատվածի վերաբերյալ կարելի է նշել միայն, որ Ղուկասի ցանկում Արամ և Եսրովմ անունների միջև հայկական օրինակում և հունական մի շարք ձեռագրերում հիշվում են Ադմէ և Առնէ անունները. «....որ Արամայն, որ Ադմեայն, որ Առնեայն, որ Եսրովմայն....» (Ղուկ. Գ 33):

Հավանաբար այս երկու անունները Ղուկասը վերցրել է հրեական ավանդությունից, իսկ հետագայում Նոր Կտակարանի խմբագիրները դուրս են հանել ցանկից՝ Ս. Գրքում դրանց անունների բացակայության հետևանքով:

Հովսեփից մինչև Դավիթ հիշված անունները, բացի Սաղաթելից և Զորաբաբելից, անծանոթ են: Այստեղ կա, սակայն, մի հետաքրքիր երևույթ: Մինչ Մատթեոսը Դավթից սկսած հետևում է Սողոմոնի ճյուղին, իսկ Ղուկասը՝ Նաթանի, այս երկու ցանկերը միանում են դարձյալ Սաղաթիել և Զորաբաբել անուններով (Մատթ. Ա 12, Ղուկ. Գ 27) և ապա կրկին բաժանվում՝ նորից միանալու համար Հովսեփով (Մատթ. Ա 16, Ղուկ. Գ 23):

Կարծվում է, թե Սողոմոնի տոհմը մարել է Հովսիայի որդի Հեքոնիայով, համաձայն Երեմիա մարգարեի անեծքի (ԻԲ 28, 30, ԼԶ 30—31), և թե Նաթանի տնից Սաղաթիելը, իբրև գահաժառանգ, իր որդիների հետ համարվեցին Հեքոնիայի որդիներ, համաձայն հրեական օրենքի (Թվոց ԻԵ 8—11)[8]: Կարծվում է նաև, որ այս երկու անունների նույնությունը պարզ զուգադիպություն է[9]:

Եզրափակելով, կարծում եմ ավելորդ չի լինի տալ Մատթեոսի և Ղուկասի ցանկերի համեմատական տախտակը.

ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Ըստ Մատթեոսի	Ըստ Ղուկասի	Ըստ Մատթեոսի	Ըստ Ղուկասի
	Աստված	—	Առնէ
	Ադամ	—	Ադմէ
	Սէթ	Արամ	Արամ
	Ենովս	Ամինադաբ	Ամինադաբ
	Կայնան	Նաասովն	Նաասովն
	Մաղաղայել	Սաղմովն	Սաղման
	Յարեդ	Բոոս	Բոոս
	Ենովք	Ովբէդ	Ովբեդ
	Մաթուսաղա	Յեսսէ	Յեսսէ
	Ղամեք	Դաւիթ	Դաւիթ
	Նոյ	Սողոմոն	Նաթան
	Սեմ	Ռոբովամ	Մատտաթա
	Արփաքսադ	—	Մէննա
	Կայնան	Աբիա	Մեղթա
	Սաղա	—	Ակեկիմ
	Եբեր	Ասափ Ասա	Յովնամ
	Փաղեկ	Յովսափատ	Յովսէփ
	Ռագաւ	—	Յուդա
	Սերուք	—	Սիմեոն
	Նաքովր	—	Ղեւի
	Թարա	—	Մատթէս
Աբրահամ	Աբրահամ	Յովրամ	Յովրամ
Իսահակ	Իսահակ	Ոսիա	Եղիազար
Յակոբ	Յակոբ	Յովաթամ	Յեսու
Յուդա	Յուդա	Աքազ	Եր
Փարէս	Փարէս	Եզեկիա	Ելմոդադ
Եզրովմն	Եսրովմ	Մանասէ	Կովսամ
		Ամովս	Ադդէ
		Յոսիա	Մեղքի
		Յեքոնիա	Ների
		Սաղաթիէլ	Սաղաթիէլ

[8] Անդ, էջ 3—4:

[9] Π. Ν. ΤΡΕΜΠΕΛΑ, Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Λουκᾶν Εὐαγγέλιον, Ἀθῆναι, 1972, σ. 143—144.

Ըստ Մատթեոսի	Ըստ Ղուկասի	Ըստ Մատթեոսի	Ըստ Ղուկասի
Զորաբաբել	Զորաբաբել	—	Ամովս
—	Ռեսէ	Եղիոդ	Մատթէս
Աբիոդ	Յովնան	—	Յովսէփ
—	Յովդա	Եղիազար	Յաննէս
Եվիակիմ	Յովսէք	—	Մեղքի
—	Սեմէի	—	Ղեւի
Ազովր	Մատաթիա	Մատթան	Մատաթ
—	Մատթէս	—	Հեղի
Սադովկ	Նանգէս	Յակոբ	Յակոբ
—	Եսղէս	Յովսէփ	Յովսէփ
Աքին	Նաւում	Յիսուս	Յիսուս

Հիսուսի ծննդաբանության ցանկերի հետ կապված զանազան հարցերի անդրադարձել են նաև միջնադարյան հայ մեկնիչները, Ավետարանի իրենց մեկնություններում:

Ստորև ներկայացնում ենք երեք անտիպ երկերի համապատասխան հատվածները:

1.—Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից Աւետարանացն»

Երևանի Մատենադարանի ձեռագիր № 5551, էջ 224ա—224բ.

224ա **Գիրք ծնընդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի.** (Մատթ. Ա 1) «Գիրք լինելութեան» ասեն հերձուածողք. այնոքիկ, որ ասենն, եթէ ոչ էր մշտնջենաւորակից Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, Հաւր՝ գոյացութեամբ, այլ եղեալ ասեն, և սկիզբն առ ի Մարիամա: Իսկ մեք ոչ այդպես, այլ «գիրք լինելութեան» ասեմք զլինելութեանն, որ յաղագս մերոյ փրկութեանն եղև մարդ և նմանեցաւ մեզ ամենեիմբ, բայց ի մեղաց:

Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարա. (Մատթ. Ա 3) Աբրահամ ծնաւ զԻսահակ ի Սառաէ, Իսահակ ծնաւ զՅակովբ ի յՌեբբեկայէ,

Յակովբ ծնաւ զՅուդա ի Լիաէ*,

բայց լռեաց զայլոցն մարս, և ասաց յիշելով զԹամար, եթէ «Յուդա ծնաւ զՓարէս ի Թամարայ»: Առ այս խնդիր ասեմք նախկին, եթէ յիշելն զԱբրահամն, յիշեաց և զՍառայ, վասն զի Աբրահամ և Սառա մի մարմին էին, և Իսահակ և Ռեբեկայ նոյնպէս մի մարմին էին, իսկ Յուդա և Թամար ոչ էին մի մարմին, քանզի պոռնիկ համարեցաւ զԹամար Յուդաւ: Վասն այսորիկ յիշեաց աւետարանիչդ զԹամար, նոյնպէս և զԲերսաբէէ և զՌահաբ պոռնիկն և զՀռութ Մովաբացի, զի ցուցցէ, թէ ի բալում և յասքննին մարդասիրութենէ և պոռնկաց որդի արժանաւորեսցի կոչել. և զպոռնիկս և զայլ ազգիս մարս անուանէ:

Յովրամ ծնաւ զՈզիա, Ոզիա ծնաւ զՅովաթամ. (Մատթ. Ա 8).

Գրեալ է ի չորրորդ թագաւորութեանն. «Յովրամ ծնաւ զՈքոզիա[1], որոյ վախճանեալ[2], դուստր Յովրամա թագաւորի առեալ զՅովսափատ

---

* Ձեռագրում իբրև Մատթեոսի ավետարանի հատված բերված է հետևյալը. «Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարա, Աբրահամ ծնաւ զԻսահակ ի Սառաէ, Իսահակ ծնաւ զՅակովբ ի յՌեբբեկայէ, Յակովբ ծնաւ զՅուդա ի Լիաէ» (Ա 3 և 2): Նույնությամբ պահպանել է նաև Գարեգին կթող. Հովսեփյանը իր հրատարակության ժամանակ, ըստ Մեսրոպ վրդ. Գրիգորյանի (տե՛ս Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ, 1958, էջ 52):

Ճիշտ կլինի, սակայն, ավետարանական հատված համարել միայն «Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարա», իսկ մնացյալը վերագրել Ստեփանոս Սյունեցուն:

[1] Դ Թագ. Ը 25, [2] Դ Թագ. Թ 27:

եղբայր Ոքոպիա, գողացաւ զՅովաս** (իմա՝ դուստր Յովրամայ թագաւորի Յովսաբեթ՝ քոյր Ոքոպիայ, առեալ գողացաւ զՅովաս—Ե. ք. Պ.)[3], որ թագաւորեաց[4], յետ որոյ որդի նորա Ամասիաս[5], յետ նորա որդի նորա Ազարիաս[6]»: Արդ խնդիր է ըստ անուանց երից թագաւորացդ***:

293ա **Եւ ինքն Յիսուս ամաց էր որպէս երեսնից սկսեալ, որդի Յովսեփայ, որպէս կարծիւր, որ Հեղին, Մատաթեին.** (Ղուկ. Գ 23)

Մաթեոս զՅակովբոս ասէ հայր Յովսեփայ, իսկ Ղուկաս զՀեղի: Այդ ասելի է, եթէ երկոցունց որդի էր Յովսէփ. Յակովբոսի՝ բնութեամբ եւ Հեղեա՝ որդեգրութեամբ: Հեղի և Յակովբ եղբարք էին, ոչ ի միոջէ հաւրէ, այլ ի միոյ մաւրէ: Եւ ի վախճանելն Հեղեա առանց զաւակի, զկինն Հեղեա առ Յակովբ, զի յարուցէ զաւակ եղբաւր իւրոյ, ըստ հրամանի Մովսեսի: Արդ առեալ Յակովբա զկին եղբաւր իւրոյ Հեղեա, ծնաւ զՅովսէփ: Արդ է Յովսէփ որդի Յակովբայ բնութեամբ եւ Հեղեա՝ ըստ հրամանին Մովսեսի: Եւ ի գրել Մաթեոսի զկարգ ազգահամարին զբնութեամբ հայրն ասաց:

293բ Իսկ Ղուկաս ըստ աւրինացն Մովսեսի եւ ի վերջնումն սկսեալ վերաբերէ

** «դուստր Յովրամա թագաւորի առեալ զՅովսաւիատ եղբայր Ոքոզիա, գողացաւ զՅովաս»—նախադասությունը, ամենայն հավանականությամբ, մեկ է հասել աղավաղված ձևով: Ս. Գրքի վկայությունների համաձայն Յովսափաթը եղել է Յովրամի հայրը և Ոքոզիայի պապը (Գ Թագ. ԻԲ 51, Դ Թագ. Ը 6 և այլն), մինչդեռ Յովրամի որդի Ոքոզիան Յովսափաթ անունով եղբայր չի ունեցել: Դ Թագավորաց գրքում համապատասխան հատվածը հետևյալն է. «Եւ Գոթողիա մայր Ոքոզիայ, ետես եթէ մեռան որդիք նորա, կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն: Եւ առ Յովսաբէէ՝ դուստր արքայի Յովրամայ քոյր Ոքոզիայ՝ զՅովաս զորդի Ոքոզիայ, և գողացաւ զնա ի միջոյ որդւոց արքայի սպանելոցն .... և թաքոյց զնա յերեսաց Գոթողիայ եւ ոչ մեռաւ» (ԺԱ 1—2): Այս խնդրի լուծման համար, սակայն, անհրաժեշտ է նաև մեջբերել Բ Մնացորդաց գրքում տեղ գտած նույն պատմության համապատասխան հատվածը, որը հետևյալն է. «Եւ Գոթողիա մայրն Ոքոզիայ՝ ետես թէ մեռաւ որդին նորա, յարեաւ և կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն ի տանն Յուդայ: Եւ առ *Յովսաբեթ* դուստր արքայի զՅովաս որդի Ոքոզիայ, եւ գողացաւ զնա ի միջոյ որդւոցն արքային կոտորելոցն.... եւ թաքոյց զնա *Յովսաբեթ* դուստր արքային Յովրամայ՝ քոյրն Ոքոզիայ կին Յովիդայեայ քահանայի, եւ ծածկեաց զնա յերեսաց Գոթողիայ» (ԻԲ 10—11): Ինչպես նկատեցինք արդեն, Բ Մնաց. ԻԲ 10—11 համարներում Յավրամ թագավորի աղջկա անվան համար օգտագործված է «Յովսաբեթ» ձևը:

Հետևաբար «դուստր Յովրամա թագաւորի առեալ զՅովսաւիատ եղբայր Ոքոզիա, գողացաւ զՅովաս» հատվածի ճշիտ ընթերցումը կլինի «դուստր Յովրամայ թագաւորի Յովսաբեթ, քոյր Ոքոզիայ, առեալ գողացաւ զՅովաս»:

[3] Դ Թագ. ԺԱ 2, հմմտ. Բ Մնաց. ԻԲ 11, [4] Դ Թագ. ԺԱ 21, [5] Դ Թագ. ԺԲ 21, [6] Դ Թագ. ԺԴ 21:

*** Մատթեոսի Ավետարանի Հիսուսի ծննդաբանության ցանկի համաձայն Յովրամը ծնում է Ոզիային, Ոզիան՝ Յովաթամին, մինչ ըստ Դ Թագավորաց գրքի տվյալների Յովրամը ծնում է Ոքոզիային, Ոքոզիան՝ Յովասին, Յովասը՝ Ամասիային, Ամասիան՝ Ազարիային, Ազարիան՝ Յովաթամին (Դ Թագ. ԺԵ 7):

Ինչպես նկատելի է, Մատթեոսը չի հիշում 3 անուն: Ստեփանոս Սյունեցու շարադրանքից այնպես է թվում, թե այդ անունները պետք է լինեն Յովասը, Ամասիան և Ազարիան, և թե Ոզիան նույն Ոքոզիան է:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ազարիան Բ Մնացորդաց ԻՁ 1—3 համարներում կոչվում է Ոզիաս: Ազարիան Ոզիա է կոչվում նաև Եսայի Ա 1, Ամոս Ա 1, ինչպես նաև Եբրայական տեքստի Դ Թագ. ԺԵ 13 համարում, այն դեպքում, երբ նույն Եբրայական տեքստի Դ Թագ. ԺԵ 8 և 17 համարներում այս անձը կոչվում է Ազարիա անունով:

Այս ամենը ենթադրել են տալիս, որ Ամասիայի որդին ունեցել է երկու անվանումներ՝ Ազարիա և Ոզիա, և որ Մատթեոսը Ոզիա ասելով հասկացել է ոչ թե Յովրամի որդի Ոքոզիային, այլ Ամասիայի որդի Ազարիա-Ոզիային:

վաղգահամարութիւնն ի Յովսեփայ ի Դաւիթ, եւ յԱբրահամա յԱդամ եւ յԱստուած:

2.—**Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու»**
Երևանի Մատենադարանի ձեռ. հմր. 5591, էջ 61ա—62ա

9ա **Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից** (Ղուկ. Գ 23)

Ընդէ՞ր Յիսուս երեսնամեայ մկրտեցաւ եւ ոչ ըստ որոյ այժմ ի նա հաւատացեալք: Վասն՝ կի կթլպատութիւնն ի տղայական հասակին ըստ աւրինացն կատարեաց, առ ի ցուցանել թէ իւր են տուեալ աւրէնքն, եւ ինքեամբ ելից եւ չէ հակառակ աւրինացն: Վասն որոյ թողու կմկրտութիւնն մինչև յերեսուն ամն. կի կԱդամ յայնպիսում ստեղծ հասակի՝ որ ի ձեռն մեղաց ապականեցաւ: Բայց կի դարձեալ կանապականութիւն և կանմահութիւն վերստին ծննդեամբն էաք ժառանգելոց: Վասն այնորիկ եւ ի նմին ժամանակի եւ ի հասակի մկրտի: Իսկ հաւատացեալք ոչ մկրտին երեսնամեայ վասն .գ. սյատճառի: Նախ կի կբնութիւն տղայոցն յոյժ տկար է, շուտով կարէ մեռանիլ և կորնչի առանց մկրտութեան: Վասն այնր պարտ է շուտով մկրտել: Իսկ որք յապաղեն եւ ոչ մկրտեն՝ ծնողքն, թէ քահանայք եւ թէ այլք, մահու չափ մեղանչեն: Դարձեալ վասն փոյթութեանն սատանայի պարտ է շուտով մկրտել, որ սատանայ վնաս չառնէ հոգւոյն կամ մարմնոյն: Դարձեալ, կի տղայութիւնն դիւրաւ մտանէ յիրս ինչ եւ հաստատագոյն տպաւորի ի նմա ամենայն գործ բարեպաշտութեան:

Սկսեալ լինել (Ղուկ. Գ 23)

Մարմնովն ընդ ժամանակաւ մտեալ ի մարէ, եւ ունի կանժամանակն ի հարէ:

Որպէս եւ կարծէր (Ղուկ. Գ 23)

Յայնցանէ, որք ոչ էին տեղեակ խորհրդոց նորա թէ որդի .... Յովսեփայ:

Որ Հեղեայն, որ Մատաթայի (Ղուկ. Գ 23)

Ղուկաս կՀեղի ասէ Հայր Յովսեփայ և Մատթէոս կՅակովբ:

Սա. Արդ՝ ասելի էր թէ երկոցունցն որդի է Յովսէփ, Յակովբայ՝ բնութեամբ, եւ Հեղեայ՝ որդեգրութեամբ: Հեղի և Յակովբ եղբարք էին, ոչ ի միոջէ հարէ, այլ ի մի մարէ: Հեղի անորդի մեռանի եւ կկինն Հեղեայ առ Յակովբ, կի յարուցէ կաւակ եղբարն իւրոյ, ըստ աւրինացն: Ծնաւ կՅովսէփ: Արդ՝ Յակովբայ բնութեամբ որդի է Յովսէփ եւ Հեղեայ՝ ըստ հրամանին Մովսէսի[1]: Որպէս յառաջիկայդ շարագրէ Աւետարանիչն Ղուկաս. «Որ Յակովբայն, որ Հեղեայն, որ Մատաթեայն, որ Ղեւեայն....

61բ որ Կայնանայն, որ Ենովսայն, որ Սեթայն, որ Ադամայն, որ Աստուծոյն»:

Ի վերջնումն սկսեալ բերէ կաղգահամարն ի Յովսեփայ ի Դաւիթ եւ յԱբրահամ եւ յԱդամ եւ յԱստուած:

Իպ. Իսկ Ղուկաս ի հոգեւոր ծննդենէն կարգէ կաղգահամարն եւ գրէ կշնորհաւք որդիսն, եթէ եղաք մեք հոգեւոր ծննդեամբ որդիք Աստուծոյ: Իսկ Մատթէոս աւետարանիչն թուէ յԱբրահամէ մինչեւ ի Քրիստոս, կի ի նոցա կաւակացն ծնանելոց է Քրիստոս: Մատթէոս կՍողոմոն ասէ, ի Սողոմոնէ ի Մարիամ գայ, ըստ բանի հրեշտակին. «Յովսէփ, որդի Դաւ-

[1] —Հմմտ. Ստեփանոս Սյունեցի «Մեկնութիւն չորից աւետարանչացն» Երևանի Մատենադարանի ձեռ. հմր. 5551, էջ 293ա:

թի, Մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո» (Մատթ. Ա 20): Եւ Ղուկաս զՆաթան ասէ, զի ի նմանէ իջանէ յազգն Յովսէփ[2]:

Կր. Ընդէ՞ր Մատթէոս առընթեր ծննդեանն Քրիստոսի դնէ, իսկ Ղուկաս՝ առընթեր մկրտութեանն: Մատթէոս վերուստ ի վայր թուէ զազգն, իսկ Ղուկաս ներքուստ ի վեր: Քանզի Մատթէոս զխոնարհումն յերկնից ի յերկիր ի ձեռն ծննդաբանութեանն բացայայտէ, իսկ Ղուկաս առընթեր մկրտութեանն կարգէ զազգն՝ ներքուստ ի վեր թուէ, զի որպէս ի ձեռն Ադամայ յանցանացն ի ստորեւս անկանք բնակութիւն, այսպէս եւ Քրիստոսի մկրտութեամբն դարձեալ վերստին դարձաք յերկինս: Որպէս Ադամ ի ձեռաց Աստուծոյ ստեղծեալ զդրախտն ընկալաւ բնակութիւն, այսպէս եւ մեք ի Քրիստոս մկրտեալք, վերեստին ժամանեցաք ի դրախտն:

ՍՄ Այլ եւ զայս պարտ է գիտել, զի որպէս աւետարանիչն Ղուկաս ի յայտնութենէ Հոգւոյն Աստուծոյ արար զպատմութիւն նախահարցն: Նոյնպէս ասեն վարդապետք ի ժամ մկրտութեանն

62ա Քրիստոսի, յորժամ տեսին զբացումն երկնից, զհայրական զձայնն, զաղաւնակերպ իջումն հոգւոյն, եւ հիացեալ զարմանային, թէ այս որդի աղագաւ եղեւ: Եւ ի Հոգւոյն Աստուծոյ շարժեալք ասեն, թէ վասն որդւոյն Յովսեփայ, որ Յակովբայն է որդի: Եւ հարցանելով մի զմի տարեալ հասուցին ի յԱդամ եւ ի ստեղծաւղն Ադամայ՝ ծնունդ գոլ բնութեամբ զՅիսուս Քրիստոս կուսածին մարմնովն Աստուծոյ հաւր իսկապէս: Զի բնութեամբ Որդին Աստուծոյ եկն եւ եղեւ բնութեամբ որդի Կուսին: Եւ բնութեամբ որդի կոսին եղեւ բնութեամբ որդի Հաւր Աստուծոյ: Վասն զի զանխառնելի աստուածութիւնն խառնեալ միացոյց ի բնութիւնս մեր անշփոթապէս: Եւ զբնութիւնս մեր առեալ միացոյց յաստուածութիւն իւր անճառապէս:

3.—Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Մատթէի»

Երևանի Մատենադարանի ձեռ. № 1300, էջ 27բ—30բ

27բ .... Դարձեալ ասելն «գիրք», այսինքն պատմութիւն կամ սկիզբն կամ նկար և այլն, զոր .կ. մտօք է իմանալ:

Նախ զի «գիրքն» պատմութիւն ասի, զի պատմագրէ մեզ զմարդեղութիւն Բանին Աստուծոյ և զայլ տնօրէնութիւնսն:

Բ. Սկիզբն ծննդեան:

Գ. Նկար և գաղափար ծննդեան:

դ. Որպէս ի գրոյն յառաջ գայ բան և խօսք ի յօգուտ մարդկան, սոյնպէս և յաւետարանէս յառաջ գայ բան և պատուէր՝ փրկութեան մարդկան:

ե. Օրինակաւ տայ իմանալ, մեզ զանճառ միութիւնն Քրիստոսի, զի որպէս գիրն յերից միացեալ, այսինքն՝ բանն և մելանն և քարտէզն, նոյնպէս և յերից միացեալ ասի մի Քրիստոս, այսինքն Բանն Աստուած

28ա առեալ զմերս մարդկային բնութիւն՝ մարմին զգալի և հոգի իմանալի:

զ. Ասելով «գիրք» ցուցանէ մեզ զճշմարտութիւն բանիցն: Զի գրեն քերել և պարզել ասի: Այսպէս անկեղակարծ իմացիր զստուգութիւն բանիցս որ ի սմա:

Հարց. Վասն է՞ր բալմատրական դնէ «գիրք» և ոչ «գիր ծննդեան»:

Պատասխան. Երեք ունի իմացումն: Նախ ցուցանէ թէ պատմութիւնս այս ոչ միայն ծնընդեան է, այլ և մկրտութեան և նշանաց, և խաչի

[2] —Հմմտ. Իգնատիոս Սկեռնցու «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու», Կ. Պոլիս—1824, էջ 109:

և թաղման և յարութեան և հաւիրարձման և միւսանգամ գալստեան և կատարածի աշխարհի և այլն:

բ.—ասէ «գիրք» ցուցանէ, թէ ոչ միայն ես ճառեմ զծնունդն Քրիստոսի, այլ ընդ իս են բազումք համախոհ ինձ, այսինքն մարգարէքն, որ գուշակեցին զծնունդն յառաջագոյն ժամանակաւ:

գ.—զի ասէ «գիրք» իմանալ տայ մեզ զայլ իմն ծնունդ Բանին: Եւ ասի վեց յեղանակաւ: Նախ՝ ասի ծնունդ Բանին յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ, անճառ և անպատում ըստ այնմ. «յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ» (Սաղմ. ՃԹ 3): բ.—Զիջումն Բանին յարգանդ կուսին, ըստ հրեշտակին. «որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն սրբոյ է» (Մատթ. Ա 20): գ.—ծնունդն ի յերկրի կատարելապէս մարդ ըստ բնութեան մերում: դ.—Մկրտութիւնն Յովհաննու զի օրինադրեաց մեզ վերստին ծնունդ. ե.—Որ ի կոյս գերեզմանէն՝ վիմովն կնքելով յարեաւ: զ.—Զի ծնանի ի սիրտս հաւատացելոց ըստ Պօղոսի. «փորձ ունիք զՔրիստոսի, որ ինն ընդ ձեզ խօսի» (Բ Կորնթ. ԺԳ 3): Եւ Աստուածաբանն ասէ. «կանայք կոյս լերուք, զի Քրիստոսի լինիցիք մարք»: Եւ դարձեալ ինքն ասէր՝ պատուիրանապահողացն: Ես և հայր առ նա, և Օթևանս առ նմա արասցուք, [եւ դարձեալ ասէ. «գիրք», այսինքն պարարտ և լի ամենայն հոգևոր իմաստութեամբ և պարարտացուցիչ և փափկացուցիչ հոգոյ և զուարթարար մըտաց]*:

հց. Վասն է՞ր Յիսուս Քրիստոս:

պխ. Յիսուս Քրիստոսն աստուած և մարդ միացեալ ցուցանէ: Զի Յիսուսն փրկիչ և Քրիստոսն Օծեալ լսի: Զի էօծ զմարդկութիւնն աստուածութեամբն և մարմնովն փրկեաց զմեզ: Դարձեալ, Յեսու՝ որդին Նաւեա կոչիւր, այլ ոչ էր օծեալ

28բ եւ Յեսու Յովսեդեկանց քահանայ էր օծեալ, այլ ոչ որդի Դաւթի: Եւ զի յատկասցի ի նոցանէ, ասէ. «Յիսուս Քրիստոս՝ որդի Դաւթի»:

հց.—Վասն է՞ր նախ զԴաւիթ յիշէ և ապա զԱբրահամ:

պխ.—Վասն .դ. պատճառի: Նախ՝ զի Աբրահամ հնութեամբն որպէս մոռացեալ թուի եւ Դաւիթ մօտաւոր յամենեցունց բերան կայր:

բ.—Զի մարգարէքն զնա որդի Դաւթի կոչէին, թէ Դաւիթ գալոց է և Դաւիթ յառնելոց: Որպէս քահանայապետքն և դպիրքն առ Հերովդէս. թէ յայզէ Դաւթի և ի Բեթղէէմ գեղջէ գալոց է Քրիստոսն: Եւ կոյրքն «որդի Դաւթի» աղաղակէին: Եւ մանկունքն «ովսաննայ» երգէին յանուն նորա:

գ.—Զի թագաւորն պատուով և զօրութեամբ առաջին է, թէպէտ ժամանակաւ ըստ կարգի վերջին հանդիպի:

դ.—Զի ըստ կարգի ի վեր կու ընթանայ յԱբրահամ, որպէս Ղուկաս և անտի թուելով ցուցանէ, թէ որպէս եղև Քրիստոս որդի Աբրահամու և Դաւթի և կատարումն աւետեաց նոցին:

հց.—Վասն է՞ր զայնպիսի զաւիր գործս յիշէ աւետարանն:

պխ.—Վասն դ. պատճառի: Նախ՝ ցուցանէ թէ չէ ամօթ նախնեացն չարիս բարի զաւակաց, այլ անձին առաքինութիւն:

բ.—Եւ ոչ բարութիւն նախնեացն օգուտ է չար զաւակաց, այլ անձին առաքինութիւն:

գ.—Զի հրեայքն յԱբրահամ պարծէին, շիջուցանէ զհպարտութիւն նոցա, որ այսպիսի էին նախնիքն:

դ.—Ցուցանէ թէ ամենեքեան ընդ մեղօք էին, որպէս նոքա, և նախնիքն: Ապա հարկ էր գալ Քրիստոսի և արդարացուցանել: Ամինադաբի սպարապետ էր ցեղին Յուդայի, յորժամ ընդ ծովն էանց: Եւ նաս-

*—լուսանցքում

սուն իշխան եղև յանապատին և Սաղմոն՝ յորժամ ընդ Յորդանանն անցին, առաջնորդ էր ցեղին Յուդայի:

29ա Թէ որպէ՞ս խառնեցան ցեղքն.

հց.—Քանի՞ անգամ երկու ցեղքն խառնեցան:

պխ.—Մինչ ի Քրիստոս .գ. անգամ. նախ՝ կդուստր Ամինադափայ, որ քոյր էր Նայասոնի, Եղիսաբեթ անուն, էառ Ահարոն և ծնաւ ի նմանէ զՆաբաթ և զԱբիհուտ, զԵղիազար եւ զԻթամար: Եւ աստ խառնեցան երկու ցեղքն: Եւ երկրորդ անգամ. կդուստրն Յովրամայ՝ Յովսաբեթ անուն, էառ Յովիդայ քահանայ և խառնեցան երկու ցեղքն: Եւ երրորդ անգամ Յովակիմ՝ յազգէ Յուդայ, էառ զԱննայ՝ դուստր Մատթան քահանայի, ուստի ծնաւ Մարիամ՝ մայր տեառն: Զի ծնեալն ի նմանէ Քրիստոս ըստ մարմնոյ լիցի թագաւոր և քահանայ յաւիտեան:

Վասն պոռնիկ կանանցն.

հց.—Վասն է՞ր յիշէ զչորս պոռնիկ կանայքն:

պխ.—Որպէս չորս պոռնիկ կանայքն որ շարժեցան յամահաւատութենէ և յօրինութեան ազգն թուեցան, այսպէս և մեք չորիւք շարժմամբ թվեցաք ի յօրինութեան գիրն կենդանի, այսինքն ի բնաւորականէն ի գրաւորն և ի գրաւորականէն ի շնորհականն, որ է մարգարէիցն պատուէրք, և անդի յաւետարանն: Դարձեալ ի բնականէն ի գրաւորն և անդի յաւետարանս և աստի յաւիտենականն: Դարձեալ մեզ յոյս փրկութեան տայ: Զի նոքա պոռնիկք և հեթանոսք էին, վասն առաքինութեան գովեցան: Եւ զԲերսաբէ ոչ յիշէ յանուանէ, զի կամակից եղև առն սպանման: Ի ժամանակս Սադովկայ արքայի, եկն Աղեքսանդր Մակեդոնացի Երուսաղէմ, բայց ի տաճարն ոչ եմուտ և ոչինչ վնասեաց: Աքին թագաւոր: Ի սորա ժամանակս Սիրաք իմաստուն երևեցաւ:

Վասն Ազգին Յովսեփայ.

հց.—Վասն է՞ր Մաթէոս և Ղուկաս այլ և այլ տան վանուանս ի յազգահամարին:

պխ.—Սաղովմոն և Նաթան Որդիք էին Դաւթի, և Մատթէոս Սաղովմոնէ թվէ զծնունդն, իսկ Ղուկաս ի Նաթանայ տանի ի Դաւիթ: Եւ այսպէս է վանականութիւն երկուցն. Ոմն՝ քսաներորդ չորրորդ ի թոռանցն Սաղովմոնի՝ Մատթան անուն, առնու կին ի նմին ազգէ, որում անուն էր

29բ Ասթան. յորմէ ծնաւ որդիս ըստ բնութեան զՅակովբ: Եւ մեռեալ յատթանայ, առնու զկին նորա Մելքի ոմն ի թոռանցն Նաթանայ երեսներորդ եօթներորդ լեալ՝ ծնանի զՅեղի: Որով լինին Յակովբ եւ Հեղի եղբարք միմեանց համամարք, այլ ոչ համահարք, զի Յակովբ ծնունդ է Մատթանայ որ ի Սողոմոնէ, և Հեղի որդի Մելքեա, այն որ ի Նաթանայ: Եւ առ Հեղի կին և մեռաւ անորդի: Եւ առեալ զնա Յակովբ յարուցանել եղբաւր իւրում զաւակ: Եւ ծնաւ ի նմանէ զՅովսէփ զխօսն այրն Մարիամու: Արդ է Յովսէփ բնութեամբ որդի Յակովբայ, որ ի Սողոմոնէ, զոր Մաթէոս թուէ, և ըստ աւրինացն որդի անուանեալ Հեղեա, որ ի Նաթանայ, զոր Ղուկաս պատմէ: Եւ այս էին պատճառ կարծեցեալ անմիաբանութեան երկոցունցն:

Ազգաթիւ Աւետարանացն.

հց.—Վասն է՞ր Մաթէոս յետ ծննդեանն և Ղուկաս յետ մկրտութեանն թուէ զազգս:

պխ.—Մաթէոս զբնութեամբ որդիսն թուէ և Ղուկաս զշնորհօք: Եւ կրկին է շնորհօք որդին, մին որ կենդանի եղբայրն զաւակ ծնանի յանուն

մեռելոյն, և պայս ի բալում տեղի դնէ Ղուկաս, և մին որ շնորհօք որդիք Աստուծոյ կոչիմք: Եւ պայս ցուցանէ Ղուկաս յորժամ ասէ. «որ Աղամայն, որ Աստուծոյն»: Արդ՝ մեք ծննդեամբ լինիմք որդիք հարցն մերոց և մկրտութեամբ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ:

Դարձեալ յետ ծննդեանն՝ ասէ. զի վերկրաւոր ազգատոհմն նորա պատմէ. զԴաւիթ և զԱբրահամ: Եւ Ղուկաս յետ մկրտութեանն, զի վերկնաւոր ազգատոհմն նորա ծանուցանէ. զՀայր և զՀոգին փառակից և էակից:

հց.—Ընդէ՞ր Մաթէոս զազգաթիւդ յերիս չորեքտասանս բաժանէ և ի վերջինն՝ զՔրիստոս:

պխ.—Ասէն այսմ .Ե. պատճառ: Նախ՝ Զի ցուցցէ մեզ վերիս կարգ առաջնորդութեանն հրէից որ եղեն յԱբրահամէ մինչ ի Դաւիթ՝ Դատաւորք, ի Դաւթայ ի գերութիւնն բաբելացւոց՝ թագաւորք, իսկ անտի մինչ ի Քրիստոս՝ քահանայք: Զի ունէր Քրիստոս զկարգեալ իշխանութիւնքս Յինքն բովանդակեալ:

բ.—Զի որպէս մինչ ի Դաւիթ խոտեցան դատաւորքն, այսպէս և յետ գերութեանն՝ թագաւորքն: Եւ ի ձեռն Քրիստոսի ծննդեանն խոտեցան և քահանայքն: Եւ եղեւ Քրիստոս քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ մուտ ի ներքին կողմն վարագուրին:

30ա

գ.—Զկատարելութիւն հին օրինացն այսու յայտ առնէ, զի .Ժ. թիւն նշանակէ զտասնաբանեան օրէնս եւ .դ. ն՝ զաւետարանն՝ կատարումն տասանցն որպէս ասէր. «ոչ եկի լուծանել, այլ լնուլ զարէնսն և զմարգարէսն» (Մատթ. Ե 17):

դ.—Զի որպէս մի՝ յերից չորեքտասան թուոցն Քրիստոս էր, նշանակէ զմի յերից անձնաւորութեանցն՝ զԲանն եղեալ մարդ ճշմարտապէս:

ե.—Չորեքտասն լուսինն բոլորէ և մխիթարիչ գիշերոյ: Գիշէր էր յառաջ քան զՔրիստոս ժամանակն: Եւ լուսին՝ օրէնքն, և աստեղք՝ մարգարէքն: Մինչ ի Մարիամ եկն չորեքտասան մինչ ի թագուհին երկնից: Զի իմաստունք զլուսինն տիկին երկնից ասեն: Եւ կոյսն սուրբ չորեքտասանամեայ աւետեաց զլոյսն ընկալաւ. և հնգետասանամեայ ծնաւ «զարեգակն արդարութեան» (Մաղ. Դ 2) ըստ Մաղաքիայ: Վասն այն ասէ Մաթէոս թէ մինչ ի Քրիստոս է չորեքտասանն, իսկ յայնմ հետէ տիւ է արեգակամբն և ծածկեցաւ օրէնք լուսնին:

հց —Վասն է՞ր Մաթէոս զազգահամարն ի վերուստ թուէ. և Ղուկաս ի ներքուստ:

պխ.—Վասն .դ. պատճառի: Նախ՝ զի Մաթէոս հրէիցն գրէր զաւետարանն, զնոցա նահապետսն թվէ մինչ ի Քրիստոս, որ կատարումն էր աւետեացն: Իսկ Ղուկաս հեթանոսաց գրէր, յիշատակէ զբոլոր բնութեանս նահապետսն մինչ ի յԱդամ. և յԱստուած, զի շնորհօք որդիացաք Աստուծոյ:

բ.—Մաթէոս ի վերուստ ցուցանէ զխոնարհութիւն իջման բանին յերկիր, և Ղուկաս զբնութեանս վերելումն յերկինս:

գ.—Մաթէոս նշանակէ զանկումն բնութեանս, իսկ Ղուկաս՝ զելումն ի վեր, ուր էր զառաջինն, գեղեցիկ իմն խորհրդով: Զի որպէս ստեղծեալ ձեռօքն Աստուծոյ բնութիւնս մեր էր ի վայելչագոյն փառս, որպէս վայել էր ձեռագործի Աստուծոյ: Սապէս և ի ձեռն վերստին ստեղծմանս հոգւովն կենդանարար ճանապարհորդեսցուք զդարձն ի վեր ի տեղի վայելուչ, զոր «պատրաստեալ է յԱստուծոյ սիրելեաց իւրոց» (Ա Կորնթ. Բ 9), ըստ առաքելոյ:

Ս. ԽՈՐՎԻՐԱՊ ՎԱՆՔԸ ՀՅՈՒՍԻՍԻՑ

Ս. ԽՈՐՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԸ

Հայ ժողովրդի հնագույն և նվիրական սրբավայրերից է Ս. Խորվիրապի վանքը: Այն առնչվում է Դ դարում Հայաստանի կրոնապատմական վերափոխության խոշոր երևույթի՝ քրիստոնեության մուտքի և արմատավորման հետ, և այն առ այսօր շարունակում է մնալ հայ ժողովրդի եկեղեցական և հոգևոր կյանքի սնուցիչ օջախներից մեկը:

Ս. Խորվիրապի վանքը գտնվում է այժմյան Հայաստանի Արարատի շրջանում, Երևանից 42 կմ հեռավորության վրա, Մայր Արաքսի ձախակողմյան ափին, Արարատ լեռան հյուսիսում հանիդպակաց բլրաշարքի վրա: Բնությունն ինքը կարծես Ս. Խորվիրապի բլուրները և Արարատը կողք-կողքի է ստեղծել, քանզի այդ երկուսի միասնությամբ է հայ ժողովուրդը խորհրդանշել իր հավերժությունը:

Տխուր են Ս. Խորվիրապի մասին պատմվող վաղագույն հիշատակությունները: Այն հանդիսացել է հատկապես քաղաքական տարապարտյալների բանտ-աքսորավայր, որտեղ վխտացել են օձերն ու բազմապան սողունները: Աքսորյալներից հազիվ թե որևէ մեկը խուսափեր թունավոր մահից: Այստեղ է բանտարկվում նաև Ս. Գրիգոր Լուսավորիչը, որը հանդգնել էր, հակառակ Տրդատ Գ Արշակունի թագավորի կամքին ու հրամանին, չերկրպագել հայրենի հեթանոս աստվածներին: Թեև նա առաջին հայ քրիստոնյան չէր, սակայն նրա ժամանակ և առավելաբար նրա շնորհիվ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց ամբողջ Հայաստանի համար, և նա դարձավ առաջին Հայոց կաթողիկոսը: Ահա թե ինչու Ս. Խորվիրապը, կապված լինելով Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի, առաքելական գործունեության, մանավանդ բազմահնար ու սոսկալի չարչարանքների հետ, դարեր շարունակ հանդիսացել է հայ ժողովրդի համար սրբավայր ու նվիրական ուխտատեղի:

Երբեմնի օձերի ու սողունների բույն Խորվիրապը աստիճանաբար վերածվում է բնակավայրի, որտեղ եկեղեցիներ են կառուցվում, վանական-միաբանական կյանք է ծաղկում, կրթական-մշակութային արդյունաշատ գործունեություն է ծավալվում, ձեռագրական ժառանգության կոթողներ են արարվում:

Գրավոր վկայությունները հաստատում են, որ այստեղ առնվազն Ե դարից սկսած վանք ու միաբանություն է եղել: Վահան Մամիկոնյանի Ե դարի վերջում կառուցած մատուռը հավանաբար ամենաառաջին շինությունը չի եղել, քանի որ երկու դար շարունակ առանց աղոթատուն չէր կարող մնալ Ս. Գրիգոր Լուսավորչի՝ իր կենդանության իսկ ժամանակ սրբացած Հայոց առաջին կաթողիկոսի կյանքին այնքան սերտորեն առնչված այս սրբավայրը:

Է դարում այստեղ կառուցվում է մի նոր աղոթատուն: Ճարտարապետ-մասնագետների կարծիքով «ներսում 8 սյուներով, բոլորաձև կենտրոնակազմ կառույց է»՝ հռչակավոր Զվարթնոց տաճարի նմանությամբ: Այդ շատ հավանական է, որովհետև երկուսն էլ կառուցվել են Ներսես Գ Շինող (641—661 թթ.) կաթողիկոսի ջանքերով:

Ս. Խորվիրապի ներկայիս կանգուն շինությունները ԺԷ դարի կեսերից են: Անմիջական Վիրապի վրա կառուցված եկեղեցին երկհարկանի է, ներքնահարկը ունի 4,5 մետր տրամագիծ և 6,5 մետր խորություն: Երկրորդ հարկն ունի գոգավոր ծածկ, բարձրադիր սեղան, իսկ պարսպապատ հարթակի կենտրոնում վեհասլաց Ս. Աստվածածին եկեղեցին է: Այս երկու եկեղեցիները և պարիսպը ԺԷ դարի 60-ական թվականներին են կառուցվել Դավիթ Թիֆլիսեցի վարդապետի

ջանքերով, Շամոնն (Շմավոն) Ագուլեցի ու Ալեքսանդիլ Թիֆլիսեցի խոճաների նվիրատվությամբ:

Ս. Խորվիրապ վանքում վերանորոգություններ և բարեկարգման աշխատանքներ են կատարվում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից (1763—1780): Վերակենդանացվում է միաբանական կյանքը: Այնուհետև շինարարական մեծ աշխատանքներ են կատարվում ԺԹ դարում, և նորից վերըսկըսվում է ժողովրդական ուխտագնացությունը:

Ս. Խորվիրապի վանքը կրթական-մշակութային վերելքի ամենաեռանդուն շրջան է ապրում հատկապես ԺԳ դարի կեսերին: Պատմական հանգամանքների բերումով այդ շրջանում այստեղ է տեղափոխվում ժամանակի հայ կրթական-մշակութային խոշորագույն գործիչներից մեկը՝ Վարդան Արևելցին՝ իր մի խումբ սաների հետ միասին: Շուտով Ս. Խորվիրապի դպրոցը մեծ հռչակ է ձեռք բերում: Հայաստանի մոտիկ ու հեռավոր գավառներից շատերը այստեղ են գալիս ուսումնառության և իրենց գիտելիքները կատարելագործելու համար:

Վարդան Արևելցու՝ Ս. Խորվիրապում հիմնած դպրոցում բարձր կրթություն ստացած ուսանողների թվում են հայ դպրության մի շարք անվանի մշակներ՝ Ներսես Մշեցին, Հովհաննես Երզնկացին, Գրիգոր Բալուեցին, Գևորգ Սկևռացին (Լամբրոնացի), Գրիգոր Բջնեցին և ուրիշներ: Այս դպրոցում են հորինվել բազմաթիվ պատմական, մեկնաբանական, կրոնական և քարոզչական երկեր: Ընդօրինակվել են արժեքավոր ձեռագիր մատյաններ:

Դպրոցը իր ղեկավարի գլխավորությամբ ապրել է նաև հասարակական կյանքով: Վարդան Արևելցին առաքվել է Հոլավու խանի մոտ՝ Թավրիզ՝ մեղմացնելու հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կեղեքումները:

Երբ աստիճանաբար խամրում է դպրոցը իր ղեկավարի մահվան և տնտեսական ու քաղաքական պատճառներով, այս դպրոցի ուսանողական կորիզը, Ներսես Մշեցու գլխավորությամբ միառժամանակ Մշո Առաքելոց վանքում մնալուց հետո, տեղափոխվում է Գլաձոր և հիմքը դնում տեղի հռչակավոր դպրոցի: Այս մտահղացումը սկիզբ էր առել դեռևս Վարդան Արևելցու և Քուրդ իշխանի բարեկամության օրերին: Այնուհետև Ս. Խորվիրապի վանքում պարբերաբար քիչ թե շատ մշակութային կյանք եղել է, թեև եղել են նաև ամայության և ավերվածության, երբեմն երկարատև ժամանակահատվածներ:

Ս. Խորվիրապի վանքն այսօր ապրում է իր նոր վերակենդանացումը: Տևապես լինելով Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում, այն օրըստօրե ավելի ու ավելի պայծառ տեսք է ստանում: Հիմնովին վերանորոգվել է Ս. Աստվածածին գլխավոր եկեղեցու տանիքը, սալահատակվել է հատակը և բակի ընդարձակ մասը, վերակառուցվել է սեղանը: Բոլորովին վերջերս ասֆալտապատվել են դեպի Ս. Խորվիրապ տանող ճանապարհը և նախամուտքի ընդարձակ հրապարակը: Հիմնովին փոխվել և վերակառուցվել են նախամուտքի աստիճանները, պարսպի ճակատային մասի առջևի մայթերը, վանահոր սենյակները, ընդունարանը և օժանդակ հարմարությունները:

Սալահատակվել են նաև Վիրապի երկհարկանի եկեղեցու հատակները՝ աստիճաններով հանդերձ: Ս. Խորվիրապ վանքն արդեն ունի իր էլեկտրական լուսավորությունը, իր խմելու մաքուր ջուրը, ստորգետնյա կոյուղին, կենցաղային սպասարկման համապատասխան միավորները: Բակում կուլալ գլգում է ցայտաղբյուրը, որը մանավանդ ամռան շոգ օրերին մեծ պարգև է ուխտավորների ծարավը հագեցնելու համար: Տնկվել են 700-ից ավելի ծառեր:

Վերանորոգման ու բարեկարգման եռանդագին աշխատանքները շարունակվում են: Մոտակա տարիներին Ս. Խորվիրապ վանքը կունենա ավելի բարեկարգ, հաճելի տեսք, կաճեն դալար ծառեր ու ծաղիկներ, կփոխվեն օդն ու կլիմայական պայմանները: Խորվիրապի վանքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներին մասնակցել են նաև, իրենց սրտագին նվիրատվություններով, Կալիֆոռնիայի թեմի առաջնորդարանը, Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումը, տիկին Վինես Նահիկյանը (ԱՄՆ), տիար Հակոբ Տերտերյանը (ԱՄՆ), տիար Ժան Ապաճյանը (Բելգիա):

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ 1980 թվից նշանակվելով Ս. Խորվիրապ վանքի վանահայր, իմ գերագույն իղձն ու նպատակն է՝ անմնացորդ նվիրվածությամբ վերակենդանացնել վանքի նաև հոգևոր կյանքը, պայծառացնել ծեսերն ու արարողությունները, որպեսզի յուրաքանչյուր ուխտավոր և հավատացյալ այցելելով այստեղ անպայման գտնի հոգեկան մխիթարություն, խաղաղություն:

ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Վանահայր

Ս. ԽՈՐՎԻՐԱՊ ՎԱՆՔԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

Ս. ԽՈՐՎԻՐԱՊ ՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ



ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո» (Ղուկ. ԺԵ 19):

«Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»:

Ավետարանում կան բազմաթիվ առակներ, որոնք ասվել են մեր Տեր Հիսուսի Քրիստոսի կողմից: Սուրբ Գրքում տեղ գտած առակները բավական մեծ հետաքրքրություն են ներկայացնում, իսկ եթե փորձում ենք խորանալ առակների բովանդակության մեջ, ապա նկատում ենք, որ առակները պարունակում են ճշմարիտ կյանքի համար ուսուցողական, խրատական, բարոյական անգնահատելի իմաստ:

Պատահական չէ այն երևույթը, որ Հիսուս առակների միջոցով ուսուցանում էր իր աշակերտներին և մարդկանց, թե ի՞նչ է Աստծո արքայությունը, թե ինչպիսի՞ պայմաններում և ինչպիսի՞ դեպքերում մարդ կարժանանա այդ արքայությանը:

Պարզ, հասարակ, հասկանալի մի քանի տողերի միջոցով Հիսուս պատմում էր մի առակ և հաճախ այդ առակներով պատասխանում էր իր նկատմամբ թշնամաբար տրամադրված դպիրների և փարիսեցիների նենգամիտ հարցերին: Այդ առակները իրենց իմաստությամբ այնքան դիպուկ, անմիջական և ճշմարիտ էին, որ բոլոր լսողները մնում էին զարմացած Հիսուսի իմաստության վրա: Իհարկե հաճախ էր պատահում, որ առակի իմաստը մնում էր անհասկանալի ժողովրդի և անգամ Հիսուսի աշակերտների համար: Դրա միակ պատճառը այն էր, որ նրանց հոգիներում դեռ չէին սերմանվել ճշմարիտ Վարդապետության սերմերը, նրանք չէին հասկանում Աստուծո Որդու խոսքերը:

Վերը նշված բնաբանը վերցված է Ղուկասի Ավետարանում պատմվող «Անառակ որդու» առակից: Առակի բովանդակությունը հետևյալն է: Մի մարդ երկու որդի է ունենում: Որդիներից կրտսերը մի գեղեցիկ օր հայտնում է հորը, որ կիսի ամբողջ ունեցվածքը և իր հասանելիք բաժինը իրեն տա: Հայրը համաձայնվում է որդու առաջարկին: Դրամ դարձնելով իր բաժինը, որդին որոշում է օտար աշխարհ գնալ և ապրել ազատ ու անկախ կյանքով: Միառժամանակ ապրելով առատության մեջ՝ տուրք է տալիս կրքերին և վատնում ամբողջ գումարը ու կանգնում աղքատության շեմին: Ինչ անի: Որոշում է աշխատել և գործի է անցնում մի մեծահարուստ մարդու մոտ՝ որպես խոզապահ: Դառնությամբ և դժվարությամբ են անցնում օրերը. աշխատանքը շատ, իսկ վաստակը քիչ: Եվ նա այն աստիճանի է հասնում, որ խոզերի հետ ուտում է նրանց կերը: Վերջապես, խորհելով իր վիճակի մասին, զգում է, որ մեծ սխալ է կատարել՝ հեռանալով հոր տանից; Չէ որ այնտեղ ծառաներն անգամ իրենից լավ էին ապրում: Որոշում է տուն վերադառնալ, խնդրել հորը գոնե ծառա ընդունվել: Դեռ հայրական տանը չհասած՝ տեսնում է, որ հայրը գալիս է իրեն ընդառաջ: Հուզվում է հայրը՝, գրկում և համբուրում է որդուն; Իսկ որդին այդ ժամանակ ասում է. «Հա՛յր, մեղավոր եմ երկնքի և քո առաջ, ների՛ր ինձ»:

Շարժվեց հայրական գութը, ոչինչ չպատասխանելով տուն տարավ որդուն, հրամայեց լողացնել, նոր զգեստներ հագցնել և

խնջույք կազմակերպել: Ուրախ էր հայրը, ուրախ էր որդին: Բայց ահա ագարակից տուն վերադարձավ ընտանիքի ավագ որդին, զարմացավ իրենց տան խնջույքի համար: Երբ ծառաներից իմացավ, թե ի՞նչն է պատճառը, նա չցանկացավ տուն մտնել: Ինքն այսքան տարի ակնիվ աշխատել էր, բայց հայրը նրա համար ոչ անգամ չէր մորթել, իսկ այսօր անառակի համար մորթել է եզը: Դժվար էր համոզել ավագին տուն մտնել: Այդ ժամանակ հայրը դուրս գալով տանից՝ ասաց նրան, «Դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ որ իմն է, քոնն է. բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (ԺԵ 32):

Այս է Հիսուսի կողմից պատմված առակի բովանդակությունը: Ավետարանական սույն պատմությունը ամփոփում է հոր և որդու միջև եղած մի դիպված: Փոքր որդին նենգ եղավ հոր նկատմամբ և հետո վրջաց, իսկ հայրը բարեգութ էր և ներեց նրան:

Ի՞նչը ստիպեց անառակ որդուն այդ քայլին դիմել: Այն, որ նա ցանկացավ առանձին ճոխ կյանքով ապրել: Ինչ-որ տեղ նրան ձանձրացրել էր հայրական տունը, ձգտում էր «ազատության» և որի պատճառով էլ հեռացավ տանից: Նրա մտքով մի որպե անգամ չէր անցնում, որ ետ վերադառնա: Մտածում էր, թե ինչքա՜ն ազատորեն, ինչքա՜ն հաճույքով պետք է վայելի այն կյանքը, որի մասին շատ անգամ երազել էր:

Սկզբնական շրջանում նա ուրախ էր իր «ազատության» մեջ, բայց այդ նույն ազատությունը նրան հասցրեց անբարոյական և անառակ վիճակի: Ոչինչ չունենալով, ոչ մեկից օգնություն չսպասելով փորձեց աշխատել, բայց աշխատանքն էլ չօգնեց, քանի որ ապականվել էր նրա հոգին: Այս բոլորից հետո որոշեց վերադառնալ հայրական տուն և գթություն խնդրել հորից: Վերադարձավ, և գթառատ հայրը ներեց նրան ու իր կորցրած, մոլորված որդուն տուն տարավ:

Եթե մի կողմից անառակ որդին իր արարքով մեղք գործեց, հետո գիտակցելով ապաշխարեց և դարձի եկավ, ապա մյուս կողմից հայրական սիրո մեծ զգացումը թողություն շնորհեց որդուն, քանի որ որդին սրբվել և մաքրվել էր կամովի, հասկացել էր իր սխալը ու ետ վերադարձել դեպի ճշմարիտ ճանապարհը:

Բարոյական այս գեղեցիկ առակը ունի աստվածային մեծ խորհուրդ, խորհուրդ, որը մեզ ուսուցանում է չլինել անառակ որդիներ Աստծո նկատմամբ, չանարգել նրա սուրբ պատվիրանները: Չէ՞ որ այդ պատվիրանները կատարելով կվայելենք ճշմարիտ կյանքի քաղցր պտուղները: Աստված մարդուն տվեց ազատ կամք, բայց դա չի նշանակում, թե մարդը նման կամքով պետք չէ կատարի Աստծո պատվիրանները: Ամեն մեկը իր կամքով և իշխանությամբ նախ և առաջ պետք է կատարի Աստծո կամքը, որից և կծնվի բարին, իսկ Աստծուց հեռացող մարդկային կամքը կանարգի Աստծուն և կընկնի չարի իշխանության տակ:

Իսկ եթե հանկարծ սխալվենք, ապա գիտակցորեն մեր խղճի և Տիրոջ առաջ խոստովանենք, որ նորից չի կրկնվի սխալը: Միշտ հիշենք, որ մարդ, ապրելով հասարակական կյանքում, վերծ չէ թերություններից և սխալներից: Նա կարող է նույնիսկ անգիտակցորեն սխալվել, բայց այդ չի նշանակում, որ նման անձնավորությունը դատապարտված է մեղքի, և նրա համար ոչ մի ապաշխարում չկա: Մենք չենք ցանկանում խոսել նման սխալների մասին, այլ կցանկանանք շեշտել այնպիսիները, որոնք գիտակցորեն են կատարվում միմիայն ի շահ օգուտի և հաճույքի, որով և մարդ բռնում է «անառակ որդու» ճանապարհը:

Քանի՜-քանիսին ենք ճանաչում, որոնք չեն հարգում իրենց ծնողներին, բախտի քմահաճույքին են հանձնել հարապատ երեխաներին, դավաճանել են հավատարիմ ընկերներին ու թշնամի դարձել եղբայրներին: Մի՞թե նրանք չեն գիտակցում, որ իրենց արարքով առաջին հերթին թշնամի են դառնում իրենց հոգուն, որ ատելի են շրջապատի մարդկանց: Նման մարդիկ սկսում են ապրել անիմաստ կյանքով, նրանք չեն կարող ճանաչել ճշմարիտ կյանքը, ընդունակ չեն խոր և կայուն ապրումների: Նրանց ոչինչ չի բավարարում, սակայն չգիտեն թե ինչի են ձգտում: Մի՞թե նման մարդիկ իրավունք ունեն ասելու, թե մենք ապրում ենք և ոչ...

Այս բոլորին գումարած, ինչ կարող ենք ասել նրանց համար, ովքեր թողնում են հայրենիքը ու հեռանում ուրիշ երկրներ: Արդյոք նրանք մեր հայրենիքի համար մեր օրերի «անառակ որդիներ» չե՞ն: Ոչ մի օտար երկիր իր «շքեղությունը» չի մատուցի նրանց, քանի որ Հայրենիքից հեռացողը և նոր հայրենիք որոնողը խորթ է բոլորի համար:

Դարերի խորքից եկող մեր Հայրենիքի ազատության և անկախության համար ընկած նահատակների արյան ձայնը մի՞թե այդքան շուտ լռեց այդպիսիների համար: Չէ՞ որ նրանց սուրբ նահատակությունը ավելի ազնվացրեց ու վեր բարձրացրեց ողջերին, որոնք իրենց հայրենասիրական գործերով և Հայրենիքի նկատմամբ ունեցած սիրով Հարություն են տալիս մեր Հայրենիքին, որի հոգեհանգիս-

տը մի ժամանակ փորձում էին կատարել թշնամիները: Եթե ինչ որ կյանքի դաժան ճակատագիրը ամայի դարձրեց մեր Հայրենիքը և որբացրեց ժողովրդին՝ ստիպելով նրանց հեռանալ հարազատ եզերքից և հանգրվան գտնել օտարության մեջ, ապա դա չի նշանակում, որ ներկայումս ապրելով ազատագրված և վերածնված Մայր Հայրենիքում, տեսնելով նրա ծաղկունքն ու առաջընթացը, պետք է լինել «անառակ որդիներ»: Ո՛չ, նրանց այդ արարքը երբեք չի՛ ներվի:

Այժմ եկեք միասին աղոթենք մեր ազատագրված Հայրենիքի, Սուրբ Էջմիածնի և համայն հայ ժողովրդի համար ու խնդրենք Աստծուց, որ խաղաղություն հաստատի ամբողջ աշխարհում:

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ





ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

«Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած: Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հկօր եւ կենդանի. ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ» (Սաղմոս ԽԱ 2—3):

«Ինչպես եղջերուն ջրի աղբյուրներ է փափագում, այնպես էլ ես եմ փափագում քեզ, Աստված: Ծարավի է իմ անձը քեզ, հկոր և կենդանի Աստված, ե՞րբ կգամ ու կերևամ քեզ, Աստված»:

Հին Կտակարանում կան թե՛ պատմական և թե՛ կրոնական, բանաստեղծական գրքեր: Այդ գրքերից է «Գիրք Սաղմոսաց»-ը, որն աչքի է ընկնում իր ներքին հարուստ բովանդակությամբ, ինքնատիպությամբ և գեղեցկությամբ: Այստեղ մենք չենք հանդիպում ո՛չ դեպքերի, ո՛չ հերոսների: Սա մի հոգեշունչ գիրք է, որ կարդալիս մարդկային հոգին լցվում է անհուն սիրով առ Աստված: Սաղմոսները մերթ հոսում են հանդարտ, ինչպես փոքր վտակ, մերթ փոթորկվում են, ծառանում, ինչպես մրրկահույզ օվկիան: Մարդկային հույզերի խտացումն է այն, խտացումը սիրո և հույսի, հավատի ու սպասման:

Հալարամյակներ են բաժանում մեկ սաղմոսները գրելու օրերից, հազարամյակներ, որոնք ավելի թանկ են դարձնում այդ անգնահատելի գոհարները: Երբեք չեն խամրում ու հնանում սաղմոսները, այլ միշտ, ամեն անգամ, երբ կրկին կարդում ենք, նրանք դառնում են ավելի հարազատ, նորովի ենք ընկալում խորիմաստ մտքերը, և կարծես թե նորից ու նորից Աստուծո Գոյության և աշխարհաճանաչողության իմաստությունը հանդես է գալիս նոր երանգներով:

Ովքե՞ր են սաղմոսների հեղինակները: Ըստ ավանդության սաղմոսների մեծ մասի հեղինակը Դավիթ թագավորն է, իսկ մյուս մասի հեղինակն անհայտ է: Սակայն ովքեր էլ որ լինեն սաղմոսների հեղինակները, մենք երախտապարտ ենք նրանց, ովքեր թողել են մեզ այդ աննման գանձերը, որոնք այսօր էլ հուզում են մեր հոգիները, լցնում անհուն բերկրանքով:

Հարյուր հիսուն սաղմոս կա «Սաղմոսաց գրքում», հարյուր հիսուն ապրում, այդքան էլ ձգտում: Եվ պատահական չէ, որ այդ սաղմոսներից մեկի առաջին տողերն են դարձել մեր այսօրվա քարոզի բնաբանը:

Ամբողջ սաղմոսը առ Աստված փառաբանություն է, որին միախառնված են տագնապն ու հույսը, իսկ բնաբան դարձած տողերը ցույց են տալիս այն մեծ ձգտումը, ցանկությունը, որ ունի սաղմոսերգուն առ Աստված: Նա ծարավի է կենդանի և հկոր Աստծուն և կարոտ է այն պահին, երբ «կգնա ու կերևա նրան»:

Որքա՜ն կենդանի ու անմիջական են այս խոսքերը: Մեկանից ո՞վ է արդյոք, որ չի փափագում Աստծո ողորմածությանը, ո՞վ է, որ ձգտում է հեռանալ նրանից: Մեր հոգիները ծարավի են ճշմարիտ խոսքի, ծարավ՝ կենդանի Աստծուն:

Բոլոր նրանք, ովքեր հավաքվում են եկեղեցու սուրբ կամարների տակ, ունեն մի մեծ ցանկություն, ավելին՝ մի նպատակ, այն է՝ հագեցնել այդ ծարավը, որով տոչորվում է հոգին: Ճանաչել կենդանի և հկոր Աստծուն: Այո՛, մենք ծարավ ենք, ծարավ հավատքի, և որպեսզի հագեցնենք մեր ծարավը

և արժանանանք միշտ կենդանի ու հկոր Աստծո տեսությանը, պետք է ապրենք սիրով ու բարիք գործելով, կատարենք այն պատվիրանները, որ տվեց մեզ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս: Նա եկավ, որ հագեցնի մարդկանց տոչորող ծարավը, տա նրանց կենդանի ջուրը, ինչպես տվեց սամարացի կնոջը: Նա արժանացրեց մեզ իր տեսությանը և պատվիրեց մեզ սիրել միմյանց, մի պատվիրան, որ այսօր էլ հնչում է մի նոր ուժով, քանզի մեր կյանքում այժմ ամեն ինչ այնքան արագ է փոխվում, որ մենք չենք հասցնում անգամ կողմնորոշվել: Մեզանից յուրաքանչյուրը ապրում է իր ցավերով ու իր ուրախություններով: Երբեմն թվում է, թե «ապրում ենք մարդկանց մեջ, ինչպես անապատում»: Երբ մեզ տիրում է խորթություն ու սառնություն, մենք պետք է այն ջերմացնենք մեր սիրով. սեր ոչ միայն մերձավորի նկատմամբ, այլ ընդհանրապես մարդու նկատմամբ: Նա, ով չի սիրում մարդուն, ում խորթ է մարդասիրությունն ու գթասրտությունը, չի կարող սիրել Աստծուն:

Սեր և գթասրտություն,—ահա այն երկու հատկությունները, որ անհրաժեշտ են մեզ հագեցնելու համար մեր ծարավն ու կարոտը առ Աստված: Այդ է սովորեցրել մեզ մեր ժողովրդի դարավոր պատմությունը: Սիրել ենք, բայց ատել են մեզ, ներել ենք, սակայն, դժբախտաբար, չեն գթացել: Ես կոչ եմ անում ո՛չ ստրկական սիրո, այլ այն սիրո, որը հաղթում է չարին, ոչ թե ներելով պարտություն կրենք չարից, թույլ տանք, որ չարը իշխի մեզ վրա, այլ մենք, մեր սիրով առ Քրիստոս, հաղթենք չարին, կործանենք նրան. «Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիով հաղթիր չարին» (Հռոմ. ԺԲ 21): Մեր սերն ու գթասրտությունը թող լինի կաթիլ մեր ժողովրդի անափ սիրո: Չխնդրենք Աստծուց այն, ինչ մենք չենք կարող կատարել, քանզի ինչպես Պողոս Առաքյալն է ասում՝ «Եթե նրա հետ մեռնում ենք, նրա հետ էլ պիտի ապրենք. եթե համբերում ենք, նրա հետ էլ պիտի թագավորենք. և եթե ուրանում ենք, նա էլ մեզ պիտի ուրանա, և եթե հավատարիմ ենք, նա հավատարիմ է մնում, որովհետև ինքն իրեն ուրանալ չի կարող» (Բ Տիմոթ. Բ 11—13): Սերը ոչ միայն հագեցնում է մեր ծարավն առ Աստված, այլ մաքրում է մեզ, ավելացնում է մեր հոգիները:

Մեզանից յուրաքանչյուրը աղոթում է առ Աստված, որպեսզի մեր Երկնային Հայրը գթա և ների մեզ, սակայն շատերը իրենք չեն ներում նրանց, ովքեր կարիքն ունեն ներման և ողորմածության: Որքան մեծահոգի է մեր Փրկիչը, այնքան շատ ենք հայցում նրա ներողամտությունը: Մենք պետք է ապրենք այնպես, ինչպես սովորեցրել է մեզ առաքյալը. «Ոչ ոքի պարտապան մի՛ մնացեք, բացի միմյանց սիրելուց, քանի որ, ով սիրում է ընկերոջը, կատարում է օրենքը: Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես քո անձը. սերն իր ընկերոջը չար բան չի անի, սերն է օրենքի լրումը» (Հռոմ. ԺԳ 8, 10):

Ուրեմն աղոթենք, որ հագեցնա մեր ծարավը ու մեզանից յուրաքանչյուրը արժանանա Աստծո տեսությանը:

Թո՛ղ մեր հոգիներում վորանա սերն ու գթասրտությունը: Սիրենք մարդկանց և դրանով իսկ հավաստենք մեր սերն առ Աստված:

Սպանեցե՛ք ուրեմն ձեր մեջ այն ամենը, ինչ գայթակղում է ձեզ, մղում դեպի հոռի կրքերն ու չարիքի ցանկությանը, պղծությանն ու ագահությանը:

Թոթափեցե՛ք ձեզանից բարկությունը, վայրույթը, չարությունն ու հայհոյանքը:

Հայրե՛ր և մայրե՛ր, թո՛ղ ձեր ներողամտությունը ձեր որդիների հանդեպ այնքան մեծ լինի, որքան ձեր սերն է նրանց հանդեպ:

Որդինե՛ր, հնազանդ եղեք ձեր ծնողներին, որ արժանի լինեք նրանց հայրական օրհնությանը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, սիրե՛ք և հարգե՛ք միմյանց ի Տեր:

Աղոթենք, որ մեզանից յուրաքանչյուրը ունենա Տիրոջ ներողամտության լույսի փոքր շողն իսկ, աղոթենք, որ մեզանից յուրաքանչյուրը իր մեջ ուժ գտնի ներելու բոլոր նրանց, ովքեր կարիքն ունեն ներման: Չլինենք այն պարտապանի նման, որին ներվում են իր բազում պարտքերը, սակայն որը չի ներում փոքր պարտքն անգամ:

Մարդի՛կ, մի՛ վշտացրեք իրար, մի՛ տանջեք, այլ օգնե՛ք իրար, սատա՛ր կանգնեք դժվարության պահին, թող ձեզ լուսավորի՛ լույսը Հիսուսի, հագեցնի ձեր ծարավն ու կարոտը և փրկի փորձություններից. ամեն:

ԳԱՐՈՒՇ ՍԱՐԿԱՎԱԳ ԼԱԶԱՐՅԱՆ



ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔՀՆ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ*

ԺԲ դարի վերջերի և ԺԳ դարի սկզբների վիմական և պատմական հիշատակարանները հոգևոր կյանքի և շինարարական մի նոր արշալույս են ավետում Հայաստանի համար:

Զաքարյան իշխանների 25-ամյա (մոտավորապես 1196—1219 թթ.) (տես Հայ ժողովրդի պատմութ. III, Երևան, 1976, էջ 533—538) հայրենասիրական համառ պայքարի շնորհիվ, հնարավոր եղավ սելջուկներից ազատագրել Հյուսիսային Հայաստանի արևելյան, մասամբ և կենտրոնական նահանգները՝ Գուգարքը, Ուտիքը, Սյունիքը և Արցախը: Ազատագրված հողերում ոչ միայն վերականգնվեց Հայկական վարչական իշխանությունն ու քաղաքական կյանքը, այլև բարենպաստ վիճակ ստեղծվեց հայ մշակույթի զարգացման համար: Հայ նախարարական տները՝ Զաքարյանները, Պռոշյանները, Օրբելյանները, ակնիվ մրցակցությամբ աշխատում էին գերազանցել միմյանց, մշակութային, հոգևոր և շինարարական կյանքի վերակարթոնքի գործում: Հենց այդ ակնիվ մրցակցության արդյունքը հանդիսացավ միջնադարյան Հայաստանի նշանավոր մի շարք վանական համալիրների կառուցումը: Ձեր հիշողության մեջ թարմացնելու համար, հիշեմ դրանցից մի քանիսը՝ Հառիճա վանքը՝ կառուցված 1201 թ., Գոշավանքը՝ 1200—1203 թթ., Մակարավանքը՝ 1204 թ., Ամաղուի Նորավանքը՝ 1205 թ., Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու գավիթը՝ 1211 թ., Հաղպատի Ս. Նշան եկեղեցու գավիթը՝ 1216 թ., նույն վանքի ժամատունը՝ 1257 թ., Հովհաննու վանքը՝ 1216—1221 թթ., Կեչառիսի Կաթուղիկե եկեղեցին՝ 1244 թ., և, վերջապես, դարի ճարտարապետական-շինարարական մտքի աչքի ընկնող նվաճումներից մեկը հանդիսացող Այրից կամ Գեղարդա վանքը՝ 1215—1288 թթ., որը իր նշանավոր ժայռափոր տաճարներով դասվում է հայ ճարտարապետության ամենանշանակալից ստեղծագործությունների շարքը:

ԺԳ դարում այնքան փառավոր ու հիասքանչ վանական համալիրներ ու եկեղեցիներ են կառուցվել Հայաստանում, որ առիթ է տվել հայկական միջնադարյան ճարտարապետության մեծագույն մասնագետ Թորոս Թորամանյանին այդ շրջանը հայ ճարտարապետության վերածնության շրջան համարելու (Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետությունը, Երևան, 1948, հտ. Բ, էջ 109):

Որպես կանոն վանական այդ կառույցներին կից միջնադարում ստեղծվում էին նաև վարդապետություններ, որոնք այնքան բարեհաջող կերպով լուծում էին հայոց աշխարհի ուսումնատենչ երիտասարդների կրթության մեծ գործը: ԺԳ դարում և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս, հեռավոր Կիլիկիա-

---

* Սույն դասախոսությունը ընթերցվել է վերջերս Վեհարանում, միաբանական հերթական հավաքույթի ընթացքում:

յում, բացի այս վարդապետարաններից բացվում էին նաև շատ դպրոցներ:

Հայ մատենագրության էջերում հիշատակարաններ կան այդ դպրոցների տիպի ու բնույթի մասին: Այդ որոշ տիպի դպրոցները կոչվում էին առանձնական դպրոցներ, իմաստնոց տներ, տուն դպրանոցներ և այլն: Այդ դպրոցներում սովորեցնում էին տարրական գրագիտություն, երգեցողություն և թվաբանություն: Սրանք համարվում էին ցածր տիպի դպրոցներ: Երկրորդ տիպի դպրոցները կոչվում էին հասարակական կամ ժողովրդական դպրոցներ: Նման դպրոցներ գոյություն ունեին քաղաքներում և ավաններում: Այս դպրոցները ունեին աշխարհիկ բնույթ: Այսպիսի դպրոցներ կային Անիում, Կարսում, Երզնկայում, Վանում, Սանահնում և այլ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում: Նշված դպրոցներից բացի լայն տարածում ունեին նաև վանական դպրոցները, որոնք գործում էին խոշոր վանքերին կից և բաժանված են եղել երկու կարգի՝ տարրական և բարձրագույն: Առաջինում ուսուցանում էին գրագիտություն, թվաբանություն, քրիստոնեական և Հայոց պատմություն, երաժշտություն և այլն: Բարձրագույն վանական դպրոցներում կամ վարդապետարաններում, որոնք հաճախ կոչվում էին նաև համալսարաններ, դասավանդվում էին բազմապիսի առարկաներ՝ ճարտասանություն, քերականություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, երաժշտություն, տրամաբանություն, նկարչություն, գրչության արվեստ (գեղագրություն):

Զաքարյան իշխանների օրոք Հայաստանում վանական վարդապետների թվին էին պատկանում Սանահնի, Հաղպատի, Տաթևի, Հաղարծնի, Նոր Գետիկի, Գլաձորի, Խորանաշատի, Խորվիրապի, Կեչառուքի, Գլաձորի և Գեղարդա վանքի վարդապետարանները, որտեղ դասավանդում էին հայտնի գիտնական վարդապետներ, որոնց նվիրված աշխատանքի շնորհիվ էլ միջնադարյան մեր վանքերը դարձան գիտության կաճառներ, որտեղից հավատքի լույսի հետ միասին հայոց մանուկներին էր ճամբվում նաև գիտության լույսը: Անվիճելի փաստ է, որ միջնադարյան հայ մշակույթի զարգացման ու պահպանման միակ ապաստարանները եղել են մեր մենաստանները, որտեղ հարյուրավոր ու հազարավոր անանուն և համեստ վանականներ խոնավ ու ցուրտ խուցերում, բանաստեղծի բառերով ասած՝ «Մի նշխարով, մի կում ջրով», կանթեղի ու ճրագի պլպլացող, աչքի լույսը մաշող լույսի տակ ստեղծել են իրենց մտքի ու հոգու արգասիքը հանդիսացող հոգևոր անմահ արժեքները, ձեռագիր մատյանների ձևով ժառանգություն թողել ապագա հայ սերունդներին: Փառք ու պատիվ Հայաստանյայց մեր Ս. Եկեղեցուն, որը ի պահանջել հարկին, հայ ժողովրդի անցյալի անփառունակ, պետականությունից զուրկ վիճակը հաշվի առնելով, իր ուսերին առավ նաև մեր ժողովրդի կրթության ու լուսավորության դժվարին գործը: Այդ իսկ պատճառով միջնադարյան հավատքի մեր տները շատ հաճախ դարձան նաև մշակույթի և դպրության կենտրոններ:

Մեզ հասած շուրջ 25 հազար հայերեն ձեռագիր մատյանները հիմնականում գրվել, ընդօրինակվել, նկարազարդվել ու կազմվել են միջնադարյան Հայաստանի ավելի քան հազար վանքերում ու եկեղեցիներում: Դրանցից խոշորագույն կենտրոններում ծունդ են առել ու մշակվել նաև հայ մատենագրության ու արվեստի որոշ ճյուղեր: Ուրիշ հարց է, որ շատ գրչակենտրոններից քիչ ժառանգություն, նույնիսկ տեղեկություն չի հասել մեզ: Ում ծանոթ է հայ ժողովրդի պատմական դառն, դժխեմ ճակատագիրը, նա հեշտությամբ կհասկանա այդ: Նվաճողների հերթափոխվող արշավանքները, դաժանությամբ իրար գերազանցող նրանց վայրագությունները, որոնք հայ ժողովրդի մարմինն սպանելուց առաջ, փորձում էին նաև հոգին ոչնչացնել, հսկայական հոգևոր հարստություն ջնջեցին Հայաստան աշխարհի երեսից: Բացառություն չէր կարող լինել Այրիվանքը, Հայաստանի հնագույն և հեղինակավոր վանքերից մեկը: Այն, որ համարվում էր «Սկիզբն ու Մայրն վանորայից» ... հաստատյալ ի Սուրբ Լուսավորչեն (302—325), ուր հանգստացել էր նաև Ներսես Մեծ կաթողիկոսը (353—373), որը եղել էր նույնպես «Կացուրդ Սրբոյն Իսահակայ» (387—436), նշանավոր այս վանքի ավելի քան հազարամյա մշակութային կյանքը հարատևել է հարյուրամյա ընդհատումներով:

Ս. Գեղարդա վանքի մշակութային կյանքի հնագույն վկայությունը ութերորդ դարից է գալիս և կապվում է Այրիվանքի միաբան, երաժիշտ ու իմաստասեր Գրիգոր Գռվիկ վարդապետի գործունեության հետ:

Գիտնական-երաժիշտ նշանավոր այս վանականը ապրել ու ստեղծագործել է Ը դարի վերջերում և Ը դարի սկզբներում: Մխիթար վրդ. Այրիվանեցին Ստեփանոս Սյունեցու վկայաբանության մեջ Գրիգոր Գռվիկ վարդապետի մասին գրում է. «Եւ էր ընկեր սորա (խոսքը Ստեփանոս Սյունեցու մասին է) ի նմին քաղաքէ ոմն Գրիգոր անուն ի սուրբ ուխտէն Այրի վանուց, որ է հիմնարկեալ ի Սուրբ Գրիգորէ...»: Երկուսն էլ՝ Ստեփանոս Սյունեցին և Գրիգոր Գռվիկ վարդա-

պետը, «առաջադէմք ի գիտութեան գրոց են յարուեստս երաժշտականութեան: Ուսան կամենայն սահմանս փիլիսոփայութեան ի-մաստնոց արտաքնոց և քաջատեղեակ եղեն աստուածաշունչ մեկնողաց»: Ուսումնառության նպատակներով Գրիգոր Գռվիկ վարդապետը մեկնել է Աթենք, ծանոթացել փիլիսոփայության հին ու նոր մեկնություններին, բայց հիմնականում մասնագիտացել երաժշտության մեջ: Կոստանդնուպոլսում եղած ժամանակ նա ծանոթացել ու շփվել է ժամանակի բյուզանդական հայտնի բանաստեղծ-երաժիշտների, այդ թվում նաև Գերմանոս Պատրիարքի հետ: Չնայած Գրիգոր Գռվիկ վարդապետը մասնագիտությամբ երաժիշտ էր, բայց դա չխանգարեց, որ նա մեծ հաջողությամբ հունարենից հայերեն թարգմանի Դիոնեսիոս Արիսպագացու, Նեմեսոսի, Գրիգոր Նյուսացու աշխատությունները: Գեղարդա վանք վերադառնալով, Գրիգոր Գռվիկ վարդապետը ծավալում է մանկավարժական և ստեղծագործական բեղուն գործունեություն: Նրան է վերագրվում գիշերային ժամու և ճրագալույցի որոշ երգերի եղանակավորումը: Նրան լավ ծանոթ է եղել նաև այդ ժամանակ մեծ հեղինակություն վայելող, արևելյան քրիստոնեական երգարվեստի խոշոր գործիչներից մեկի՝ Ռոմանոս Երգեցողի անունով Հայաստանում տարածված սաղմոսատիպ (վանկային) եղանակները: Գրիգոր Գռվիկ վարդապետը ժամանակակիցների համար եղել է մեծ հեղինակություն և ճանաչվել նաև որպես հրաշագործ:

Գեղարդա վանքի համար Ը դարից հետո շուրջ չորսհարյուրամյա մշակութային ամոլության մի ժամանակահատված է սկսվում, որը համընկնում է արաբական ու սելջուկյան աշխարհակործան արշավանքներին ու տիրապետությանը: Հայ վանականությունը ընդհանրապես և Գեղարդա վանքի միաբանությունը մասնավորապես այդ շրջանում քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով ժամանակ ու հնարավորություն չունեցան նախկին շրջանում սկսված լուսավորական ու մտավոր մեծ շարժումը շարունակելու: Այդ շրջանից մեզ են հասել չնչին գրական գործեր, որոնց հեղինակները կամ գրիչները մեծ կոհողության, նույնիսկ ի գին իրենց սեփական կյանքի, կարողացել են մտավոր ասայության այդ շրջանը լցնել գրած կամ արտագրած մատյաններով, մի կերպ վառ պահելով լուսավորության ու մշակույթի հանգչող ջահը:

Ս. Գեղարդա վանքում վերակենդանության դրական նշաններ են զգացվում ԺԲ դարից հետո: Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի անունով մի արձանագրության մեջ, որը գտնվում է Աստվածածնի տաճարում, վերաբերվում է 1181 թ., հիշատակվում է, որ նա՝ Ստեփանոս Աղվանից կաթողիկոսը, հաստատվելով Ս. Գեղարդա վանքում որպես միաբան, վանքի մատենադարանին է նվիրում մի քանի հայերեն ձեռագրեր:

Գեղարդա վանքից մեզ հասած առաջին ձեռագիրը 1190 թվականից է՝ Տոնապատճառ (տես Մատենադարան, ձեռ. № 3795), որը գրվել է Փիլիպպոս քահանայի ձեռքով: Գրիչը հիշատակարանի մեջ հայտնում է. «Տառապանաք եւ պանդխտութեամբ գրեցի զսա ի սբ. ժողովարանիս Այրիվանից»: Այս ձեռագիրը իր ժամանակին ուսումնասիրության առարկա է դարձել Գարեգին վրդ. Հովսեփյանի կողմից (հետագայում՝ կթղ. Անթիլիասի), որի մասին մեծանուն գիտնականը ասում է. «Իբրև մեկը հնագույն տոնապատճառներից, արժանի է ուշադրության»:

Մեզ հասած Գեղարդա վանքի այդ շրջանի մատնանշված ամենահին ձեռագիրը գալիս է հաստատելու, թե Այրիվանքը սելջուկյան արշավանքներից հետո միայն, ԺԲ դարի կեսերից, կենդանության նշաններ է ցույց տալիս: Նշված ձեռագիրը հետաքրքիր է նաև իր գրչությամբ, ինչպես նաև պահպանված իր կազմով, որը դրվագված է հյուսածո զարդերով: Այս ամենը հաստատում են, որ նույնիսկ մտավոր ամոլության ու քաղաքական դժբախտ այդ ժամանակներում գրչության արվեստը իր ամբողջության մեջ Գեղարդա վանքում բարձր մակարդակ ուներ:

ԺԳ դարում, երբ Զաքարյան իշխանների նախաձեռնությամբ և նյութական կոհողությամբ կառուցվում էին Ս. Գեղարդա վանքի գլխավոր կաթողիկեն ու գավիթը, կանգնեցվում էին բազմաթիվ խաչքարեր, այդ շրջանում Գեղարդա վանքը ժամանակակիցների աչքում վայելում էր հսկայական հեղինակություն: Վանքի միաբանության խոսքը, ինչպես վկայում է Կիրակոս վրդ. Գանձակեցին (ԺԳ դար), նշանակություն ուներ մեր Եկեղեցու վերաբերյալ ընդհանուր խնդիրներում: Դժբախտաբար այս շրջանից Գեղարդա վանքից մեզ է հասել ընդամենը միայն մեկ ձեռագիր Ավետարան՝ գրված 1217 թ., որը համարվում է Արևելյան Հայաստանի գրչության ու մանրանկարչության արժեքավոր մնացորդներից մեկը: Գրիչն է վանքի միաբաններից Աբելը, նկարազարդողը՝ Սարգիսը (տես Մատենադարան, ձեռ. № 4509): Ձեռագիրը թղթյա է, բոլորգրով գրված: Գարեգին վրդ. Հովսեփյանը, վերլուծելով այս ձեռագրի նկարազարդումները, եկել է այն եզրակացության, որ ինչպես նկարների, այնպես էլ զարդերի արվեստը զուտ արևելյան են, տարբեր կիլիկյան և բյուզանդական ման-



Ս. ԳԵՂԱՐԴ ՎԱՆՔԸ (ԺԳ Դ.)

բանկարչությունից, որոնք ավելի մեծ աղերս ունեն հայկական հին ավանդությունների հետ:

Մշակութային վարգացման պատմության տեսակետից Գեղարդա վանքի համար մի նոր ու փառավոր շրջան է սկսվում ԺԳ դարի կեսերից, երբ վանքն անցնում է Պռոշյան իշխանների հովանու տակ: Վանքում ստեղծվում է բազմամարդ միաբանություն, որի շարքերից դուրս են գալիս Հովհաննես և Մխիթար Այրիվանեցիների նման հռչակավոր գիտնական վարդապետներ, որոնք պատվավոր տեղ ունեն ոչ միայն մեր Եկեղեցու մեծանուն վարդապետների շարքում, այլ նաև իրենց հեղինակավոր դիրքն ու տեղը հայոց միջնադարյան մշակույթի Պառնասում: Այս շրջանում Ս. Գեղարդա վանք հռչակավոր միաբանությունը իր գնահատելի մասնակցությունն է բերում ժամանակի գրական-գեղարվեստական և հոգևոր կյանքին, որով և վանքը դարձել է իրավամբ՝ «տուն հաւատոյ Հայաստանեայց»:

Հովհաննես Գառնեցի վարդապետը ծնընդով Գառնի ավանից էր: Ժամանակակիցների համար նա սուրբ մարդու հռչակ էր վայելում, և ճանաչում էին նրան որպես գիտական մեծ հեղինակություն: Կիրակոս Գանձակեցի վարդապետը նրա մասին գրում է. «Առաքինի, վարմանալի վարուք, գործոդ պատուիրանացն Աստուծոյ...ի սուրբ ուխտէն Այրիվանաց... ի մանկական տիոցն արհամարհեալ զամենայն ինչ կենցաղոյս, լքեալ զպգդ եւ զտուն, յանապատ տեղիս բնակեր: Սիրէր առանձին լինել անպբաղապես խօսել ընդ Աստուծոյ, տուեալ զինքն ապգի-ապգի ճգնութեան, պահոց եւ աղօթից, գետնատարած անկողնօք եւ անհանգիստ աշխատութեամբ, շրջելով ի տեղտջէ տեղիս. եւ լուսաւորելով զպատահեալսն»: Անվանի այս վարդապետը հեղինակություն էր և՛ արևելյան վարդապետների, և՛ կիլիկյան Հայաստանի վարդապետների համար: Կյանքի վերջին շրջանում Գառնեցի վարդապետը ուխտի է գնում Երուսաղեմ, կյանքի վերջին տարիները անց է կացնում Հռոմկլայի Հայրապետանոցում, ուր նրան հրավիրել էր Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսը (1221—1267): Այս փաստը ինքնին հաստատում է Հովհաննես Գառնեցու՝ անուրանալի հեղինակությունը նույնիսկ Հայոց կաթողիկոսի համար: Կիլիկիայում եղած ժամանակ Հովհաննես վարդապետը սրտի ցավով ականատես է լինում կաթոլիկների ապգադավ գործունեությանը և պայքարում նրանց դեմ, «որ կամեցան ապգէ ապգս փոխել եւ արհամարհեցին զմի մկրտութիւն եւ եղեն Հռոմ կամ Ֆրանգ կամ Ասորի»:

Հովհաննես Գառնեցի վարդապետը իր անվիճելի վաստակն ունի նաև մեր Սաղմոսարանի խմբագրման ու սրբագրման գործում: Միջնադարում Սաղմոսարանի շատ օրինակներ չկային: Եկեղեցիներում այն անգիր էր ասվում: Այդ պատճառով էլ բավական փոփոխության էր ենթարկվել Սաղմոսարանը բնագրի հետ համեմատված: Սաղմոսարանի սրբագրության առաջին պատիվը պատկանում է գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, մանկավարժ, մատենագիր Հովհաննես Սարկավագ Իմաստասեր վարդապետին, որը ապրել է ԺԱ դարի վերջերում և ԺԲ դարի սկզբներում: ԺԳ դարում Հովհաննես Գառնեցի վարդապետը աղավաղված Սաղմոսարանի մասին գրում է. «Յանհոգութենէ ոմանց եւ ի սղալագիր գրչաց»—իմաստասիրը էր դարձել սաղմոսի հայերեն բնագիրը, մանավանդ որ «Հայք ի բերան առեալ ասեն, վայրաբար քահանայք եւ ռամիկք եւ մանկունք եւ կոչեռք եւ հաւատաւոր կանայք»: Ճիշտ գնահատելով Սաղմոսարանի նոր խմբագրման անհրաժեշտությունը, մեկնում է Հաղպատի վանք, որտեղ ուսանել և ապրել էր մեծանուն Հովհաննես Սարկավագ վարդապետը իրենից շուրջ մեկ դար առաջ: Երկար փնտրտուքից հետո Գառնեցի վարդապետին հաջողվում է գտնել Հովհաննես Սարկավագ վարդապետի կողմից խմբագրված Սաղմոսարանի օրինակը: Ձեռքի տակ ունենալով Սարկավագ վարդապետի կողմից խմբագրված Սաղմոսագրքի միակ օրինակը, ինքն այն համեմատում է ավելի հին օրինակների հետ և, վերջնական խմբագրման ենթարկելով, հանձնարարում է գրիչներին՝ բազմացնելու այն: Հովհաննես Գառնեցի վարդապետի կողմից խմբագրված Սաղմոսարանը հայ մատենագրության մեջ մտել է որպես վերին աստիճանի հեղինակավոր խմբագրություն: Միջնադարում շատերն են արտագրում «Ի յընտիր աւրինակէ Գառնեցւոյ» Սաղմոսարանից:

Հովհաննես Գառնեցի վարդապետը նաև բանաստեղծ էր, շարականագիր: Նրա գրչին են պատկանում հոգևոր երգեր, աղոթքներ, խրատական գործեր, որոնք կրոնա-բարոյական բնույթից բացի, ունեն նաև կենցաղային, ճանաչողական արժեք: Հետաքրքրական են նրա խրատական գործերը հատկապես վանականությանը ուղղված մանավանդ. «Սբ. հօրն Յովանեսի Գառնեցոյ ասացեալ խրատ կրոնավորաց» թուղթը, որի մեջ նա բացատրում է, թե ի՞նչ է բարին և ի՞նչը՝ մեղքը: Բարին, ելրակացնում է հեղինակը, բարին խորհել, խոսել, վաստակել, տառապյալներին օգնել, դատաստանից վախենալ և այլն: Սրանք կրոնավորական կյանքի դրա-

կան կողմերն են: Ընդհակառակն՝ մեղք է ամբարտավանությունը, ծուլությունը, երդվելը, մարմին պարարելը, եղբայրատեցությունը, հիվանդին չայցելելը, «Մեղք է բարկ ծիծաղելն եւ կատակ առնելն, դատարկաբանելն»: Նույն այդ թղթում հորդորում է կրոնավորներին մշտապես վգաստ լինել, այլապես չարը մեկ կշեռի հոգևոր ճշմարիտ ճանապարհից: «Ար՛դ, ով պատուական եղբայր, վաւրացիր եւ քաջ լեր», բայց պատվիրում է նաև լինել խոնարհ, որովհետև «եթէ բուն իսկ ի գլուխ եւ ի գագաթն առաքինութեան ելանիցիս եւ խոնարհութիւն ոչ ունիցիս, ոչինչ օգտիցիս»: Նույն այդ խրատում Հովհաննես Գառնեցի վարդապետը բացատրում է աղոթքի ժամերն ու կերպը և անմիջապես ավելացնում, որ կրոնավորի համար միայն աղոթքը բավարար չէ, «Զի ոչ եթէ քաջաթռիչ արծիւն երկու թեւօքն միայն լոկ բարձրանայ, այլ ունի փետուրս մանր եւ մեծ, եւ ամենայն վօրութեամբն սփռեալ սլանայ ի բարձունս»: Աղոթքի հետ պետք են ուրիշ առաքինություններ ևս, «Պարտ է հանապազ գիրք կարդալ առտնին առանձինն վեղբօրն կարիսն կատարեա, կարելով, կարկատելով, կախելով վչուխայն եւ վայլ տկարութիւնսն»: Ըստ Հովհաննես Գառնեցի վարդապետի եկեղեցական առաքինություններից պետք է լինի նաև խոնարհությունը, որովհետև «Թէ վամենայն ուրէնս կատարես եւ խոնարհութիւն չունիս, իվուր եւ ընդ վայր աշխատիս, եւ ոչինչ աւգտիս յամենայն բարեգործութեան քո, որպէս այն որ ի յաւդ փչէ եւ կամ ծակ կարաս ջուր արկանէ»:

Հովհաննես Գառնեցի վարդապետի ժամանակակիցն է մատենագիր, բանաստեղծ, մանկավարժ Մխիթար վարդապետ Այրիվանեցին, որը մեր մշակույթի պատմության մեջ ունի իր բացառիկ տեղն ու արժեքը: Նշանավոր այս եկեղեցականը Հովհաննես վրդ. Գառնեցուց հետո գլխավորում է Գեղարդա վանքի վարդապետարանը և միևնույն ժամանակ զբաղվում հոգևոր ու գրական գործունեությամբ: Մխիթար Այրիվանեցի վարդապետի կյանքի մասին, դժբախտաբար, քիչ բան է հայտնի: Դատելով իր ձեռքով գրված ժամանակագրությունից, որը վերջանում է 1289 թվականով, և Գեղարդա վանքի նրա քարայրի ճգնարանի պատի հայտնի մեկ արձանագրությունից, որը գրված է իր մահվանից մեկ տարի առաջ, 1288-ին, երբ ինքը արդեն 67 տարեկան էր, Այրիվանեցու ծննդյան թվականը կլինի մոտավորապես 1222 թվականը:

Մխիթար Այրիվանեցու ամենավաղ շրջանի ստեղծագործությունը համարվում է Ճառընտիրը (Մատենադարան, ձեռ. № 1500), որն իր հարուստ բովանդակությամբ գնահատվում է ԺԳ դարի լավագույն ձեռագրերից մեկը: Այն հսկա մի թղթյա ձեռագիր է: Ունի 1113 թերթ, վերջից էջեր են պակասում՝ գրված հեղինակի ձեռքով: Ճառընտիրն իր բազմաժանր բովանդակությամբ գալիս է հաստատելու, որ Մխիթար վրդ. Այրիվանեցու ժամանակ Գեղարդա վանքը պետք է որ ընդարձակ և հարուստ գրադարան ունենար և այսօրվա հասկացողությամբ գիտական միաբաններ, որոնց գործնական օգնությամբ հնարավոր է եղել մի այդպիսի բազմաբովանդակ ժողովածու պատրաստել, ինչպիսին Մխիթար Այրիվանեցի վարդապետի Ճառընտիրն է: Ճառընտիրը, բացի Հին և Նոր Կտակարաններից, իր մեջ ունի նաև անվավեր գրքեր, որոնց մեծ մասը այսօր գիտությանը հայտնի են Այրիվանեցու Ճառընտրից, կա մեր ժամագիրքն ու պատարագամատույցը, Փիլոն Եբրայեցու, Գրիգոր Աստվածաբանի, Եվագրի և բազում այլ ճառեր:

Այրիվանեցու երկրորդ գործը ժամանակագրությունն է, որի մեջ խոսում է հայկական, վրացական, բյուզանդական, արաբական, սելջուկյան հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների մասին: Այս գործում հետաքրքիր է պատմագրերի ցանկը, որոնց մեջ անուններ կան, որ առայսօր գիտությանը հայտնի են միայն Այրիվանեցու ժամանակագրությունից:

Այս գործի երկրորդ մասը Ս. Գրքի ժամանակագրությունն է, որը նույնությամբ կա մեր շատ մատենագիրների մոտ: Երրորդ մասը վերաբերվում է հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմությանը: Արժեքավոր է իր ժամանակաշրջանի քաղաքական ու կրոնական դեպքերի շարադրանքը:

Այրիվանեցու մյուս կարևոր աշխատանքը Ստեփանոս Սյունեցու վկայաբանությունն է, որը նա գրել է Վայոց ձորի Թանատլաց վանքի շինության տոնի առթիվ (1273—1279 թթ.), որին ինքը ներկա է եղել որպես Պռոշյանց տան եպիսկոպոսը:

Մխիթար Այրիվանեցին նաև բանաստեղծ է: Նրա գրչին են պատկանում մի քանի տասնյակ գանձեր և տաղեր, ինչպես նաև մի Գանձարան ժողովածու, որի և՛ տեքստը, և՛ եղանակավորումը հենց իրենն են: Այս Գանձարան ժողովածուն տեսնելու և ընդօրինակելու էին գալիս Հայաստանի տարբեր վանքերից և գրչակենտրոններից:

Երախտավոր այս մեծ վարդապետի գրչին է պատկանում նաև ծիսական Մաշտոցի մեջ մտած «Նորակերտ գիր օրհնելու» կանոնը, որի համար նա հորինել է հատուկ աղոթք և գանձ: Գանձում գիրքը ներբողվում է որպես հարսի (եկեղեցու) զարդարանքի մասեր.

«Խնդա խորանդ լուսոյ, խորհրդարանդ Աստուծոյ, Ընկալ զընծայս խորհրդոյ՝ Զգիրս աւրինաց հաւատոյ»: Կամ նույն կանոնի համար գրված աղոթքը, որի մեջ հեղինակը արտահայտել է իր և ժամանակակիցների պաշտամունքը հայ գրքի, նրա նշանակության, նրա կատարելիք հրաշքի մասին մեր ժողովրդի կյանքում: Աղոթում խնդրում է օրհնել «զնիւթ մելանիս եւ գրչութիւն գրչինս... զստացողս եւ զգրողս, զկազմողս... զնիւթ կտաւոց եւ վարշամակաց սոցա... զտախտակս տառիս եւ զպահարանին... զկաշի կազմի սոցա եւ զսեկ շարագարի... զնիւթ պղնձոյ, ըզմարգարտաց՝ արտաքին զարդու» և այլն: Ժամանակակիցների և հետնորդների համար Մխիթար Այրիվանեցի վարդապետը մեծ հեղինակություն էր ոչ միայն որպես աղոթող ճգնավոր, այլ նաև մեծ մանկավարժ ու բանաստեղծ: Երախտաշատ այս մեծ վարդապետի մահվանից շատ հետո, երբ Հայաստանի տարբեր վարդապետարաններում արդեն կային Մկրտիչ և Հովհաննես Երզնկացիներ (ԺԳ դար), Խաչատուր Կեչառեցի (ԺԳ—ԺԴ դդ.), Կոստանդին Երզնկացի (ԺԳ—ԺԴ դդ.), Ֆրիկ (ԺԳ—ԺԴ դդ.), Առաքել Սյունեցի (ԺԴ—ԺԵ դդ.), Հովհաննես Թլկուրանցի (ԺԴ—ԺԵ դդ.) և շատ ուրիշներ, որոնցից շատերը հաճախ գալիս էին Գեղարդա վանք ոչ միայն աղոթելու, այլ նաև տեսնելու և սովորելու մեծ Այրիվանեցու թողած գրավոր ժառանգությունից: ԺԴ դարի տաղասացներից Գրիգոր Խլաթեցի վարդապետը իր բանաստեղծություններից մեկում գրում է.

«Զայրի վանուց անուն լըւեալ,
Ընտիր գանձուցըս (Մխիթարայ)
հանդիպեալ:
Եւ յայնմ աւրէ ցանկացեալ,
Տեսլեան տեղւոյս ես տառապեալ»:

Դժբախտաբար, Գեղարդա վանքում Հովհաննես և Մխիթար վարդապետների սկսած լուսավորական ու մշակութային գործը արժանավոր շարունակողներ չունենալու պատճառով ԺԳ դարի մշակութային կյանքը վերջանում է Մխիթար Այրիվանեցի վարդապետով: Դրանից հետո շուրջ մեկ և կես դար դարձյալ ամոլության շրջան է նկատվում Գեղարդա վանքում:

ԺԵ դարի Գեղարդա վանքի մշակութային կյանքի վերակարթոնքը կապվում է Սիմեոն Այրիվանեցի ռաբունապետի մշակութային գործունեության հետ: Գեղարդա վանքում գրված մի ձեռագիր Հայսմավուրքի հիշատակարանում Սիմեոն ռաբունապետի մասին ասվում է. «Աստուածահաճոյ եւ արդիւնական եւ Մեծ վարդապետն Հայոց Սիմէոն, որ յայնըմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրեւ կարեգակն»: Սիմեոն Այրիվանեցի վարդապետը ծագումով Տաթևից էր: Աշակերտել էր Գրիգոր Տաթևացի վարդապետին: Ուսման ընթացքը ավարտելուց հետո հաստատվում է Գեղարդա վանքում և իրեն ամբողջովին նվիրում մանկավարժական աշխատանքին: Անխոնջ այս եկեղեցականի մանկավարժական գործունեության մասին ձեռագրերից մեկի հիշատակարանում ասվում է այսպես. «Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ, ժողովեալ յուսուցանել զհին եւ զնոր Մատեան աստուածաշունչ գրոց զնուրբս եւ զարտաքին փիլիսոփայութիւն ամս տասն»: Թե որքան ձեռագիր մատյաններ են գրվել կամ արտագրվել «Արիաշան և քաջ» ռաբունապետի կողմից, դժվար է ասել, բայց այսօր նրա անունով մեզ են հասել մի շարք ձեռագրեր, որոնցից երեքը՝ մի Աստվածաշունչ, մի ճառընտիր (տոնական) և մի Հայսմավուրք: Սիմեոն վրդ. Այրիվանեցին, հաստատվելով Գեղարդա վանքում, դրանք նվիրում է վանքի Մատենադարանին: Ձեռագրերը, որոնք պահվում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, համարվում են հայ գրչության արվեստի լավագույն գործեր: Թե որքան հեղինակություն է ունեցել Սիմեոն Այրիվանեցին Գեղարդա վանքի միաբանության մեջ, հաստատում է նրա անունով արձանագրությունը, որը գտնվում է Պապաքի և Ռուպաքանի վիմափոր ժամատան ձախ դասի սյան վրա.

«Սուրբ նշան Տէրունական
Սիմէոն Վարդապետին լեր պահապան,
Հոգոյ նորայ պատսպարան
Եւ յանցանացն քաւարան,
Որ ետ պարգեւս անանցական
Եկեղեցւոյս սուրբ Գեղարդեան...»:

ԺԵ դարում, բացի Սիմեոն ռաբունապետից, Ս. Գեղարդա վանքում հիշվում է նաև Գալուստի և Սիրամարգի որդի Մատթեոս քահանան, որ աշակերտել էր Սիմեոն ռաբունապետին և հետագայում հռչակվել որպես քաջ քարտուղար: Այս համեստ քահանայի ձեռամբ գրվում և արտագրվում են մի շարք ձեռագիր մատյաններ: 1447 թվականին նա գրում է մի Շարակնոց, որը արտագրված էր «Ի լաւ եւ յընտիր օրինակէ առաջին իմաստնոց եւ վարժապետաց Սիսոյ» (Բեռլին, արքայական մատենադարան, № 37), Գարեգին կթղ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Բեյրութ, 1969, էջ 217): 1452 թ. Մատթեոս քահանան գրում է մի այլ Շա-

ռակնոց ևս (Մատենադարան, ձեռ. № 3402)՝ արտագրված հռչակավոր Խլկեցի օրինակից (Գրիգոր Խուլի անունով): Բավմաբեղուն այս գրչից մեկ է հասել 1459 թվականին ավարտած մի ճաշոց (Մատենադարան, ձեռ. № 6272) և մի շքեղ Հայսմավուրք (Մատենադարան, ձեռ. № 6244): ԺԵ դարից Ս. Գեղարդա վանքի մատենադարանից մեկ է հասել նաև մի ձեռագիր Մաշտոց՝ գրված 1458 թ. (Մատենադարան, ձեռ. № 1027) և մեկ Հայսմավուրք՝ գրված 1488 թ. (Մատենադարան, ձեռ. № 4859): Մատթեոս քահանան այլ ձեռագրեր ունի ընդօրինակած Եղվարդա և Մեղուանց Անապատներում ևս: Մատթեոս քահանան նաև գրչության ուսուցիչ էր: Նրա աշակերտներից Հովհաննեսը Այրիվանքում, Ստեփանոսը՝ Հավուց թառում, զբաղվում են գրչությամբ:

ԺԵ դարում Գեղարդա վանքում հայտնի են Դավիթ և Հովհաննես եպիսկոպոսներ, Հովհաննես վարդապետ, Հովհաննես աբեղա, Գրիգոր և Ստեփանոս գրիչները: Գեղարդա վանքի հետ էր կապված նաև ԺԵ դարի նշանավոր մանրանկարիչ Ստեփանոս Առինջեցին: Հիշվում են բավմաթիվ թուղթ կոկողներ, գրիչներին օգնողներ, կալմողներ և այլն: Գեղարդա վանքի սաներից ոմանց հանդիպում ենք հարևան Հավուց Թառ, Աղջոց վանք, Մանուելի Անապատ գրչակենտրոններում, որոնք հաճախ դիմում էին Գեղարդա վանքի գրիչներին ու Մատենադարանին՝ սովորելու և օգտվելու կարևոր ձեռագրերից:

ԺԶ—ԺԷ դարերից մեկ ոչինչ չի հասել: ԺԸ դարից մեկ է հասել մի ժողովածու՝ գրված 1707 թ. (Մատենադարան, ձեռ. № 1796):

Գեղարդա վանքը, մեր մյուս վանքերի նման պատմության դժնդակ պայմանների բերումով, հաճախ ենթարկվել է թալանի ու կողոպուտի: Վայրագ նվաճողները մի քանի արծաթի համար ոչ միայն մորթակերծ էին անում տասնյակ ու հարյուրավոր անմեղ վանականների, այլև գերեվարության ու շատ հաճախ էլ խարույկի ճարակ դարձնում մեր սրբազան մատյանները: Հաշվի առնելով Գեղարդա վանքի անապահով վիճակը ԺԹ դարի սկզբում թալանված վանքի վերջին ձեռագրերը տեղափոխվում են Մայր Աթոռի ձեռագրատուն: Գուցե այդ է պատճառը, որ այսօր Գեղարդա վանքից այդքան քիչ ձեռագիր մատյաններ են հասել մեկ, որոնց մի մասը մեծ խնամքով պահվում և ուսումնասիրվում է Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Մյուս մասը աշխարհի տարբեր հավաքածուներում է գտնվում, որոնց հանգամանալից ուսումնասիրությունը, անկասկած, կհարստացնի Գեղարդա վանքի մշակութային կյանքի պատմությունը և կարժեքավորի նրա տեղը հայ մշակույթի ընդհանուր գանձարանում:

Ս. Գեղարդա վանքի մշակութային կյանքի համառոտ այս ակնարկը թերի կլիներ, եթե չասվեր նաև, որ Լուսավորչի Գահը բարձրանալուց միայն երկու տարի հետո, 1868 թվականին, լուսահոգի Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսը առաջին անգամ հնարավորություն ունեցավ ամառային հանգստի գնալու Ս. Գեղարդա վանք: Իր այցելության առթիվ, տեսնելով դպրոցական գործի անմխիթար վիճակը, հրամայում է մոտակա գյուղի երեխաների համար վանքում հիմնադրել մի դպրոց, որտեղ մինչև Ի դարի ընկզբները ուսանում էին հատկապես Գողթ գյուղի երեխաները:

Հպարտորեն կարող ենք ասել, որ Ս. Գեղարդա վանքի դպրոցն ու վարդապետարանը, մեր մյուս վարդապետարանների ու դպրոցների հետ, անցյալում լավագույնս կատարեցին իրենց առջև դրված պետականությունից զուրկ մեր ժողովրդի հոգևորլուսավորական և մշակութային ծանր, բայց պատվաբեր գործը:





ԳՐԻԳՈՐԻՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՃՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏԻՆ ԹԱՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Էջմիածին» ամսագրում* հաղորդվել էր, որ Գերմանիայի Պասսաու քաղաքում գտնվել էր գերեզմանը Գրիգորիոս անունով մի հայ պանդուխտ արքեպիսկոպոսի, որը մահացել էր 1093 թվականին:

Նիդեռնբուրգ վանքի վերանորոգված Ս. Խաչ եկեղեցում պատրաստվել էր մի նոր տապան, ս. խորանի առաջ, նախկին տեղում, ամփոփելու համար հիշյալ արքեպիսկոպոսի աճյունները:

Այս առթիվ քաղաքի դոկտոր Անտոնիոս Հոֆման եպիսկոպոսը ցանկացել էր, որ հայկական ծեսով կատարվի հանգուցյալի վերջին թաղման արարողությունը: Նա այդ մտադրությամբ էլ դիմել էր Բավարիայի հայոց հոգևոր հովիվ Հակոբ վարդապետին:

23 հունվար 1982-ին բազմաթիվ հայեր փութացել էին Պասսաու: Արարողության մասնակցելու եկել էր Մյունխենի հայկական «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարությամբ պրն. Էդուարդ Մյունցյանի:

Ժամը 11-ին սկսվեց արարողությունը: Ս. Խաչ եկեղեցին լիքն էր գերմանացի և հայ հավատացյալներով, ինչպես նաև քույր Եկեղեցիների՝ հույն, ղպտի և բողոքական ներկայացուցիչներով: Արարողության ընթացքում Հակոբ վարդապետը հանդես եկավ հետևյալ խոսքով.

«Հիշեցեք ձեր առաջնորդներին, որոնք ձեզ Աստծու խոսքն ասացին: Նայելով նրանց ընթացքին, հետևող եղեք նրանց հավատին» (Եբր. ԺԳ 7):

Համաձայն սույն առաքելական հանձնարարության եկել ենք մենք հայերս այստեղ մեր հարգանքի տուրքը մատուցելու հայ պանդուխտ արքեպիսկոպոսի հիշատակին, որի նշխարները դարեր շարունակ հանգչել են այս հյուրընկալ քաղաքում:

Ստույգ չգիտենք, թե Գրիգորիոս արքեպիսկոպոսը ինչպես է հասել այս քաղաք: Այն ժամանակ մեր հայրենիքում սելջուկների արշավանքի հետևանքով մոլեգնում էր մի ահռելի հալածանք, ջարդ և կողոպուտ: Ժամանակակից պատմիչները սարսափազդու դրվագներով նկարագրել են հիշյալ իրադարձությունները: Օրինակ, պատմիչ Վարդան վարդապետը վկայում է այս մասին. «Ալփասլանը (սելջուկների ղեկավարը) մի փոսի մեջ հպար մարդ սպանել է տալիս ու լողանում նրանց արյան մեջ»:

Դրանից հետո էլ քանի՞-քանի անգամներ սելջուկների հաջորդները հալածեցին հայերին և փորձեցին նույնիսկ նրանց բնաջնջել: Սակայն այնքան ժամանակ, որ մեր հայրերը հիշեցին իրենց առաջնորդներին ու նրանց կյանքով ու հավատով ընթանալ փորձեցին, սիրով նախընտրեցին մահը, քան անհավատարմությունը հանդեպ Հիսուսի Քրիստոսի:

Այսօր, պանդխտության մեջ մահացած հայ արքեպիսկոպոսի շիրմի առաջ, եկել ենք մենք՝ հայերս, նաև վկայություն տալու, թե հայ ազգը, հակառակ բոլոր տառապանքների, մնացել է հայ և քրիստոնյա: Այսու կհուսանք ուրախացնել սրբազանի հոգին:

Վերջում ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել սույն թեմի առաջնորդ Հոֆման եպիսկոպոսին ու նրա աշխատակիցներին, որոնք մեկ առիթը տվեցին միասին լինելու, միասին աղոթելու ու հարգելու հայ արքեպիսկոպոսի հիշատակը:

Թող Աստված մեր բոլորին առատորեն իր շնորհքը պարգևի, որպեսզի մենք էլ մեր հայրերի նման, մեկ վիճակված բարի պայքարը կարողանանք մղել:

* «Էջմիածին», 1981, № Է, էջ 46:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Այնուհետև տապանի չորս կողմերը կնքվեցին համաձայն Հայ Եկեղեցու կանոնական ծեսի:

Ընկուվենու տոկուն փայտից պատրաստված դագաղում աճյունների հետ դրվեց նաև պղնձյա մի փոքրիկ տուփ, որի մեջ հետևյալ հաստատագիրը կար.

«Այստեղ հանգչում են նշխարները Գրիգորիոս Հայաստանցի արքեպիսկոպոսին, որ 23 սեպտեմբերի 1093 թվականին արևի մի խավարման ընթացքում, կեսօրվան մոտերքը, Պասսաում մահացել է և թաղվել Նիդեռնբուրգի վանքապատկան Ս. Խաչ եկեղեցում: Եկեղեցու նորոգության ընթացքում, 1979 թվականին, գտնվեց դամբարանը՝ երկու կապարե սալիկների, մի լանջախաչի և բրոնզյա մի ճարմանդի հետ, որոնք հնարավորություն տվեցին հայտնաբերելու սույն պաշտոնյայի պատկանելիությունը: Մյունխենի հնությունների պաշտպանության շրջանային վարչության կողմից կատարված մանրամասն ստուգումներից հետո՝ արքեպիսկոպոսի նշխարները շաբաթ, 23 հունվարի 1982 թվականին հողին հանձնվեցին՝ ձեռամբ Գերմանիայի Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետ Տ. Հակոբ Գըլընճյանի և ներկայությամբ Պասսաու քաղաքի վիճակավոր դոկտ. Անտոնիոս Հոֆման եպիսկոպոսի, այստեղ կատարված մի հանդիսավոր արարողության ընթացքում. Թող նա հանգչի Աստծու խաղաղության մեջ»:

Արարողության ավարտին հատուկ պատրաստված մի մեծ շիրմաքար դրվեց տապանի վրա հետևյալ մեծատառ արձանագրությամբ.

«Աստ հանգչի Գրիգորիոս Հայաստանցի արքեպիսկոպոս, միայնակեաց ի Պասսաու և ուսուցիչ Սուրբ Էնգելմարի. մահացած 23 սեպտ. 1093»:

Վերջում տրվեց պաշտոնական մի ճաշկերույթ, որի ընթացքում դոկտ. Հոֆման եպիսկոպոսը իր շնորհակալությունը հայտնեց ներկաներին և ավելացրեց. «Շատ հավանական է, որ բազմաթիվ դարերից ի վեր, մի գուցե Գրիգորիոս արքեպիսկոպոսի մահվանից այս կողմը, առաջին հայածես արարողությունն է, որ այսօր այստեղ կատարվեց: Թեև մենք լեզուն չհասկացանք, սակայն պետք է ասել, որ շատ տպավորիչ էր արարողությունը, որովհետև այն կարողացավ հուզել նաև մեր սրտերը»:

Հակոբ վարդապետը իր պատասխան խոսքի մեջ շեշտեց, թե քրիստոնյա պատմական այլ դավանանքները և տարբեր ծեսերը երբեք արգելք պետք չէ լինեն Եկեղեցիների մերձեցման և համատեղ գործակցության, որի կարիքը ունենք մենք քրիստոնյաներս հատկապես այս դարաշրջանում, որտեղ դըժվար է լինում հաճախ այլական գաղափարախոսությունների միջից Աստծու ձայնը լսելը»:

Ճաշկերույթից հետո վանքի դահլիճում Հակոբ վարդապետը գերմաներեն լեզվով մի դասախոսություն տվեց հետևյալ նյութի շուրջ՝ «Հայ Եկեղեցու նկարագիրը անցյալում և այսօր», ծանրանալով Հայ Եկեղեցու բերած նպաստի վրա մեր ժողովրդի հոգևոր և ազգային կյանքում:

Վերջում Ռեգենսբուրգ քաղաքի շրջանային վարչության անդամ պրն. Յոզեֆ Վայկը մի հակիրճ դասախոսություն տվեց պատմական Հայաստանի մասին՝ ցուցադրելով նաև բազմաթիվ լուսապատկերներ հայ մշակույթի կոթողների վերաբերյալ: Իսկ դոկտ. Ռայներ Քրիստլայն զեկուցեց Գրիգորիոս արքեպիսկոպոսի դամբարանի պեղման աշխատանքների մասին:

Սույն հանդիսությանց մասին գնահատանքով արտահայտվեցին Բավարիայի հեռուստացույցը, մամուլն ու ռադիոն:

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸԼԸՆՃՅԱՆ





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 8—12-ը Մայր Աթոռի Վեհարանում տեղի ունեցավ Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովի տարեկան նստաշրջանը:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին աշխարհի չորս ցամաքամասերի տասընչորս երկրներից ժամանած քրիստոնեական տարբեր դավանությունների պատկանող շուրջ 40 հոգևորական և աշխարհական պատգամավորներ, դիտորդներ և հյուրեր:

Նստաշրջանը տեղի ունեցավ հետևյալ բնաբանով. «Պաղեստինյան հարցի լուծումը որպես բանալի Մերձավոր Արևելքի պրոբլեմի կարգավորման համար»:

Նստաշրջանի բացումը կատարվեց Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի աղոթքով: Ապա Հայոց Հայրապետը հանդես եկավ ժողովի մասնակիցներին ուղղված ողջույնի և օրհնության հետևյալ ուղերձով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ուրախությամբ ողջունում եմ ձեզ բոլորիդ, որ հավաքվել եք այստեղ, իբրև անդամները Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովի:

Մեր դարի երկրորդ կեսի ամենանշանակալից և համաժողովրդական շարժումներից մեկն է միջազգային խաղաղության շարժումը, մի շարժում, որ աստվածահաճո է, մարդասիրական և բարոյապես հրամայական: Հետևաբար, շատ բնական է, որ քրիստոնյա Եկեղեցիները մասնակցեն այս շարժումին:

Մեր այս նույն պատմական ժամանակաշրջանը հատկանշող մեծ երևույթներից մեկն է նաև էկումենիկ շարժումը: Իմ գիտակցության մեջ էկումենիկ շարժումը և խաղաղության շարժումը զուգահեռ ընթացող և զարգացող շարժումներ են:

Ահա այսպիսով, էկումենիկ տեսակետից ևս, խաղաղության շարժումը տևապես գրանվում է մեր եկեղեցական կյանքի զարգացման ճանապարհի վրա:

Ձեր հանձնաժողովի գումարումը այս օրերին տեղի է ունենում միջազգային բացառիկ հուզումնալից, լարված պայմանների մեջ: Այս մասին ես տվյալներ չեմ ներկայացնում, որովհետև բոլորիդ ծանոթ է այսօր միջազգային մթնոլորտը, որի մեջ ապրում ենք մենք՝ Եկեղեցիներ և ժողովուրդներ:

Ասեմ միայն այսքանը, որ Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ևս ծանրորեն մտահոգված են արդի միջազգային իրադրությամբ: Որովհետև, Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ողբերգական փորձառություն են ունեցել անցյալում՝ պատերազմների ընթացքում: Հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մեր Եկեղեցին և մեր ժո-

ղովուրդը կիսով չափ նահատակվեցին: Ծանոթ է ձեզ, հավանաբար, 1915—16 թվականներին Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում, երբ շուրջ երկու միլիոն խաղաղ հայ բնակչություն բնաջնջվեց: Այդ ցեղասպանությունից հրաշքով ազատվածները, որոնք կազմում են այսօրվա հայ սփյուռքը, ցրվեցին աշխարհով մեկ: Ահա թե ինչու մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը բացառիկ զգայություն ունեն խաղաղության և պատերազմի հարցերում:

Մենք սրտանց աղոթող ենք, որ աշխարհում խաղաղության դատը հաղթանակի, և ժողովուրդներ ու պետություններ գործակցեն համերաշխությամբ, փոխադարձ հասկացողությամբ, փոխադարձ վիշումներով գուցե, և ամեն միջոց օգտագործեն, բացի պատերազմի դիմելուց:

Այսօրվա աշխարհում ամենատագնապալի շրջաններից մեկը Մերձավոր Արևելքն է անշուշտ, ուր ապրում են շուրջ կես միլիոն հայեր՝ արաբական եղբայր ժողովուրդների ընտանիքում:

Ըստ երևույթին աշխարհագրական այդ շրջանում իրադրությունը բարդ է և հարցերի կենտրոնում, ինձ թվում է, գտնվում է Պաղեստինյան արաբ ժողովրդի հարցը. մի ժողովուրդ, որ իրավազրկված է, մի ժողովուրդ, որ իր բնակավայրից արտաքսված է, մի ժողովուրդ, որ ապրում է թափառական, թշվառության և զրկանքների մեջ, մի ժողովուրդ, որի ձեռքերը երկարում են դեպի այսօրվա մարդկությունը՝ սպասելով բոլորից արդարություն:

Մաղթում եմ, որ ձեր աշխատանքը այս օրերին մի կարևոր նպաստ հանդիսանա ի խնդիր Պաղեստինյան արաբ ժողովրդի արդար դատի լուսաբանման և պաշտպանության այն հավատքով, որ ի վերջո այդ իրավազրկված ժողովրդի բոլոր արդար իղձերը իրականանան: Որովհետև պարզ է, որ խաղաղության հիմքերը հաստատված պետք է լինեն արդարության վրա, որ խաղաղության հիմքերը հաստատված պետք է լինեն մարդասիրության վրա, որ խաղաղությունը հաստատված պետք է լինի միջազգային իրավունքի հիմքերի վրա:

Այս մի քանի մտածումներով ես ուզեցի ողջունել ձեր հավաքույթը այստեղ, Սուրբ Էջմիածնի կամարների տակ, Սուրբ գրական Արարատի փեշերին, որտեղից առաջին անգամ թռիչք առավ խաղաղության աղավնին՝ ձիթենու ճյուղը կտուցին:

Թող Աստուծո Սուրբ Հոգին առաջնորդ լինի ձեզ բոլորիդ և մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի խաղաղարար ոգին լուսավորի ձեր մտածումներն ու զգացումները:

Երանի խաղաղարարաց: Ամեն:

Նստաշրջանի աշխատանքների սկզբին ներածական խոսք ասաց Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի (ԽՔԿ) գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին: Նա համառոտակի նկարագրեց միջազգային հարաբերությունների վատթարացումը ներկա ժամանակաշրջանում, հատկապես Մերձավոր Արևելքում:

Նստաշրջանում գլխավոր զեկուցումով հանդես եկավ ԽՔԿ-ի Մերձավոր Արևելքի հանձնաժողովի նախագահ Հովհաննես Թոփուզյանը, որը ղեկավարում էր հանձնաժողովի նիստերը: Նրա զեկուցման թեման էր՝ «Պաղեստինյան հարցը, արդարություն և խաղաղություն տառապած մի ժողովրդի համար»:

Այնուհետև հաջորդական վեց նիստերի ընթացքում լսվեցին հարակից մի շարք զեկուցումներ:

Ներկայացված զեկուցումների շուրջ նստաշրջանի մասնակիցների միջև ծավալվեց աշխույժ բանավեճ: Ընդհանուր քննարկման ենթարկված կանոնի հարցերի շուրջ հանձնաժողովը հանգեց համապատասխան եզրակացությունների:

Նստաշրջանի վերջում ընդունվեց պաշտոնական մի հաղորդագրություն ժողովի աշխատանքների մասին:

Մարտի 10-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, նստաշրջանի մասնակիցները Երևանում այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ապա մեկնեցին Գառնի և Ս. Գեղարդի վանք՝ ծանոթանալու հայկական ճարտարապետության այդ երկու կարևոր պատմական հուշարձաններին: Ծիծեռնակաբերդում նրանք ծաղիկներ զետեղեցին Հայ նահատակաց հուշարձանին:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Մայր Աթոռի հյուրերը Էջմիածնի Մայր տաճարում ներկա եղան աղոթքի էկումենիկ շաբաթվան նվիրված երեկոյան հանդիսավոր ժամերգությանը:

Մարտի 11-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Հայոց Հայրապետը «Անի» հյուրանոցում հյուրերի պատվին տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը և Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, մայրավանքի ղեկավար աշխատողներ և այլ պաշտոնական անձինք:

Ընդունելությանը ներկա էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Ճաշկերույթի ընթացքում հանդես եկավ Վեհափառ Հայրապետը հրաժեշտի հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(11 մարտի 1982 թ.)

Ինչքա՜ն հաճելի է, որ եղբայրներ միատեղ լինեն:

Եվ ինչքա՜ն առավել հաճելի է, երբ նրանք միատեղ աշխատում են և գործում խաղաղության օգտին:

Ահա այդ աշխատանքն է, որ կատարեցիք դուք, հարգելի քույրեր և եղբայրներ: Եվ կարծում եմ, որ հոգեպես մխիթարված եք, որովհետև լավ գործ կատարեցիք, աստվածահաճ, բարի գործ: Եվ արդ, Իմ պարտականությունը կնկատեմ ձեզ բոլորիդ բերելու Իմ գնահատանքի խոսքը, նաև շնորհակալության խոսքը: Ես բավական երկար տարիներե ի վեր ծանոթ եմ քրիստոնեական Եկեղեցիների խաղաղության այս շարժման: Հաճախ անձնապես մասնակցած եմ տարբեր կոնֆերանսների, Պրագայում և այլ տեղերում: Եվ միշտ այն զգացմունքը ունեցած եմ, որ այս շարժումը հարապատորեն արտահայտիչն է հանդիսանում մեր օրերի մարդկության ամենասպնիվ իդեալների: Եվ ինչքան ժամանակները անցնում են և ինչքան նոր պայմաններ են ստեղծվում, այնքան առավել շեշտվում է կարևորությունը, արժեքը այս շարժումի:

Քիչ առաջ, հարգելի ընդհանուր քարտուղար պրն. Միրեժովսկին վկայում էր Ինձ, թե այս շարժումը հետզհետե առավել տարածում է գտնում համաշխարհային մակարդակի վրա, որի համար Ես պետք է շնորհավորեմ իրեն և այս կազմակերպության ղեկավարներին՝ դոկտ. Թոտ եպիսկոպոսին, միտրոպոլիտ Նիկոդիմին և իրեն՝ ընդհանուր քարտուղար պրն. Միրեժովսկուն, և նրանց բոլոր գործակիցներին:

Եվ կուզեմ նաև շնորհավորել հանձնաժողովի նորընտիր ղեկավար մարմնի անդամներին, որի մեջ, Մենք ուրախ ենք, որ կգտնվի նաև մեր Եկեղեցու ներկայացուցիչը՝ պրոֆ. Հովհաննես Թոփուզյանը:

Մենք խստապես համոզված ենք, որ խաղաղության համաշխարհային շարժումը մեր դարաշրջանը բնորոշող գուցե ամենակարևոր, ամենամարդկայնական շարժումն է:

Մտածում եմ, որ մենք՝ այսօրվաններս, տակավին ամբողջովին չենք կարողանում գնահատել կարևորությունը այս շարժման: Վստահ եմ, սակայն, որ ապագայում գալիք սերունդները այս դարաշրջանի վերջին տասնամյակները պետք է կոչեն խաղաղության պայքարի ժամանակաշրջան:

Խաղաղության գործը ճշմարտապես աստվածասեր շարժում է: Խաղաղության գործը մարդասիրական շարժում է ու նաև քաղաքակրթության պաշտպանության շարժում: Կուզենք ավելացնել նաև, որ լավատեսության շարժում է, լավատեսություն դեպի մարդը, լավատեսություն դեպի կյանքը, լավատեսություն դեպի մարդկության ապագան:

Հետևաբար բոլոր հիմքերը ունենք մեր բոլոր իմացական, հոգևոր ուժերով նվիրվել այս մեծ շարժումին, խաղաղության պահպանման նվիրական գործին:

Թող Աստված օրհնի խաղաղության և ժողովուրդների բարեկամության շարժումը:

Թող Աստված օգնական և մարտակից մնա միշտ բոլոր խաղաղարարներին:

Ձեզ բոլորիդ անսպառ ուժ ու եռանդ, հարատևության ոգի և միշտ նորանոր հաջողություններ:

Մենք սիրով միշտ պիտի սպասենք ձեզ, մեր դռները և մեր սրտերը բաց:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով. ամէն»:

Այնուհետև ելույթ ունեցան ԽՔԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին և ԽՔԿ-ի փոխնախագահ պրոֆ., դոկտ. Գերհարդ Բասարակը:

Սեղանի սասնակիցներին ողջունեց նաև տիար Ռուբեն Պարսամյանը, հանուն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի, և հաջողություն մաղթեց Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովին, նրա հետագա խաղաղասիրական գործունեության ճանապարհին:

Մարտի 12-ին, ուրբաթ օրը, առավոտյան, «Զվարթնոց» օդանավակայանում Մայր Աթոռի հյուրերին բարի ճանապարհ մաղթեցին Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը, Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:



ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը Վեհափառ Հայրապետին ուղղյալ իր վերջին նամակում հայտնում էր, որ 1981—1982 թվականների Վիեննայի համալսարանի բյուզանդագիտական ինստիտուտի ուսումնական տարեշրջանի երկրորդ կիսամյակին ինքը հրավիրվել է մի շարք դասախոսություններ կարդալու հայ ժողովրդի պատմության մասին, սկսբից մինչև ԺԱ դարը ներառյալ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է պատմական գիտությունների դոկտոր և Մայր Աթոռի միաբան Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանին, սույն բացառիկ առիթով, և նրան բարեմաղթում հաջողություն, այն համոզումով, որ նա գիտնականի բարեխղճությամբ, ձեռնհասորեն և ըստ արժանվույն կարդարացնի սույն պատվաբեր հրավերը:

Վիեննայի համալսարանի պատմության մեջ առաջին անգամն է, որ մի հայ եկեղեցական գիտնական հրավիրվում է դասախոսելու հայ ժողովրդի պատմության մասին:

Վիեննայի համալսարանի բյուզանդագիտական ինստիտուտում նախատեսվել են հետևյալ թեմաները, որպես դասախոսության նյութեր.

1. Հայասա-Ուրարտու-Երվանդունիք և Արտաշիսյան հարստություն.
2. Մեծն Տիգրան, մինչև Արշակունիների հարստության հիմնադրությունը, Արշակունիները, մինչև Մեծն Տրդատ.
3. Հայոց դարձը քրիստոնեություն: Արշակունիք և մարզպանական շրջան.
4. Հայ-բյուզանդական, հայ-իրանական հարաբերությունները: Հայաստանը Հուստինիանոսի շրջանում.
5. Հայաստանը արաբական լծի տակ.
6. Բագրատունիների թագավորությունը.
7. Բագրատունիների շրջանում Հայաստանի ներքին և արտաքին հարաբերությունները.
8. Հայ մշակույթի ծաղկումը Բագրատունիների օրով.
9. Բագրատունիների մայրաքաղաք Անին և այնտեղ կառուցված հայկական «հազար ու մի եկեղեցիները».
10. Հայ Եկեղեցու պատմությունը սկսբից մինչև ԺԱ դար.
11. Պատմություն հայ գրականության, ընկըսբից մինչև ԺԱ դար.
12. Հայ արվեստները:





ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ՎԱԽԱԽ

Ապրել է 13-րդ դարի սկզբներին, ամուսինն է Հասանը:

1221 թվականին Վախախը և Հասանը մի օրավար հող են նվիրել Սանահնի վանքին: Սանահնի վանքի մեծ գավթի հյուսիսային նավի կամարի վրա փորագրված է. «Թվին ՈՀ (1221): Ես՝ Հասան եւ Վախախ ամուսին իմ, տվաք ի Սանահինս ի Ծաղերոյն կՇատարևանք ամեն շահով մին աւրավար հող»[117]:

Շատարևանքը Ծաղեր գյուղի հանդամասերից մեկն է:

ԱՎԹԱ

Ապրել է 13-րդ դարի սկզբներին, ամուսինն է պարոն Արտավաղը:

Պարոն Արտավաղը Հաղարծնի վանքի հովանավորներից է, տեղական ազդեցիկ իշխան, Զաքարե և Իվանե եղբայրների սիրելին:

Պարոն Արտավաղն ու Ավթան վգալի միջոցներ են տրամադրել Հաղարծնի եկեղեցու և գավթի շինության և կահավորման համար: Արտավաղի նվիրատվական արձանագրությունը փորագրված է գավթի արևելյան արտաքին պատին: Եկեղեցուն տված միջոցների դիմաց Արտավաղին և Ավթային իրավունք է տրվել գավթի մեջ գերեզման ունենալու և մահարձան կանգնեցնելու: Մահարձան-խաչքարը կանգնեցված է եղել գավթի արևելյան՝ դեպի եկեղեցի տանող մուտքի հյուսիսային կողմում գտնվող պատվանդանի վրա: Խաչքարի վերնամասում փորագրված է. «Ես՝ Արտաւաղ և ամուսին իմ Աւթա, հաւատարիմ եւ սիրացեալ ի Իւանէի եւ Զաքարէի, կմեր հոգո արդիւնս ընծաեցաք ի շինութիւն եւ ի սպաս եկեղեցոյս: Եւ եդան ոսկերք մեր ընդ հովանեաւ սորա»[118]:

Արձանագրության շարունակությունում վանքի միաբանները, ի պատիվ պարոն Արտավաղի և Ավթայի, Աստվածածնի տոնի օրը պատարագ են սահմանել:

Հավանաբար պարոն Արտավաղի իշխանությունը տարածվել է նաև Նոր Գետիկի

---

117 Կ. Ղաֆադարյան, Սանահին, էջ 133:

118 Դիվան հայ վիմագրության, հ. 6, էջ 38:

վանքի վրա: Նոր Գետիկի Սուրբ Գրիգոր եկեղեցու ներսում, կիսակլոր պատին, պատուհանի տակ, փորագրված ընդարձակ արձանագրությունում վանքի միաբանները պարոն Արտավազին անվանել են պատրոն: Այն դարերում այդպես էին կոչվում հոգևոր և մշակութային կենտրոնի հովանավոր իշխանները: Միաբանները Դավիթ մարգարեի և Հակոբ Տյառնեղբոր տոնի օրը պատարագ են սահմանել պարոն Արտավազի համար:

ԴՈՒԴԱ

Ապրել է 13-րդ դարի քառասունական թվականներին:

1240 թվականին Դուդան նվերներ է տվել Սանահնի վանքին: Մեծ գավթի միջին նավի սյան կամարի վրա փորագրված է. «Ես՝ Դուդա, մայր Վարհամա եւ Քրդին, միաբանեցա Աստուածածինս, էտու արդիւնս... ի ՈՁԹ (1240)»[119]:

Արձանագրության շարունակությունից իմացվում է, որ վանքի առաջնորդ Ավետիս վարդապետը Դուդայի համար կարգադրել է տարին երկու պատարագ անել Սուրբ Սանդըխտի տոնին:

ԳՈՀԱՐՄԼԻՔ

Ապրել է 13-րդ դարի կեսերին, Համապասպյան իշխանական տան իշխանուհիներից է:

1258 թվականին Գոհարմլիքը նվերներ է տվել Սանահնի վանքին: Ամենափրկիչ գավթի հյուսիսային պատին դրսից փորագրված է. «Ի թուիս ՉԷ (1258): Ես՝ Գոհարմլիքս, թոռն Համապասպանց, միաբանեցա Աստուածածինս, էտու արդիւնս»[120]: Վանքը պարտավորվել է, ի հիշատակ Գոհարմլիքի, ամեն տարի 5 պատարագ կատարել:

Գոհարմլիքը մահացել ու թաղվել է Սանահնի մեծ գավթի մեջ: Տապանաքարին գրված է. «Ճգնաւոր Գոհարմլիք»:

ՏԻԿԻՆ

Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում:

Իշևանի շրջանի Պայտաթափի սարահարթում գտնվող Մակարավանքի գավթի արևմտյան պատին, հյուսիսային պատուհանից աջ, վոյգ խաչերի կողքին, Տիկնոջ անունից փորագրված է. «Ես՝ Տիկինս, միաբանեցա սուրբ ուխտս եւ ետու վիմ հոգոյ արդիւնս յեկեղեցիս»[121]: Տիկինը Մակարավանքին նվերներ է տվել վանքի առաջնորդ Հովհաննես Բ վանահոր օրոք: Նա Մակարավանքում առաջնորդ է հիշվում 1250—1278 թվականներին: Տիկինը այդ քառորդ դարի ընթացքում է նվերներ տվել Մակարավանքին:

Ի պատիվ Տիկնոջ, Վարագա խաչի տոնի օրը պատարագ է սահմանվել նրա հիշատակին:

ՌՈՒԶՈՒԴԱՆ

Ապրել է 13-րդ դարում:

Գանձասարի եկեղեցու գավթի ներսում, խաչվող կամարների հենակ հանդիսացող արևելյան որմնասյուներից աջակողմյանի խոյակից վերև, առաջին քարի վրա, փորագրված է մեծ ու գեղաքանդակ խաչ, որից վերև երկու տողով արձանագրված է. «Ռվզուդանին է խաչ»[122]:

Պատմաբան Բ. Ուլուբաբյանը «Գանձասար» գրքում գրում է, որ խաչը «Անկասկած Հասան Ջալալի դուստր և Բորա-Նոյինի կին Ռուզուդանին է վերաբերում: Վանքի հովանավորները միայն նրան կարող էին հատկացնել նման փառավոր տեղ»:

Երդիկի տակ փորագրված գեղաքանդակ խաչն ու արձանագրությունը իշխում են գավթի վրա, միաժամանակ հանդիսանում են գավթի ամենավերին զարդերից մեկը:

Խաչենի իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչ Հասան-Ջալալը 1236 թվականին Ռուզուդանին ամուսնացրել է մոնղոլ զորապետ Չարմաղանի որդի Բորա-Նոյինի հետ, որի շնորհիվ մոնղոլ զորապետները բարյացակամ են վերաբերվել Հասան-Ջալալի և նրա երկրի՝ Խաչենի նկատմամբ[123]:

Ռուզուդանի գործունեության մասին տեղեկություններ չեն հասել մեզ: Միայն հայտնի է, որ երբ 1260 թվականին վրաց Դավիթ թագավորը ապստամբեց մոնղոլ զորապետ Արղունի դեմ, վերջինս ապստամբությունը ճնշելուց հետո կալանավորեց նաև Հասան-Ջալալին և տարավ Ղազվին՝ տաժանակրության, Ռուզուդանը շտապել է Հուլավուի կին Տողուս-Խաթունի մոտ, որպեսզի նրա միջնորդությամբ հորը ազատի Արղունի ձեռից: Բայց այդ մասին իմացել է նաև Արղունը և անմիջապես դահիճ է ուղարկել ու սպանել տվել Հասան-Ջալալին:

---

119 Կ. Ղաֆադարյան, Սանահին, էջ 132:

120 Կ. Ղաֆադարյան, Սանահին, էջ 109:

121 Դիվան, հ. 6, էջ 182:

122 Բ. Ուլուբաբյան, Գանձասար, Ե., 1981, էջ 117:

123 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում, էջ 173, 188, 207, 219:

ԱՎԱԳ ՏԻԿԻՆ

Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում, Երևանի մոտ գտնվող Քանաքեռ գյուղում, ամուսինն է Պետևանը:

1265 թվականին ամուսինները այժմյան Երևան-Սևան խճուղու կողքին մի հոյակապ որմնափակ մահարձան-խաչքար են կանգնեցրել: Խաչքարի շրջանակի եզրին և կողքին փորագրված է. «Ես՝ Պետեւան եւ կենակից իմ Աւագ տիկին կանկնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ յիշատակ հոգոցս մերոց եւ զաւակաց մերոց, եւ հայրենիք այգիս զաւակաց մերոց Տաղասլանին եւ այլ տղոցն»[124]:

Արձանագրության շարունակության մեջ Ավագ տիկինն ու Պետևանը հայտնում են, որ մահարձանի շրջապատը դարձրել են իրենց ապգի հանգստարան-գերեզմանատունը: Շրջապատի մնացորդներից երևում է, որ իրոք այդտեղ թաղումներ են կատարվել, բայց գերեզմանատունը ամբողջովին ավերվել է Երևան-Սևան խճուղին անցկացնելու ժամանակ:

Զարդանախշ խաչքարի արձանագրությունը փորագրել է քարգործ Մխիթարիչը: Արձանագրության վերջում նա հայտնում է. «Գրողս զՄխիթարիչս յիշէք»:

ՏԻԿԻՆ

Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում, ամուսինն է Հովհաննեսը:

1278 թվականին ամուսինները Մակարավանքին նվերներ են տվել: Նրանց նվիրատվական արձանագրությունը փորագրված է գավթի ներսում, արևմտյան մուտքի ճակատակալ քարի վրա: Ամուսինները հայտնում են. «Թվին ՉԻԷ (1278): Ես՝ Յոհանէս եւ ամուսին իմ Տիկին միաբանեցաք Ա(ստուա)ծածնիս եւ տուաք զմեր հոգոց արդիւնս յեկեղեցիս»[125]:

ՇԱՔԱՐԽԱԹՈՒՆ

Ապրել է 13-րդ դարի վերջին և 14-րդ դարի սկզբին, ամուսինն է Լույսը:

1297 թվականին Շաքարխաթունն ու Լույսը իրենց հիշատակին որմնափակ խաչքար են կանգնեցրել Երևանի մոտ գտնվող Ավանի Սուրբ Հովհաննես եկեղեցու կողքին: Խաչքարի շրջանակին փորագրված է. «Ի թվին ՉԽՉ (1297): Ես՝ Լոյս եւ ամուսին իմ Շաքարխաթուն կանկնեցաք զխաչս ի փրկութիւն հոգոց մեր եւ ծնողաց եւ եղբարց մեր եւ ք(վ)երց մեր և այլ մերձակայից մեր»[126]:

1313 թվականին ամուսինները այգի և տներ են նվիրել Ավանի Սուրբ Հովհաննես եկեղեցուն: Եկեղեցու պատին, դրսից փորագրված է. «Ես՝ Լոյս եւ ամուսին իմ Շաքարխաթուն միաբանեցաք Սուրբ Յովանիսիս եւ տվաք Ո (600) սպիտակի գինն Սեւընձին այգոյն եւ զմեր գնած տներն»[127]:

Արձանագրության շարունակությունից երևում է, որ Սևընձի այգին գնվել ու եկեղեցուն է տրվել 1350 արծաթով, որի մի մասը՝ 600-ը, տվել են Շաքարխաթունը և Լույսը, իսկ մնացածը՝ 750-ը՝ վանեցիները, որոնց անունները չի հիշատակված: Վիմագրագետ Կարապետ Ղաֆադարյանը նկատել է, որ հենց գնման այդ եղանակը արձանագրությունը դարձնում է խիստ բացառիկ, քանի որ հանրության գումարներով ձեռք բերված այգի կամ այլ կալվածք վանքի կամ եկեղեցու նվիրելու այլ փաստ չի արձանագրվել:

ԴԱՎԼԱԹ

Ապրել է 14-րդ դարի սկզբներին Երևան գյուղաքաղաքում, ամուսինն է Գորգը:

1318 թվականին ամուսինները հող են պարգևել Երևանի կենտրոնական մասում, բուն քաղաքում (այժմ Աբովյան փողոցի վրա) կառուցված միջնադարյան չքնաղ եկեղեցուն, որ Սուրբ Աստվածածին անունն է կրում: Այս եկեղեցին 1690-ական թվականներին վերածվել էր մի մեծ գավիթ-դահլիճի սեղանի, կորցրել էր ինքնությունն ու տեսքը: Այն միայն 1936—1937 թվականներին է վերաբացվել ու ստացել իր նախնական տեսքը:

Եկեղեցու հյուսիսային պատին դրսից փորագրված է. «Ես՝ Գորգ... եւ ամուսին իմ Դաւլաթ, միաբանեցաք Էրեւանո ժամատեղացս եւ տվաք ի Նորագաւիթ զմեր հողն, որ ի Դիւականն է, Ծ (50) կապիճ տեղ: Ի ՉԿԷ (1318)»[128]:

Ամուսինները եկեղեցուն են նվիրել Նորագավթի հանդամասերից մեկի՝ Դիվանի մի մասը՝ 50 կապիճ տեղ: Ընդունված է ասել, որ կապիճը հավասար է պարսկական քեֆիզեին, որը մոտ մեկ կիլոգրամ է: Գորգը և Դավլաթը Սուրբ Աստվածածնին են նվիրել այնքան հող, որտեղ կարելի է ցանել մոտ 50 կիլոգրամ սերմացու:

---

124 Կ. Ղաֆադարյան, Երևան: Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Ե., 1975, էջ 207:

125 Դիվան, հ 6, էջ 191:

126 Կ. Ղաֆադարյան, Երևան, էջ 205:

127 Նույնը, էջ 203:

128 Կ. Ղաֆադարյան, Երևան, էջ 140:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում:

Եղիսաբեթի հիշատակին 1472 թվականին խաչքար է պատրաստվել: Խաչքարի վերնամասում փորագրված է. «Սուրբ խաչս բարեխաւս է Եղիսայբէթին: Թվին ՉԻԱ (1472)»[129]:

Խաչքարը գտնվում է Երևանի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում:

ԿՈՒԼՄԵԼԻՔ

Խոջա Մսրշի կին Կուլմելիքն ապրել է 16-րդ դարի սկզբներին:

1516 թվականին Կուլմելիքը հռչակավոր Գանձասարի տաճարի արևմտյան պատի հյուսիսային անկյան մոտ, ներքևից, գեղեցիկ խաչեր է քանդակել տվել: Խաչերի տակ փորագրված է.

Թվին ՉԿԵ (1516):
Ես՝ Կուլմէլ—
իք, ամուսին խոճայ
Մսրշին, կանկնեցի
վիսաչերս ինձ եւ
վաւակաց մերոց[130]:

ՎԱՐՎԱՌ

Վարվառը ապրել է 17-րդ դարի կեսերին:

1655 թվականին հայ գրչության այս համեստ մշակը ընդօրինակել է մի ժամագիրք:

ԵՂԻՍԱՄԱՄ

Ապրել է 17-րդ դարի կեսերին:

Եղիսամամը օգնել է ծաղկող Սահակ Վանեցուն և գրիչ Կարապետ երեցին ընդօրինակելու և ծաղկապարդելու մի հոյակապ Ավետարան:

Ձեռագիրը կազմված է 331 թերթից, գրված է երկսյուն բոլորգրով: Ձեռագրի 2բ—13ա էջերին նկարված են տերունական մանրանկարներ և խորաններ: Մանրանկարներն արված են կարմիր, կապույտ, կանաչ ներկերով և շատ լավ պահպանվել են:

Ձեռագրի 162բ էջում, Ղուկաս ավետարանիչի մանրանկարի տակ, Սահակ Վանեցի ծաղկողը մանր տառերով գրել է. «Աստուած, լուսաւորէ զԵղիսամամու հոգին, որ ըղըշտայ ապուրով կերակրեց զմեղաւոր քարտողարս ի Բաբելոն»[131]:

Ավետարանն այժմ պահվում է Ապարանի շրջանի Սարալանջ գյուղի բնակիչ Վոլոդյա Սարգսյանի տանը:

Ձեռագրի ծաղկողը հավանաբար մեր մանրանկարչության հայտնի դեմքերից մեկն է՝ Սահակ Վանեցին, որն ստեղծագործել է 1662—1675 թվականներին Վանում, Բաղեշում, Մուշում: Նրա ստեղծագործություններից ութը գտնվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

ՄԱՐԳՐԻՏ

Պարոն Սարգսի կին Մարգրիտն ապրել է 17-րդ դարի վերջերին Մշո Ապարան գյուղաքաղաքում:

Մարգրիտը և Սարգիսը մարմնավոր զավակ չեն ունեցել և որպեսզի իրենց անունն էլ հիշվի ու իրենք էլ հետնորդ ունենան, 1691 թվականին Սուրբ Խաչ վանքի քահանա, գրիչ Նահապետին պատվիրում են իրենց հիշատակին Ավետարան ընդօրինակել:

Նահապետ գրիչը, որ նույն տարում ևս մեկ Ավետարան էր արտագրել իր համաքաղաքացի Մխիթարի պատվերով, սիրով հանձն է առնում ամուսինների խնդրանքը և կարճ ժամանակում ավարտում է Ավետարանի արտագրությունը:

Ձեռագիրը մի ստվար հատոր է, գրված 313 թերթի վրա, երկսյուն գեղեցիկ բոլորգրով, նկարազարդված է ավետարանիչների մանրանկարներով ու կիսախորաններով, ունի հետաքրքիր լուսանցազարդեր, զարդագրեր, կազմի Ա փեղկի վրա ամրացված է արծաթյա կրկնակազմ՝ ականակուռ խաչով:

Գրքի վերջին էջերին գրիչ Նահապետը վերհիշել է իր հիշատակարանը: 309բ էջում նա գրել է, որ Մարգրիտը և Սարգիսը «յիշեցին զիւրեանց հոգիսն, զի նոքա որդիք չունէին, այլ աստուածային սէրն վառվաւ ի սիրտս նոցա և նոքա սէրտ սիրով գնեցին սուրբ Աւետարանս ի յապարանցի տէր Նահապատից ի ԺԵ (15) դուռոշ և արարին իւրեանց հոգոյն որդի և յիշատակ»[132]: Ամուսինները իրենց հոգևորդի Ավետարանը հանձնում են տեր Հակոբ քահանային ի պահ:

Մի քանի տասնամյակ անց, 18-րդ դարի սկզբներին, Ավետարանը 100 դուռուշով ձեռք է բերում ոմն Ամիր և որպես հիշատակ հանձնում է Հովհաննեսին: Նա հետագա սերունդներից խնդրում է հիշել իրեն, ծնողներին՝ Վարդանին և Հռիփսիմեին, եղբայրներին, որդիներին, թոռներին:

Նույն դարի վերջերին Ավետարանում ավելացել է ևս մեկ հիշատակագրություն: 1789

[129] Նույնը, էջ 151:

[130] *Բ. Ուլուբաբյան*, Գանձասար, էջ 96:

[131] *Վ. Պետրոսյանց*, Ապարանի շրջանի ձեռագրերը, հնատիպ գրքերը և այլ հնագրագիտական նյութերը. Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 1, էջ 157:

[132] Նույնը, էջ 155—157:

թվականի դեկտեմբերի 25-ին Մուրատը գրել է տվել. «Յիշատակ է Սուրբ Աւետարանս Շաճին որդի Տօնօին եղբայր Մուրատին, մօր սորայ Նարկիկին, Զարմանին, Թանաշին»: Այս Մուրատը իր արդար վաստակով վերագնել է Ավետարանը և վերադարձրել է «ի ձեռն Յովաննես վարդապետին»:

Ձեռագրի վերջին հիշատակագրությունը թողել է Հովհաննես քահանան 1830 թվականին:

Մարգրիտ և Սարգիս ամուսինների ժամանակակիցների անունները անհետ ու անհիշատակ մոռացվել են, մինչդեռ նրանց հոգեվավակ Ավետարանը Մարգրիտի ու Սարգսի անուններին հավերժության իրավունք է տվել: Նրանց պատվերով ընդօրինակված Ավետարանը այժմ պահվում է Արագած գյուղի բնակիչ Վլադիկ Հունանյանի տանը:





ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 547
ՎԿԱՅԱԳԻՐ
(Անգլիերէն)

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 35,4×27,8 սմ.:— **Նյութը՝** ընտիր հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** գերազանց,— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 18:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** լատինատառ:— **Զարդագրություն՝** ա. վկայագրի վերևի կենտրոնական մասում կա Մասաչուսեց նահանգի խորհրդանշանը 5×3,6 սմ. չափսերով: Ներկայացնում է մի կարմիր հնդիկ, որի երկու ձեռքերում կա նետ և աղեղ: Վերևի ձախակողմյան մասում կա հնգաթև սպիտակ մի աստղ: Խորհրդանշանի վերևվում կա թուր բռնած մի ձեռք, իսկ կողերին ու ներքևում՝ մի ժապավեն, որի վրա լատիներեն գրված է հետևյալը. Ense Pettt Placidam Svb Libertate Ovietem: Խորհրդանշանում օգտագործված են երկու գույն՝ մուգ կապույտը և ոսկեգույնը: բ. վկայագրի ներքևի ձախակողմյան անկյունում կա նույն նահանգի պաշտոնական ոսկեգույն կնիքը 6,2 սմ. տրամագծով: Կենտրոնում կա նահանգի նույն խորհրդանշանը, իսկ շուրջ բոլորը գրված է հետևյալը. Sigillum Reipublicae Massachusettensis:—**Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** ԱՄՆ-ի Մասաչուսեց նահանգի կառավարիչ Ջոն Ա. Վոլպ:— **Ժամանակը՝** 25 մայիսի 1968 թ.:— **Վայրը՝** Բոստոն (Մասաչուսեց, ԱՄՆ):—**Ծանոթագրություն՝** Վեհափառ Հայրապետն այն ստացել է 1968 թ. մայիսի 25-ին անձամբ Մասաչուսեցի կառավարիչից, Բոստոն կատարած Իր վերջին այցելության առթիվ և հետը բերել Մայր Աթոռ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անգլերեն սույն վկայագրի մեկ մասը տպագիր է, իսկ մյուսը՝ ձեռագիր: Իր պատմական արժեքի համար այն մտցված է ձեռագրաց ցուցակում:

Բովանդակությունը հետևյալն է.

THE
COMMONWEALTH OF MASSACHUSETTS
By His Excellency
JOHN A. VOLPE
Governor
to
His Holiness Yosken I.
on the occasion of
His Visit to Boston

which is deserving of recognition by all the citizens of Massachusetts.

Witness my hand and the Seal of the Commonwealth of Massachusetts, this twenty fifth day of May in the year of Our Lord 1968. Witness the Great Seal of the Commonwealth

(ստորագրություն) John A. Wolpe
governor

John F. X. Dworen (ստորագրություն)
secretary of the Commonwealth

№ 548
ԿՈՆԴԱԿ
(Արաբերէն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 31,7×22,8 սմ.:— **Նյութը՝** ընտիր միջակ հաստությամբ թուղթ:—

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից և 1982 թվականի № Ա-ից:

Կազմ՝ չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** գերազանց:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 12:— **Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** Կոնդակի վերևի կենտրոնական մասում կա Անտիոքի Հույն—Ուղղափառ եկեղեցու պատրիարքության խորհրդանշանը 3,7×2 սմ. չափերով: Այն ներկայացնում է Ս. Պողոս և Ս. Պետրոս առաքյալները, որոնք երկու ձեռքով վերևում պահած են մի փոքրիկ տաճար, որի գլխին երկնքից իջնում է Ս. Հոգին, աղավնու կերպարանքով և ճառագայթներով: Ներքևում կան խաչաձևած երկու բանալիներ, որոնցից կախված է մի ժապավեն, որոնց գլխին էլ կա փոքրիկ մի խաչ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս եկեղեցու պատրիարք Իգնատիոս Դ:—**Ժամանակը՝** 26 հոկտեմբերի 1981 թ.:—**Վայրը՝** գրված է Ս. Էջմիածնում, բայց կոնդակի ներքևում նշված է Դամասկոս:— **Ծանոթագրություն՝** Վեհափառ Հայրապետն այն ստացել է Մայր Աթոռում 26 հոկտեմբերի 1981 թ. անձամբ Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս եկեղեցու պատրիարք Տ. Իգնատիոս Դ-ից, այս վերջինս հյուրաբար Ս. Էջմիածին կատարած այցելության առթիվ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբերեն սույն կոնդակի մեկ մասը տպագիր է, իսկ մյուսը՝ ձեռագիր: Իր պատմական արժեքի համար այն մտցված է ձեռագրաց ցուցակում:

Կոնդակի բովանդակությունն այն է, որ Անտիոքի Հույն Ուղղափառ եկեղեցու Պատրիարք Տ. Իգնատիոս Դ-ն սույն Պատրիարքության «Ս. Պողոս—Ս. Պետրոս» բարձրագույն շքանշանով է պարգևատրում «Հայ Օրթոդոքս եկեղեցու Խալիֆա (այսինքն՝ Կաթողիկոս—Ն. Մ.) և Ծայրագույն Պատրիարք Տ. Վազգեն Առաջինին»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Միշտ արաբերենով գրված)

Դամասկոս, 26 Թըշրին Առուլ (այսինքն՝ հոկտեմբեր ամսի) 1981 թ.:

(ստորագրություն) + Պատրիարք Աղնատիոս Չորրորդ

(Ստորագրության վրա դրված է Պատրիարքի կընիքը, որ նման է վերևում՝ զարդագրության մասում նկարագրվածին):

Համար 47:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— 30 X 1981

Վազգէն Ա.

Թ. 1բ.— Ս. Պողոս-Պետրոսի անվան Անտիոքի Աթոռի Հույն Ուղղափառ պատրիարքության բարձրագույն շքանշանի կոնդակը, տրված Ամենայն հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին, Անտիոքի պատրիարք Իգնատիոս Դ-ի կողմից:

26 հոկտեմբերի 1981 թ.

Ս. Էջմիածին

№ 549

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 472,3×8,7 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Պահպանակը՝** համայիլը զետեղված է կաշվե մի պատյանի մեջ, որի չափերն են՝ 10×13,5 սմ.: Այն ունի կաշվե 40,5 սմ. երկարությամբ և մեկ սմ. լայնությամբ մի կախիչ, շատ հավանաբար վզից կախելու համար:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 359:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագրում նկարված են երկու տեսակի սրբապատկերներ՝ կլոր շրջանակում և քառանկյուն ձևով: Բոլորն էլ նախնական (պրիմիտիվ) ոճ ունեն և անարժեք են: Համայիլի սկզբում կան 13 շրջանակներ (յուրաքանչյուրը 7 սմ. տրամագծով), որոնց մեջ կան 13 անձինք, լուսապակով սրբեր, շատ հավանաբար Քրիստոսն ու իր 12 առաքյալները: Ապա կան հետևյալ սրբերի նկարները շրջանակում.

Ա. Մանուկ Հիսուսը Ս. Կույսի գրկում.

Բ. Ս. Ստեփանոս.

Գ. Ս. Գրիգոր Լուսավորիչ.

Դ. Ս. Հովհաննես Կարապետ:

Ձեռագրում կան չորս այլ պատկերներ քառանկյունի մեջ նկարված, որոնք հետևյալներն են.

Ա. Քրիստոսի խաչելությունը. խաչի երկու թևերի տակ գտնվում են Տիրամայրն ու Մարիամ Մագդալենացին (14,1×7,3 սմ.).

Բ. Իսահակի զոհաբերության տեսարանը Աբրահամի կողմից (11,7×7 սմ.).

Գ. Գաբրիել հրեշտակապետը (13×7,3 սմ).

Դ. Ս. Գեորգ զորավարը (14×7,3 սմ.):

Գրիչը՝ անհայտ:— **Պատվիրատուն՝** Վարդան:— **Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** ստացված է նվեր մի բարեպաշտ անձից: Վեհափառ Հայրապետն այն Ձեռագրատուն հանձնեց 2 մարտի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայիլը պարունակում է բազմաթիվ աղոթքներ և մաղթանքներ: 20-րդ դարում ձեռագրի սկզբում փակցված է մի հասարակ թուղթ, որի վրա 12 տող կա գրված բոլորովին նոր ձեռագրով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

... և պահապան ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին, ամէն:

... և մարմնական ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին, ամէն:

... օգնական եղիցի ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին, ամէն:

... ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին (2 անգամ):

... փրկել զծառայս Ա(ստուծո)յ Վարդանին: Օգնական եղիցի և պահապան յամ չարէ... (նույնը կրկնվում է 11 անգամ):

... ողորմեայ Ք(րիստո)ս Ա(ստուա)ծ ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին: Օգնական եղիցի և պահապան, ամէն:

... և ետուր զաւակ զծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին: Օգնական եղիցի, ամէն:

... ի դիմաց ծառայիս Ա(ստուծո)յ զՎարդանն, ամէն: Օգնական եղիցի ամէն:

... եղիցի բժշկութի(ւն) ծառայիս Ա(ստուծո)յ Վարդանին: Օգնական եղիցի և պահապան ի տուէ և ի գիշերի, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտիրոսին:

(Սույն անունը ձեռագրի տարբեր տեղերում կրկնվում է վեց անգամ):

(Շարունակելի)

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАРТ 1982 г.)

1. Энциклика Его Святейшества профессору Парунаку Товмасяну (Бейрут) по поводу 50-летия его национально-общественной и культурной деятельности (стр. 3—4).

2. **Архиепископ Егише Тертерян** — Тайная Вечеря (Лука 22, 14—20) (стр. 5—6).

3. **Архиепископ Шнорк Галустян**—Общий очерк о Страстной седмице (стр. 7—10).

4. Соболезновательное письмо Его Святейшества по случаю кончины директора Ереванского Матенадарана имени св. Месропа Маштоца профессора, академика Левона Степановича Хачикяна, направленное семье покойного (стр. 11).

5. Кончина директора Ереванского Матенадарана им. св. Месропа Маштоца профессора, академика Левона Степановича Хачикяна (1918—1982) и слово Его Святейшества (стр. 12—14).

6. Церковный амвон: вести о служении св. Литургии, произнесенных проповедей и других торжеств в марте в Первопрестольном Соборе (стр. 15—16).

7. Торжества, посвященные памяти католикоса Мкртича Хримяна (1892—1907) в Духовной Академии 12 марта (стр. 17—18).

8. Святой Эчмиадзин в песнях армянских ашугов; образцы песен (стр. 19—22).

9. **Священник Езник Петросян** — Родословная Иисуса, согласно Евангелиям. Законоучительное исследование. Продолжение статьи, опубликованной во 2 номере 1982 года в журнале «Эчмиадзин» (стр. 23—32).

10. **Старший священник Гурген Мурадян**—Монастырь св. Хорвиран. исторический очерк и реконструкции при Католикосе Васкене Первом (стр. 33—34).

11. **Дьякон Варджес Мкртчян**—Притча о блудном сыне (Лука 15, 19), проповедь (стр. 35—37).

12. **Дьякон Гаруш Лазарян**—Псалтирь (Пс. 41, 2—3), проповедь (стр. 38—39).

13. **Старший священник Егише Саркисян**—Средневековые высшие монашеские школы Армении и культурная жизнь монастыря св. Гегард (стр. 40—46).

14. **Архимандрит Акоп Глнджян**—Церемония вторичного погребения останков архиепископа Григориоса в январе 1982 года в монастыре Нидернбург немецкого города Пассау (стр. 47—48).

15. Заседание специальной Комиссии по Ближнему Востоку Христианской Мирной Конференции 8—12 марта в Первопрестоле, приветственное и заключительное слово Его Святейшества (стр. 49—51).

16. Сообщение о предстоящих лекциях Патриаршего делегата в Центральной Европе Верховного архимандрита Месропа Григоряна в институте Византоведения Венского Университета в 1981—1982 уч. году (стр. 52).

17. **Виктор Мнацаканович Петросянц**—Армянские женщины—защитницы отечественной культуры в XIII—XVII вв. Исследование (стр. 53—57).

18. **Нубар Микаелян**—Список поступивших рукописей в Первопрестол св. Эчмиадзина (№ 547—549) (стр. 58—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(MARCH 1982)

1. The encyclical of His Holiness to Prof. Barunag Thovmasian (Beirut), on the occasion of the 50-th anniversary of his national-public and cultural activity (pages 3—4).

2. **Archbishop Eghishe Derderian**—The last supper (Luke XXII 14—20) (pages 5—6).

3. **Archbishop Shnork Galustian**—General view on the Holy Week (pages 7—10).

4. The letter of condolence of His Holiness on the occasion of the death of Levon Khachikian, the director of St. Mesrop Mashtotz Matenadaran (Manuscript Repository), professor, academician, directed to the deceased (page 11).

5. The death of Levon Khachikian (1918—1982), the director of St. Mesrop Mashtotz Matenadaran (Manuscript Repository), professor, academician, and the speech of His Holiness (pages 12—14).

6. Church pulpit, news. Divine liturgies and sermons spoken in the Mother Cathedral and other church festivities during the month of March (pages 15—16).

7. Festivity in the Spiritual Seminary on March 12-th, devoted to the memory of Catholicos Mkertich Khrimian (1892—1907) (pages 17—18).

8. The Holy Etchmiadzin in the songs of the armenian troubadours: samples of the songs (pages 19—22).

9. **Father Yeznik Petrossian**—The genealogical lists of Jesus, according the Gospels. A religious study. The continuation of the article printed in the second number of 1982 of „Etchmiadzin" journal (pages 23—32).

10. **Archpriest Gurgen Muradian**—The monastery of Holy Khorvirap. A historical view and restorations during the days of Catholicos Vasken First (pages 33—34).

11. **Deacon Vardges Mkertchian**—The proverb of the prodigal son (Luke XV 19), sermon (pages 35—37).

12. **Deacon Garush Lazarian**—The Book of Psalms (Psalms XLI 2—3), sermon (pages 38—39).

13. **Archpriest Eghishe Sarkessian**—The great seminaries of mediaeval Armenia and the cultural life in the monastery of Holy Geghard (pages 40—46).

14. **Reverend Hakob Kelenjian**—Again the funeral ceremony of the ashes of archbishop Gregorius, on January 1982, in the Nidernburg monastery of Passau city in Germany (pages 47—48)

15. The session of the Special commission of Middle East of the Christian Peace Conference in the Mother See, during the days of 8—12 of the month of March, and the speeches of greetings and farewell of His Holiness (pages 49—51).

16. Communiqué about the lectures which will be given during the academic year 1981—1982 in the Byzantine scientifical institute of the University of Wien by the Most Reverend Mesrop Grigorian, the Patriarchal delegate of Central Europe (page 52).

17. **Victor Mnatzakan Petrossiantz**—Armenian ladies who have been defenders of the Armenian culture (XIII—XVII centuries). Study (pages 53—57).

18. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 547—549 (pages 58—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MARS 1982)

1. Encyclique de Sa Sainteté Vasken Ier adressée au Prof. Barounak Tovmassian à l'occasion du 50e anniversaire de ses activités nationales, culturelles et publiques (pages 3—4).

2. **Archevêque Yéghiché Tertérian**—„La Cène" (Luc, XXII, 14—20)— (pages 5—6).

3. **Archevêque Chenork Galoustian**—„Un aperçu général sur Samedi saint" (pages 5—6).

4. Lettre de condoléances de Sa Sainteté à l'occasion du décès de l'académicien Lévon Khatchikian, directeur de la Maison des anciens manuscrits d'Erévan (Maténadaran), adressée aux membres de la famille du défunt (page 11).

5. Décès du regretté Prof. Lévon Khatchikian (1918—1982) et la parole de Sa Sainteté Vasken Ier (pages 12—14).

6. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuse qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de ma 1982 (pages 15—16).

7. Description de la soirée organisée le 12 mars 1982 dans la grande salle du séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine et consacrée à la mémoire du feu Catholicos Mekertitch Khrimian (1892—1907)— (pages 17—18).

8. Saint-Etchmiadzine évoqué dans les chans des trouvères arméniens. Quelques échantillons de ces chant (pages 19—22).

9. **Père Yeznik Pétrossian**—„L'arbre généalogique de Jésus d'après les Evangiles (Suite de de l'article publié dans la revue „Etchmiadzine", février 1982, No. 2) — (pages 23—32).

10. **Père Gourguène Mouradian**—„Le monastère de Khor-Virap" (aperçu historique). Restaurations effectuées au cours des dernières décennies (pages 33—34).

11. **Diacre Vartguès Mekertchian**—„La parabole de l'enfant prodigue" (Luc, XV, 19) — (pages 35—37).

12. **Diacre Garouche Lazarian**—„Le livre des psaumes„ (Ps. 41, 2—3). Sermon (pages 38—39).

13. **Archiprêtre Yéghiché Sarksian**—„Les grands séminaires de c' Arminie médiévale et la vie culturelle au monastère de Saint-guéghard" (pages 40—46).

14. **Père Hakob Guelendjian**—„La cérémonie de l'enterrement des restes de l'archevêqu. Grigorios au monastère de Nidernbourg de la vile le de Bassau en janvier 1982 (pages 47—48).

15. La session annuelle de la Commission spéciale du CCP pour le Proche-Orient tenue du 8 au 12 mars 1982 au Saint-Siège d'Etchmiadzine Allocutions de Sa Sainteté prononcées à l'occasion de l'ouverture et de la clôture de ladite session (pages 49—51).

16. Information sur les conférences que le Père Mesrop Grigorian, délégué apostolique pour l'Europe Centrale, donnera au cours de l'année scolaire 1981—1982 à l'Institut de byzantinologie de l'université de Vienne (page 52).

17. **Victor Pétrossiants**—„Les femmes arméniennes connues en Arménie aux XIIIe-XVIIe siècles sous le nom de „défenseurs du patrimoine culturel des Arméniens" (étude)—(pages 53—57).

18. **Noubar Mikaélian**—Index des manuscrits que le Saint-Siège d'Etchmiadzine a récemment reçus et placés sous les numéros 547—549 (pages 58—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը պրոֆ. Բարունակ Թովմասյանին՝ նրա ազգային-հասարակական և մշակութային գործունեության հիսնամյակի առիթով . . . 3
ԵՂԻՎԱՐԴ (ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ)—Վերջին ընթրիքը . . . 5
ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ—Ընդհանուր ակնարկ Աւագ Շաբթուան վրայ 7
Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի դիրեկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի մահվան տխուր առիթով 11
Մահ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի դիրեկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի 12
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 15
Խրիմյան Հայրիկին նվիրված գրական-երաժշտական երեկո հոգևոր ճեմարանում . . 17
Ս. Էջմիածինը հայ աշուղների երգերում 19
ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Հիսուսի ծննդաբանության ցանկերը . . . 23
ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Ս. Խորվիրապի վանքը 33
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ—Անառակ որդու վերադարձը 35
ԳԱՐՈՒՇ ՍԱՐԿԱՎԱԳ ԼԱԶԱՐՅԱՆ—Գիյք Սաղմոսաց 38
ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ—Միջնադարյան Հայաստանի վարդապետարանները և Ս. Գեղարդա վանքի մշակութային կյանքը 40
ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵԼԵՐՆՃՅԱՆ—Գրիգորիոս արքեպիսկոպոսի աճյունների վերստին թաղման արարողությունը 47
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Մերձավոր Արևելքի հատուկ հանձնաժողովի նստաշրջանը Մայր Աթոռում 49
Վիեննայի համալսարանի բյուզանդագիտական ինստիտուտում դասախոսություններ հայ ժողովրդի պատմության մասին 52
ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք 53
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 58
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 1.04.1982 թ.: Ստորագրված է տպագրության 19.05.1982 թ.:
Տպագրական 4 մամուլ+4 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 297:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.